Համենայն դեպս Պատմական Կիլիկիայի մնացորդացը, Հարայի կիսանկախ մարզում, թուրք իշխանութիւնների անմիջական ճնշումներից գերծ մնաց մինչեւ 1939 թ. ամառը, երբ թուրք-ֆրանսիական համաձայնութեան լոյսի տակ հետևողական քայլեր առնեցին պատմական Կիլիկիան վերջնականապէս հայաթափելու ուղղութեամբ, այս անգամ դարձեալ ոչ թէ վայրագ սպանդների, այլ գերազանցապէս բռնագաղթի ճանապարհով:

«Զուտ հայարնակ գիւղը՝ Վագրֆ» յօդածի հեղինակ Թադէոս Պապիկեանը այսպէս է բնութագրում Կիլիկիայի հայաթափումը. «...Այս օրերում Խսքենդերում Հարայի շրջանի հայ եկեղեցիները եւ հայութիւնը նիւթ են դարձել մամուլի եւ հեռուստատեսութեան, ի մասնաւորի Վագրֆ

գիւղը, որ այսօր աշխարհի վրայ, բացի ներկա Հայաստանից, միակ գիւղն է զուտ հայարնակ: Վագրֆ՝ զուտ հայարնակ գիւղը Սուլտանի (Ասմանտաղ) Մուսա Լեռան ստորոտն շարւած վեց զուտ հայարնակ գիւղերից ամենափոքրն էր...: Զուտ հայարնակ այս վեց գիւղերը յարունակել են իրենց կրօնը, ազգութիւնը եւ աւանդոյթները՝ առանց ժամանակայ իշխանութիւններին եւ անձերին գլխացաւ պատճառելու: Նրանք միշտ բարձր են պահել իրենց արժանապատւութիւնը, լաւ ու բարեկամական յարաբերութիւններ մշակելով շրջանի մէջ գտնուող բոլոր ժողովուրդների հետ: Յետեւեալ տեղեկութիւնները գաղափար են տալիս այս վեց հայարնակ գիւղերի մասին՝ քաղաք 1919 թ. արձանագրութիւններից:

1. Պիրիաս (Պաթըայազ) - 195 ընտանիք՝ 1050 անձ,
2. Խաճի Շապշի (Երիք Քէոյ) - 257 ընտանիք՝ 1284 անձ,
3. Եղունօլուգ - 255 ընտանիք՝ 1233 անձ,
4. Խոր Պեկ - 145 ընտանիք՝ 1149 անձ,
5. Վագրֆ - 82 ընտանիք՝ 470 անձ եւ
6. Քեպասի - 251 ընտանիք՝ 1125 անձ:

1924 թականին այս վեց հայարնակ գիւղերը բաժանեցին Սուլտանի գաւառակից: Մի գաւառակ կազմեց ֆրանսիական իշխանութիւնների ծրագրի համեմատ, որ աւելի անկախ էր համեմատարար եւ սակայն երբեմն գործածեց ֆրանսիական շահերի եւ հաշիւների համար:

Հասաւ 5 յուլիսի 1938 թ.: Թուրքական բանակը ֆրանսիական իշխանութիւնների համաձայնութեամբ, զօրավար Շիւրդի Գանարլի հրամանատարութեամբ հասաւ Անքարիա, կազմեցին Հարայի Հանրապետութիւնն ու խորհրդարանը... 23 յուլիսի 1939 թ. 32,500 հայերու զարդից յետոյ, մնացողների մեծամասութիւնը Վագրֆ գիւղից էր...»⁶⁶:

Արեւմտեան Հայաստանում հայ-եզրիական դիմադրութիւնը նվազելու նպատակով, 40 հազարանոց թուրքական բանակը 1934 թ. զրիում է Սղերդի վրա եւ ահաւոր խոշտանգումների ենթարկում տարածաշրջանի հայերին եւ եղիներին⁶⁷:

Քեմալի իշխանութեան վերջին տարիներին, երբ արդէն սատիճանաբար զգալի էր դառնում ինոնիկ ազգեցութիւնը, տեղի է ունեցել որոշ թուրք դեսպանութիւնի հայերի ծածուկ վերադարձը Հալեպից Դերսիմ (Թումենցի), որն իրականութեան մէջ բնակվայր էր դարձել Ալեփի ցեղախմբերի: 1937-1938 թթ. Դերսիմի ալեփիական ապստամբութիւնների ընթացքում գործուն դեր է ունեցել այնտեղ Վերապարագ եւ Վերաբենակաւած հայութիւնը:

Հոլանդացի արեւելագէտ Մարտին Վան Բրոյնեսենի «Genocide In Kurdistan? The suppression of the Dersim rebellion in Turkey (1937-38) and the chemical war against the Iraqi Kurds» (Յեղաւապանութիւն

62. <http://www.did-dpa.org/Htm1/engarmenianQ6.htm>

63. Հայրենիք, Թուստոն, 1931, նոյեմբեր, էջ 169:

64. Դրոշակ, Փարիզ, 1925, նոյեմբեր, էջ 151:

65. Նոյն տեղում:

66. Պապիկեան Թ., Զուտ հայարնակ գիւղը՝ Վագրֆ, Զուլիս, Ստամբուլ, 1990, լուսուր., թիւ 1022, էջ 22-24 եւ 1990, մարտ, թիւ 1023, էջ 38-41:

67. Պողոսեան Ս. Կ., Քրդերը եւ Հայկական Հարցը, Երևան, 1991, էջ 278:

Քրդստանում⁶⁸, Դերսիսի ապստամբութեան ճգնումը Թուրքիայում (1937-38 թթ.) եւ քիմիական պատերազմ Իրաքի քրդերի դէմ) աշխատութեան մէջ կարեւոր տեղեկութիւններ կան դերսիսցի հայերի վերադարձի մասին. «...Հիմնւելով իրականութիւնների մանրամասն ռազմական ուսումնասիրութիւնների վրայ դերսիսահայերը, որոնք վերապել էին հայոց ջարդերը եւ ապրում էին Սիրիայում, քուրդ ազգայնականների հետ վերադարձան տարածաշրջան եւ յաջողութեամբ ցեղախմբերին հրահրեցին ապստամբութեան»⁶⁹:

Դերսիսի Արեւելեան Թուրքիայի լեռնային անմատչելի մի վայր է: Այն բնակեցւած է մեծ թուվ փոքր ցեղախմբերով, որոնց հիմնական զբաղունքը անասնապահութիւնն է: Նրանց ընդհանուր թիւը 1930-ականներին կազմում էր 65-70 հազար: Մի մասը խօսում է քրդերէն, բայց մեծամասնութիւնը զազա կոչուղ լեզուվ: Բոլորը յարում են այլադաւան Ալեւի աղանդին, որը նրանց առանձնացնում է արեւելում եւ հարաւում ապրող քուրմանցերէն խօսող քրդերից:

Սայիդ Ռիզայի ղեկավարած 1937-1938 թթ. Դերսիսի ապստամբութիւնը արեան մէջ խոխոտւց թուրքական բանակի, այդ թում օդուժի միջոցով: Դետաքրքիր է իմանալ, որ այդ գազանային արարողութեան ակտին մասնակցել է Ս. Քենալի հոգեորդի զաւակ Սապիհա Գեռչենի, որն ըստ Ս. Պողոսեանի ակնարկած աղքիւների՝ «փնտրում էր խոռվարանների որդերը եւ նրանց գնդակահարում գնդացիրով»⁷⁰:

Թուրքական եւ քուրքահայ մամուլի բացայայտումների հիման վրա (2004 թ. Գիտորարին) Սապիհա Գեռչենը, քուն անունով խարուն Սիրիանանը եղել է Ուրֆայի որբանոցի սան, որին Քենալը որդեգրել է 1920-ականների սկզբին: Գեռչենը շնորհի Քենալի հոգատարութեան իր ուսումն առել եւ դարձել է Թուրքիայի առաջին կին օդաչուն:

Այսպիսով պարզում է, որ քուրդ-քուրքական ընդհարումների դաշտում հայերը ներկայացել են երկու հակադիր ճակատներում. մէկում, որպէս ազատագրական պայքարի մարտիկներ, իսկ միւսում որպէս պետական բռնութեան իրականացնողներ...

Բ- 1938 - 1950 թթ.

Աքարտուքական շրջանի համեմատութեամբ՝ այս փուլում հայութիւնը գտնւել է քաղաքական եւ հասարակական առաւել անտանելի ճնշման մընլուտում: Փաստորեն Աքարտուքի եւ Խոնճիկ ժամանակահատածների հիմնական տարբերութիւնն այն է, որ Քենալի օրոք գոն պոլսահայութիւնը համեմատական խաղաղ կեանք էր ապրում: Իսկ

յա առահայութեան դէմ հալածական քաղաքանութեան հարցում եական տարբերութիւններ չկան:

Իսմէր Խոնճիկ 1943 թ. Երկրորդ աշխարհամարտի թու ու քրիին նայեարի աճիւնը Գերմանիայից Թուրքիա թերել տալով, այն ամփոփեց «Ազգատութիւն» անանուղ բլի վրայ, թերեւս որպէս իր կատաղի հակահայ քաղաքականութիւնների խորհրդանիշ (ի դէմ Իսմէր Խոնճիկ նայեարի քրոջ ամուսինն էր):

Նացիստան գաղափարներով ու յաղթանակներով ոգեւորած որբական ցեղապահութիւնը՝ պանորութիզմը, այս ժամանակահատածում վճռականութեամբ շարունակեց իբրիհատական քաղաքականութիւնը հայութեան ոչնչացման ուղղութեամբ: «Նորից հանրամատչեեի դարձան Զիա Գեոր Ալիի գուածքները, վկայում է Յարշեայ Սիրիանը, որոնք բազմարի նոր հրատարակութիւններ ունեցան»⁷¹:

Յետպատերազմնան ժամանակաշրջանում, թուրք-խորհրդային յարտարութիւնների բարդացման եւ սրացնան արդիւնքում, նկատելի են լաւնում ճնշումների սաստկացման երեսոյքներ: Յատկապէս Կարսի եւ Սուրահանի պահանջատիրութեան ուղրութեամբ խորհրդային արտաքին բարդարականութեան ակտիւթիւնը Խոնճիկի իշխանութիւնների կիրառած հակահայ քաղաքականութեանը նոր լիցք հաղորդեց եւ նրանց մնեց այս անգամ թուրքահայութեան անունից «կոչեր» հրապարակելու հայապատկան հոդատարածների պահանջատիրութեան դէմ:

Թուրքահայ մամուլից ի յայտ են գալիս սահմանափակ տեղեկութիւններ զաւառների հայութեան հասարակական կեանքի կանոնականութեամբ: Մեծ ոգեւորութեամբ է նշում օդինակ Դարարեցիրութ Ս. Աստկի արարողութիւնը, ուր ներկայ է եղել հաւատացեալների խուռն բազմութիւն⁷²: Նոյն առիթով լուրեր են հաղորդել նաեւ Կեսարիայի գատկական հանդիսութիւնների եւ այն մասին, որ աւագ շաբաթայ պատկական պահանջութիւնների առաջ կարծեալ խուռն բազմութեամբ լցւած է եղել ներարիայի Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին⁷³:

Իշխանութիւնների յատուկ կարգադրութեամբ՝ փոքրամասնութիւնների համար ճշտւց «Վերլիք վերկիսի կանունու» կոչուղ հարկային մի օրենք 1942 թ. նոյեմբ. 11-ին: Ըստ Ընորիք արք. Գալուստեանի. «... այդ օրերին հայերի «Վերլիք վերկիսի» տուրքը հարիւր քսան տոկոսի եր հասել, այսինքն պետութիւնը հայի ամբողջ եկամուտը գանձում, ապա նոյս տան կահկարասինները ծախել էր տալիս մնացած քսան տոկոսը տուանալու համար...»⁷⁴:

«Վերլիք վերկիսի» մասին թերեւս առաւել ճշգրիտ տւեալներ եւ համեմատական պատկեր է նշում Ս. Վ. Գեղամեանն իր «Թուրքիայի

68.Bruinessen Martin Van, Genocide In Kurdistan? The suppression of the Dersim rebellion in Turkey (1937-38) and the chemical war against the Iraqi Kurds (1988), in: George J. Andreopoulos (ed), Conceptual and historical dimensions of Genocide. University of Pennsylvania Press, 1994, pp. 141-170.
69.Պողոսեան Ս. Կ., Քրդերը եւ Յայկական Յարցը, Երեւան, 1991, էջ 283:

70.Սիրիանեան Յ.թ., Թուրք-հայկական յարաբերութիւնների պատմութիւնից, Երևան «Դայաստան», 1991, էջ 478:

71.Ալիք, Թեհրան, 1946, մայիսի 28:

72.Նոյն տեղում, 1946, յունիսի 5:

73.Նոյն տեղում, 1980, դեկտեմբերի 18, թիւ 12562:

ազգային բուրժուազիան երկրի տնտեսական եւ սոցիալ-քաղաքական կեանքում 1945-50 թթ.» աշխատութեան մէջ: «Թուրքական իշխանութիւնների կանայականութիւնների պայմաններում,- գրում է նա, մէջըերելով Ս. Ա. Հասրաթեանից, թուրք առեւտրականը պէտք է վճարէր իր տարեկան եկամտի 4.74 տոկոսը, յոյնը՝ 150 տոկոսը, հրեան 179 տոկոսը, իսկ հայը՝ 232 տոկոսը. այսինքն՝ յոյնները, թուրքնի համեմատութեամբ, վճարում էին 31 անգամ աւելի, հրեանները՝ 36 անգամ, հայերը՝ 47 անգամ»⁷⁴:

Հարկային այս քաղաքականութեան խստապահանջ գործադրումը մէկ կողմից հայութեան արտահոսքի, իսկ միևս կողմից՝ նրա ազգային ինքնութիւնից ծեւականօրէն հրաժարման գլխաւոր պատճառ դարձաւ: Նշանակած աշխատութիւնում կատարած վերլուծումներից պարզում է, որ թեև իշխամացումը ամբողջապէս չէր փրկում կացութիւնը, սակայն աչքառու կերպով իշեցնում էր հարկային պարտաւորութիւնները: Դիմնելով անզիհական հեղինակ Բ. Լիլիսի տւեալների վրա՝ Գեղամեանը բացատրում է, թէ ինչպէս, օրինակ մահմեդական հրեայնները (դէօնն) պէտք է վճարէին ընդամենը երկու անգամ աւելի, մինչդեռ ոչ-հայամները, ինչպէս ասեց տասնեակ անգամ աւելի⁷⁵:

Այս ժամանակահատւածում թթքացման անմարդկային քաղաքականութեան հետքերի մասին դիպուկ վկայութիւնների ենք հանդիպում «Ալիքի» էջերում, ուր մէջըերելով «Էգիպէշն Գաղեթ» Եգիպտական թերթի հաղորդումներից նշում է. «Վիորքամաս-նութիւններին պատկանող փաստարանները դժւարութիւն են կրում դատեր վարելու: Որեւէ պարագայում դատաւոր լինել չեն կարող: Երբ հանրապետութիւնը նոր էր հաստատել, թուրքերը շատ գործածեցին «ձուլէք» նշանաբանը: Փոքրամասնութիւններին պատկանող շատ ընտանիքներ թուրքական անուններ որդեգրեցին: Նրանք իրենց զաւակներին թուրքական տիպար անուններ տվեցին եւ մեծամասնութեան մշակոյրով ու լեզով կրթեցին նրանց»⁷⁶:

Թուրքացման քաղաքականութեան հակահայ կուպիտ երեսն ու ուղղածութիւնը չի վիճակ իրանական մամուլի տեսադաշտից: «Իրանէ մա» թերքը մանրամասութեամբ վերլուծելով նննիկի ցեղապաշտական սոյն քաղաքականութեան արմատներն ու թողած հետքերը շեշտում էր, որ. «Թուրքիայում գտնուող բոլոր փոքրամասնութիւնների մէջ ամենից ծանր վիճակն են ապրում հայերը»⁷⁷:

Հետեւաբար կարելի է եղուակացնել, որ թուրքացման քաղաքականութեան համատարած արդիւնքները երեւան են եկել այս ժամանակահատւածում եւ մանաւանդ գաւառներում ստեցնել «թաքում» հայի կերպարը:

74. Դրոշակ, Աբենք, 1989, փետրարի է, էջ 31:

75. Նոյն տեղում:

76. Ալիք, Թեհրան, 1946, յունիսի 17:

77. Նոյն տեղում, 1946, յուլիսի 11:

Թուրքացման քաղաքականութեան ծիրում հարստահարծան եւ սովորական ծանր ու աննպաստ պայմանների առկայութեանն է սկզբարկում մի պոլսահայ մտաւորականի հետեւեալ վկայութիւնը. որիհանուր թշւառութեան մէջ, գրում է նա, կարելի չէ քանի մը խօսք ունի Կեսարիոյ մէջ ապրող 500 մանուկների մասին, որոնք թուրքովին պրեած են տոհմիկ դաստիրակութիւնից: Ասիկա մէկ պատկերն է նուարիոյ հայութեան: Վստահ եղէք, թէ ուրիշ շրջաններու մէջ կացութիւնը անլիք վատ է»⁷⁸: Նան լրագրութիւնների ընդմիջից թուրքացման բոլյարականութիւնը քողազերծելու եւ քննադատելու «յանցանրով», խոցածել, կալանքների տակ առնել եւ ծինչել իսկ կտտանքների են նորարկելու մի շարք պոլսահայ մտաւորականներ, գործիչներ եւ լրագրողներ, որոնց խիզախ տեղեկատութիւնների շնորհիւ է այսօր լոյս սփառում են այս հետազօտութեան վրա:

Այս ժամանակահատւածի սովորածելի մասին գոյութիւն ունի հետաքրքրական պատկերներ Փոքր Հայքի և յարակից լուսնների «պաշտօնական» հայութեան կապակցութեամբ. օրինակ նուարիայում հարիւրաւոր հայ բանորմներ աշխատել են ապուխտաշինութեան գործարաններում, եւ ժողովրդի մեծամասնութիւնը, անձնական նուականատիրութիւնից զուրկ լինելով, վարձակալի կարգավիճակ է ունեցել⁷⁹: Տեր Հայկազուն Կարապետեանն առաւել յստակ է դարձնում, որովակիորն ակնարկելով, որ Կեսարիայի ժողովուրդը աղքատ է եղել, ան հայ ընտանիքներից միայն տասը սեփական բնակարան ունեն եւ ուզը⁸⁰:

Յատկանշելի է, որ այդ շրջանում գաւառի «պաշտօնական» հայութիւնը ունեցել է ծխատէր քահանաներ Փոքր Հայքի և յարակից լուսնների տարածքում Օրդուում, Կեսարիայում, Եւրեկ-Ֆենէսէում⁸¹: Մասմանափակ այս ծովսերով բաւականին դժւարութեամբ է կրօնական սուսարկութիւն տրեւել գաւառահայութեանը, որը լայն ցուածութեամբ բռնկում էր զանազան մանր ու խոշոր գիւղակներում ու գիւղաքաղաքներում:

Դիտի ասել, որ այս ժամանակահատւածի մասին տեղեկութիւնները պակաս են: Կեսարիայի հոգեւոր հայր Հայկազուն աւագ քահանայ հարապետեանը գաւառի հայութեան մասին տալիս է վիճակագրական ուղի պատկերը.⁸² (Աղ. 4).

	Տեղանուն	Ընտանիք	թաքանակ
1	Կեսարիա	450	2250

78. Առյօն տեղում, 1946, յուլիսի 28:

79. Առյօն տեղում, 1946, նոյեմբերի 21:

80. Առյօն տեղում, 1947, յունիսի 12:

81. Հայրենիք տարեգիրք-Տօնացոյց, Բոստոն, 1945, էջ 263:

82. Հայրենիք տարեգիրք-Տօնացոյց, Բոստոն, 1947, էջ 242-244:

2	Թալաս	20	77
3	Կիւնան	10	50
4	Մունծուսան	25	110
5	Ռումտիզին	5	30
6	Չինճիտրէ	1	4
7	Եւրեկ-Ֆեւսէ	130	640
8	Կիկի (գուտ հայ)	25	120
9	Պունարպաշը	12	60
10	Սվազ	250	1250
11	Կեմրէկ	40	245
12	Թոքմէն	20	100
13	Շարգօշյա	15	80
14	Ելմի Խան	80	400
15	Ուլաշ	40	240
16	Զառա	50	240
17	Գոչիխսար (Յայեկը)	20	100
18	Արաբկիր	250	1250
19	Խարբերդ	150	750
20	Տիարալերի	200	1000
21	Մալաթիա	100	500
22	Յրտու	40	200
23	Սամսուն	10	50
24	Գոմիա	25	100
25	Տևսորոյ	25	100
26	Գոմիա-Էրէյի	74	250
27	Ալմանա	5	20
28	Ակն	30	150
29	Մերսին	8	25
30	Յութը	1	6
31	Անկարա	260	1500
32	Խինոպ	30	150
33	Գարաքեռուտ	1	6
34	Ելազիգ	150	700
35	Եօզկատ	50	260
36	Պողագլուսան	25	130
37	Ուզունյու	12	75
38	Սարայի	30	150
39	Ինճիրի	25	130
40	Քետիլէր	10	60
41	Գարապըրը	6	30
42	Գում Գույու	15	75

43	Եյլնան	12	60
44	Պեպէր	5	40
45	Գարա Եաղուշ	5	75
46	Չաք	15	80
47	Թերզիիհ	30	220
48	Խորկուն	10	50
49	Սատրհամզա	1	5
50	Մելեզ	15	70
51	Պուրունգրշլա	15	75
52	Խունկուրյա	10	50
53	Այլեւայլ գիւղերում	25	100
54	Թոքաք	70	350
55	Թահտրպա	4	15
56	Զիֆրիիկ	3	15
57	Չիլէ	4	12
58	Մորում	3	16
59	Սեծիտ Եոգիւ	5	25
Ընդհամենը		2957	15906

Աղիւսակ 4

Որոշ տւեալների լոյսի տակ թւում է, որ Տէր Հայկազունի նորկայացուած այս նյոյթը դեռ ամբողջապէս չի ընդգրկում նոյնիսկ նշանակած տարածքներում ցրւած հայութեանը: Օրինակ. Արաբկիր քաղաքը, որն ըստ Թ. Խ. Յակոբեանի 1922 թ. ուներ 800 հայ բնակիչ, արդեն 1945 թ. ունեցել է 600 հայութիւն, որի թաքանակը յաջորդ տարում իշել է 200-ի⁸³: Բայրուտ 1940 թ. եղել են աւելի քան 750 հայեր⁸⁴: Ես Ակնի պարագայում արձանագրւած մի տեղեկութիւն. հաստատելով 30 ընտանիքների բնակութեան փաստը, ակնարկում է նաև Արեւմտեան Հայաստանի (տարածք «ա») ծայրամասում գտնւող Ակնի (Ներկայիս Եգին կամ Թիւանիյէ) շրջակա հայկական գիւղերից Կանոնրակապին եւ Ապօնուղային, ուր 1946 թ. բնակում էին կապակցարար 2 եւ 3 ընտանիքներ⁸⁵: Նկատելի է նաև այն հանգամանքը, որ Տէր Հայկազունի պատրաստած պատկերից բացակայում են Արեւմտեան Հայաստանի եւ պատմական Կիլիկիայի հայաշատ քաղաքներն ու գիւղերը:

Նշենք նաև այն փաստը, որ Տէր Հայկազունն աւելի ուշ (հաւանաբար 1947 թ. վերջերում), կրօնա-հոգեւորական իր հերթական այցելութիւնների արդիւնքում «Անատոլիայի» հայութեան թաքանակը նորկայացրել է 20,000⁸⁶: Այս յաւելումը բնականաբար բնակչութեան

83.Յակոբեան Թ. Խ., «Պատմական Հայաստանի քաղաքներ», Եր., 1987, էջ 51:

84.Նոյն տեղում, էջ 88:

85.Ակնի, Թերիքան, 1946, օգոստոսի 12:

86.Նոյն տեղում, 1948, փետրուարի 23:

բնական աճի պատճառով չի եղել, այլ հայանաբար նորոնոր հայ ընտանիքներին եւ հայարնակ գիւղերին նրա ծանօթացնան: Օրինակ Մալաթիայի Դերենդ քիւղի անունը չկա նրա 1945 թ. ցուցակում, սակայն փաստորէն այնտեղ ապրել են հայ բնակիչներ: Այս կապակցութեամբ կարելի է ակնարկել Դերենդ քիւղի երեք հայ երիտասարդների մկրտութեանը, որը կատարել է Տիգրանակերտի Ս. Գրիգոր լուսաւորիչ Եկեղեցում 1946 թ.⁸⁷: Այդուհանդերձ Տեր Հայկազունի կազմած ցուցակը չի կորցնում իր տեղեկատական նշանակութիւնը եւ պատճական արժեքը:

Դաշի առնելով նախկին ժամանակահատածում Կիլիկիայի հայարավման ծաւալը (միջին հաշտով 130 հազար մարդ), ինչպէս նաև Խարբերդ-Տիգրանակերտ-Դերսիմի հայութեան մասնակի բռնազարդը (շուրջ 30 հազար մարդ), կարելի է պնդել, որ Խամբեր Խոնճիսի իշխանութեան այս ժամանակահատածում եղել է առնազն 170 հազար հայ: Սոյն տևալը Տ. Հայկազունի թւերի հետ համեմատելով կարելի է կրահել, որ «քաքուն» հայութեան տեսակը սկսել է ստուարանալ այս ժամանակահատածում, եւ որի գործընթացում ի շարու քաղաքատնեսական ճմշումների ազդեցիկ եւ ճակատագրական գործոն է հանդիսացել, ինչպէս նշեց, «Վերլիք-Վերկիսի» հարկային-տնտեսական քաղաքականութիւնը:

Այսպիսով, ներկայացւած 58 քաղաքների եւ շրջակա գիւղերի մասին տևալները, փաստորէն, վերաբերում են «պաշտօնական» հայութեան թաքանակին 13,300-ը Փոքր Հայքում և յարակից շրջաններում (տարածք՝ «Դ») եւ 2600-ը Հարաւ-արեւմտեան Հայաստանում (տարածք՝ «Բ»):

«Պաշտօնական» հայութեան աւելի բարձր թաքանակների մասին է վկայում Կ. Պոլսից Բաղդադ ժամանած «մի ազգային», որ Բաղդադի «Գոյամարտ» թերթի հետ իր ասուլիսում գաւառի հայութեան թիւը ներկայացնում է 40,000: Այդ յատկանշական ասուլիսում ասում է, որ ամենախիտ հայ բնակչութեամբ վայրեր են Տիգրանակերտը, Կեսարիան, Եւրեկը, Օրդուն, Մալաթիան, Ամասիան եւ Սվագը: «Կան բնաւ չկա, երգորում շատ քիչ, խարբերդ չկա, Հաթայ ալ քիչ ճը», ասում է պոլսահայ ազգայինը⁸⁸: Կամի եւ մանաւանդ խարբերդի մասին նրա ակնարկներից, փոխարեականորէն երեւում է, որ խօսքը զնում է միմիայն «պաշտօնական» հայութեան վերաբերեալ եւ ոչ թէ կրօնափոխ կամ այլախօս հայերի մասին:

Նման մօտեցմամբ, «Ալիքը» հիմնելով Կ. Պոլսի հայկական մամլում բերած տևալների վրայ, սոյն ժամանակահատածի գաւառահայութեան թաքանակը ներկայացնում է 50 հազարից պակաս⁸⁹, եւ աելացնում, որ բազմաթի հայ ընտանիքներ են գաղթում դէպի Կ. Պոլսի:

87.Նոյն տեղում, 1946, նոյեմբերի 21:

88.Ալիք, Թերամ, 1951, յունարի 25:

89.Նոյն տեղում, 1951, սեպտեմբերի 10:

Խսմբք Խնոնիկի նախազահութեան ժամանակաշրջանի վերջերում լոյն ծերակալութիւնների տարափ սկսեց: Զերակալւեցին բազմաթիւ սրբութեանականներ, այդ շարքում նաև Ալվարուլան Թուրքէշը, որը յատագա տարիներին «Գորշ գայլերի» ամենաառանցքային դէմքը հանդիսացաւ: Զեւական դատավարութիւնից յետոյ 1947 թ. նրանք սկսպարտ արտայայտւեցին: Ճետաքրքիր է հնանալ, որ նրանց դատավարութիւններում շեշտած էր. «ցեղապաշտութիւնը ըստ օրենքի (ինչ թուրքիայի օրենքը) պատժապարտ բան ճէ»⁹⁰:

Յետպատերազեան շրջանում ԽՍՀՄ արտաքին քաղաքականութեան օրակարգի վրա որևէ Կարս-Արդահան-Օլրիի պահանջը, որն ինչպէս Թուրքիային, այնպէս էլ արեւմտեան ամբողջ ճամբարին նոր սարսափների մատնեց եւ կտրուկ սրեց իրավիճակը:

«Եի Եորք Վորլդ Թելեգրամ»-ի աշխատակից եւ Թուրքիայի ու բուրքական հարցերի մասնագետ Ղենինը, իր փրօբութքական յոյածներից մէկում (կոչւում է «Թուրքիան Վտանգի տակ»), վերլուծնուլութիւնից պետական, տնտեսական եւ ռազմագիտական տկարութիւնները բուրք-խորհրդային յարաբերութիւնների ոլորտում, նշում էր, որ Թուրքիայի պետականութեան տկարացման մեթոդներից մէկը կարող էր յնույն բուրքերի եւ փողքամասութիւնների իրարու դէմ լարումը եւ շեշտում նույն ուղղութեան ընդունում ապրում են քրողեր, հայեր եւ կովկասեան սեղեր (ընդգծումը մերն է Կ.Խ.):»⁹¹

Խսկ Գահիրէ «Մասրի» թերթի լոնդոնեան թթակիցն իր 1948 թ. սեպտեմբերի 10-ի լրագրութեամբ մանրամասնութիւններ է տալիս Անդարայուս կայացած թուրք-ամերիկեան զայտնի տեսակցութեան մասին, որի նպատակն է եղել «պաշտպանութեան» գոտի ստեղծել Դարդանելից մինչեւ իրանական Ասրապատականը: «Մասրիի» թթակից մեծերութիւնից պարզում ենք, որ «Յուսաբերում» ամերիկեան առաքելութեանը մտահոգող երկրորդ պատճառը ոչ-թուրք փողքամասնութիւնների պարագան է, որոնք բնակլում են Կարսի, Արդահանի եւ Արտինի սումմանամերձ շրջաններում, այսինքն քուրդերը եւ հայերը: «Այս մեղքինները նտակի են ծառայելու սովորներին եւ անկաղողութիւններ ստործելու (ընդգծումը մերն է Կ.Խ.)»⁹²: Թուրք է, որ այս վկայութիւնն ստույում է «իսլամացած» հայութեան համշենահայութեան եւ լուսկեններին: Ամեն դէպքում այս փաստը ուշագրաւ է ոչ միայն Արև մտեան Հայաստանում հայութեան շշափելի թաքանակի առկայութեամ իմաստով, այլ նաև նրան օրիա քաղաքական հաշտարկներում եւ յարակից գաղտնի բանակցութիւններում ներառնան առումով, որն սպացուցում է մեր հետազոտութեան առարկա հայութեան աշխարհաքաղաքական նշանակութիւնն ու դրա ներուժ դերակատարութեան հայանկանութիւնը:

90.Նոյն տեղում, 1947, մայիսի 22:

91.Նոյն տեղում, 1947, օգոստոսի 25:

92.Յուսաբեր, Գահիրէ, 1948, սեպտեմբերի 13:

Պաշտօնական մարդահամարի տվեալները ցոյց են տալիս, որ այս ժամանակահատածում Թուրքիայում ապրող հայերի թիվը եղել է 57,559, որից 31,617-ը կազմել են կանայք⁹³: Աղբիւրում էլ դարձեալ շեշտուում է «ոչ-հայա» լինելու հանգամանքը:

Ըստ 1958 թ. հրատարակուած «Հայաստանի մի պատմութիւն» գրքի հետինակ Վահան Քուրքչեանի՝ 1890-ականների եւ 1915 թ. ֆիզիքական բնաջնջութեանից խուսափելու նպատակով իսլամացած հայերի մի մեծ համայնք է արդէն գոյութիւն ունեցել այս ժամանակահատածում: «Երանք առհասարակ, - գրում է Վահան Քուրքչեանը, ցայծն պահապանել են իրենց հայկական քարտերն ու աւանդութիւնները»: Այս թիւն անշուշտ պիտի գումարել Խնոնիսի հակահայ քաղաքակնութիւնների արդիւնքում իսլամացած հայերին եւ դրանց անբողջութեանը ներառել «քաքուն» հայութեան հասկացութեան շրջագծում:

Գ. 1950 - 1960 թթ.

Մի շաբթ վկայութիւններ բաւարար իիմք են հանդիսանում եզրակացնելու, որ այս տասնամեակում Աղնան Սենթերեսի վարչապետութեան օրոք, հայութիւնը հասցրել է մի կարծ շունչ առնել գոյատեւելու համար: Եթե բացառենք ծայրայեղական աջ ուժերի կողմից հրահրւած 1955 թ. սեպտեմբերի 6-ի եւ 7-ի հակայոյն եւ հակահայ ամբոխային բռնարարքները Կ.Պոլսում եւ Խզմիրում, հայութիւնն այս ժամանակահատածում գտնել է համեմատական նորմալ պայմաններում իր համայնքային քայլայած կեանքը վերակազմակերպելու առումով: Ծնորիք արքեպիսկոպոսը նոյնիսկ «հսկական ժողովրդավարութեան» եւ «փոքրամասնութիւնների ուսկեղար» է անւանել այս ժամանակահատածը⁹⁵:

«Մինչեւ 1950 թ.- գրում է «Ալիք» օրաթերթը, Անտոլիայի հայերը Պոլսի հայերի հետ յարաբերութեան միջոցներ չունեին՝ տիրող սարսափի եւ միջոցների չգոյութեան պատճառով»⁹⁶.

Կ. Պոլսի հայոց պատրիարք Մեսրոպ արք. Նարոյեանի ճահիւանից (1944 թ.) աւելի քան եօթ տարի յետոյ միայն հնարաւորութիւն տրւեց Թուրքիայի հայութեանը 1951 թ. նոր պատրիարք ընտրելու համար: Ըստրւեց Գարեգին արք. Խաչատուրեանը, որի ընտրութեամբ աշխուժութեան լիցը հաղորդւեց Թուրքիայի հայութեան ազգային-հասարակական կեանքին. «Պոլսոյ պատրիարքարանը, - գրում է «Հայրենիք» ամսագիրը, խոհեմ քայլերով ջանանում է օգտևել Ղենոկրատ կառավարութեան միջոցով տրւած մի շաբթ թեթև «շնորհ»-ներից, ինչպէս տեղ-տեղ սակաւարիւ հայկական եկեղեցների վերադարձը եւ կրօնական

93.Ալիք, Թեհրան, 1948, յունարի 13:

94.http://penelope.uchicago.edu/Thayer/E/Gazetteer/Places/Asia/Armenia/_Texts/KURARM/39*.html

95.Ալիք, Թեհրան, 1980, դեկտեմբերի 18:

96.Ալիք, 1973, սեպտեմբերի 23:

պաշտամունքի ազատութիւնը: Դեռ շատ թոյլ այս քայլերը պիտի ծառային մեր թեկորներին, որոնք իրենց ազգային գոյութիւնը պահպանելուց բացի, այլ ծգուում չունեն⁹⁷:

Այդ թեթեւ «շնորհ»-ների առաջին արդիւնքներից կարելի է համարել Դարայի երկու եկեղեցիների բացումը 1950 թ. սկզբում⁹⁸: Նոյն շարքին պիտի դասել Բողազկեանի եւ Էրէլի հայ համայնքներին գերեզմանոցային նոր տարածքների յանձնման փաստը 1951 թ.:

Համեմատական պատ ու խաղաղ այս պայմաններում, թեթեւ անդորրի պահերն օգտագործելով, հայ թեկորները նւիրուում էին մշակութային ստեղծարար աշխատանքի: «Չումհուրիեթ» օրաթերթի աշխատական անանի մտարական-լրագրող Եաշար Քենալը գրում էր. «Հատ բանցը մի բան ասեմ ծեզ. Անտոլիայի ժողովրդային բանաստեղծներից յասերը հայ են: Այս ինացա երբ աշխատանք էի կատարում ֆոլկլորի վրայ... »¹⁰⁰:

Եաշար Քենալի հաստատման ուղղութեամբ մենք եւս հանդիպեցինք հետաքրիդ տեղեկութիւնների բուրքական «venk.info» կայքէջում, որ «անատոլեան» եւ արեւելան տասնեակ ֆոլկլորիկ երգերի շարքին, նույն են տասից աւելի հայկական տոհմիկ երգերի անուններն ու հայերն բովանդակութիւնը բուրքերէնով: Այսպէս «Այ Նարէն» ու «Դայ Նիրինան» այդտեղում ներկայացւել են որպէս Սասունի, «Պուրմա տիկինն եկել եր» Բալուի, «Դեկ Եամանը» Վանի, «Դը, հէ, հէ Նիմոյին» Վագրք զիլի, «Մարի գեալինը» Էրգորումի եւ «Հալայի պարը» Այնրապի ֆոլկլորների¹⁰¹:

Համեմատական պատ ու խաղաղ պայմանների արգասիջներն երեւան են գալիս ամենատարբեր վկայութիւններում: Այսպէս օրինակ Էրելիում, 1951 թ. Կ. Պոլսից ուղարկած քահանան կատարել է օրինութեան արարողութիւն, պասկել վեց զոյգերի եւ մկրտել 45 մանուկ¹⁰²: «Նոր Սարմարային» հաղորդած լրագրութիւնում նշում է Էրելիում եւ Ֆենէսուում (Կեսարիայի մօտակարում) Ծաղկազարդ, Աւագ Մինզաբքի եւ Ս. Զատիկի տօների առքի կատարած առանձին արարողութիւնների եւ եկեղեցու «խուն բազմութեամբ» լցւած լինելու մասին¹⁰³:

Կամ Զառայում (Սեբաստիայի ծայրամասում, Արեւնտեան Յայաստանի դրկից), նոյնպէս առաքած քահանայի ծեռամբ, 1951 թ. պասկել նուի հինգ զոյգեր եւ մկրտել 30 մանուկ¹⁰⁴ եւ այլն:

97. Դայրենիք, Բոստոն, 1952, հոկտ., էջ 111:

98. Ալիք, 1951, յունարի 25:

99. Ալիք, 1951, փետրուարի 1:

100. Սոր Սարմարա, Ստամբուլ, 1960, սեպտեմբերի 11:

101. <http://www.venk.info/default.asp>

102. Ալիք, Թեհրան, 1951, փետրուարի 1:

103. Նոյն տեղում, ապրիլի 23:


104. Նոյն տեղում, օգոստոսի 13:

Սոյն ժամանակահատածի մամլոյ լրատուրինից պարզուու նեաւ, որ կանոնաւոր եւ ակտի թքակցական կապ է գոյութիւն ունեցող գաւառների (օրինակ Կեսարիա, Սեբաստիա, Զառա, Երևի եւ այլն) եւ ԿՊՈւի հայկական թերթերի, յատկապէս «Նոր Մարմարա» եւ «Ժամանակ» օրաթերթերի հետ, ինչը ընդգծելի է եւ նկատառան արժանի: Այս կապի անմիջականութիւնը շշշափելու համար հետաքրքրական ենք համարում «Ժամանակ» օրաթերթից մտքերւած 1951 թ. մի լրագրութիւն, ուր ասւում է. «մարտ 14-ին իրիկուն, աղօթելու համար երբ եկեղեցի կերթայինք, զարմանքով տեսանք քէ Ս. Կիրակոսի մատրան ներսի ապակիները խորտակած եւ գոյութիւն պատահած է»¹⁰⁵:

Գարեգին արք. Խաչատուրեանի ջանքերի շնորհիւ 1953 թ. հիմնադրւեց «Սուրբ Խաչ Դպրեվանք» ուսումնական միջնակարգը (լիսէն): Օչին Զիլինկիրը ուշագրաւ մանրամասութիւններ ներկայացնելով Գարեգին արք. Խաչատուրեանի կենսագրութեան մասին¹⁰⁶, նկարագրում է, թէ ինչպէս 1950-ականների «ժողովրդավարութեան անցքից» օգտւելով, տրապազմանցի պատրիարքը մինչեւ իր կեանքի վերջին օրերը գերմարդկային նւիրածութեամբ հետամուտ էր գաւառի հայ պատանիներին Կ. Պոլիս տեղափոխելու եւ երանց առաջորդն հայեցի դաստիարակութիւն փոխանցելու ժանր, պատասխանատու եւ յաճախ վտանգառ օրոքին:

Մանրամասնորեն քննարկելով Կ. Պոլիս բերլած սաների կենսագրութիւնները՝ նրանց ծննդավայրերը եւ տեղափոխութեան թաւկաններն¹⁰⁷ ապացուցում է, որ այդ ժամանակահատածից սկսած, սկզբում Գարեգին արք.-ի, իսկ հետագայում Ծնորից արք.-ի միջոցով դեկապարագութեամբ գաւառներ եւ գաւառներից դեպի Պոլիս» աշխատանքը սկսել է Կեսարիա-Սեբաստիայից, անմիջապես տարածել է Խարբերդ-Տիգրանակերտ-Շիրնաքի եւ քիչ յետոյ Կիլիկիայի, ապա Վերջին ժամանակներում միմիայն շարունակել է Սասունի (Արեւմտեան Հայաստան) ուղղութեամբ եւ երբեք չի ծաւալել Երգորև-Կարս-Տրապիզոնի եւ բուն Արեւմտահայաստանի միս կենտրոնների ուղղութեամբ (Նկ. 4):


ա. Սասունից բերված սաների թանալու ուր հնորեան ռակամք




105.Նոյն տեղում, ապրիլի 11:

106. «Գիշերը առաջոր իր մտց կը կրտ», Ստամբուլ, 2003, էջ 27-45
107. <http://www.surphac-threvank.org/sbt/ksu/aramo.htm>


107.<http://www.surphac-tbrevank.org/sht/okul/arama.asp>



9. Ապահովարից բերւած սաների քանակն ըստ Ժն՛նդեան թւականի



የኢትዮጵያውያን የፌዴራል ሁኔታዎች የአዲስ የዕለታዊ ስነዕና በግብር




Նկատի առնելով Պարեվանքի միջնակարգային կարգավիճակը ու հետեւաբար դրա յաճաշճան տարիքային նօտաւոր սահմանները, Ակարից կարելի է կրահել, որ Կեսարացի սաների թերման գործը գրեթ սկսել է Պարեվանքի հիմանդրութեանն առներեր եւ շարունակել մինչեւ 1970-ականները, Յարաւ-արեւմտեան Յայաստանի տիգրանակերտցի սաների դապրում մինչեւ 1980-ականները: Պատմական Կիլիկիայի Սանանդաղ քաղաքից սահմանափակ թուվ սաներ են թերթւ 1970-ականներին:

Խակ պարագան միանգամայն տարբեր է Արեւածան Կայսերական համար, որտեղից սաստինցի սաներ են թերթել աւելի ուշ՝ 1990-ականներին և օրոք թեության շարունակությ է մինչեւ ներկա ժամանակները:

Ի՞նչն է եղել այս գործի ծավալման անհամաշխափութեան բուս պատճառը: Դժւար է սրա պատասխանը փնտրել զուտ փաստգրական ոլորտներում, բայց որոշ փաստերից կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի հերթական իշխանութիւնները զգայնութիւն են ունեցել Վիլսոննեան սահմանների նկատմամբ եւ հաւանաբար ծրագրած կերպով հայ եկեղեցական գործինների առջեւ գտել են «կարմիր սահմաններ», որի

արդիւնքում գործնականապէս դժւարացրել են նրանց մուտքը Արեւմտեան Հայաստան:

Դպրեվանքի կայթից տւեալները համապատասխան քարտեզուն ի մի բերելով, կարելի է ցուցադրել բոլոր զաւառեցի սաների ծննդավայրերը. Եւ դրա ընդմիջից արտացոլած տեսնել այդ «կարմիր սահմանների» առկայութիւնը (Նկ. 5.- նկարում տեղանակն աջ կողմի փակագծուն նշել է տւեալ վայրում ծննած սաների թիւ):



Եկան 5

«Կարմիր սահմանների» առկայութիւնը կարելի է նկատել նաև նախկին գլխում ակնարկած, Տեր Յայկազուն Կարապետեանի տւած գեկուցման մեջ:

Ի շարս Պոլսոյ ազգային հաստատութիւնների, «Սուլը Փրկիչ» ազգային հիմնադասնոցի վերաշխուժացումը եւս կարելի է համարել այս ժամանակահատւածի կարևոր ձեռքբերում: Վարուժան Քեռւեանն իր աշխատութեան մէջ նշում է, որ 1950 թ. հիմնադասնոցի հեգաբարձութիւնը նոր եռանդով է նվիրւել աշխատանքի եւ նախաձեռնել է ժողովրդական հանգանակութեան շարաններ: Եւ ժողովուրդը, որ երկրորդ համաշխարհային պատերազմի արհաւիրքից եւ «Վերլիկ Վերկիսի» (ունետորութեան) հարկային կապանքներից ազատւել էր արդէն եւ վերագտել առեւտրական կեանքի բնականն ընթացը, աւելի ուշադրութիւն էր դարձնում հիմնադասնոցի նիւթական կարիքներին¹⁰⁸. Դիւնադասնոցի նիւթական բացը ժամկետու համար կազմակերպաւած ժողովրդական հանգանակութեան

մնայուն գործում իր համեստ մասնակցութիւնն է բերել նաև գալառահայութիւնը¹⁰⁹:

Սի հետաքրքրական փաստի լոյսի տակ պարզում է, որ Կեսարիայում 1950-ականներին շարունակել է թեժական դրւածքն ու համայնքային կեանքն իր առաջնորդական պաշտօնով. «Սուրբ Փրկիչ» ազգային հիւանդանոցի արտաքին բաժնի օգնական թիվը Վարուժան Բագինն իր մասնագիտական մի գեկուցման մէջ, ի միջի այլոց գրում է. «Լ. Բ. անունով եօթ տարեկան մի աղջկէ, Կեսարիայից, տեղի առաջնորդի յանձնարարական նամակով, ազգային հիւանդանոց էր ուղարկվել (ընդգումը մերն է՝ Կ.Խ.)»¹¹⁰.

Եկեղեցական սպասարկութիւնների հնաստով հոգեւոր կեանքը տարբեր է եղել Հարաւ-Արեւմտեան Հայաստանում (տարած՝ «ը»). «Խարբերդի և Տիգրանակերտի շրջաններում ապրող մեր փոքրարին հայրենակիցները,- գրում է «Հայրենիք» ամսագիրը, Երկար ժամանակ է փափագում են մի հոգեւոր հովի ունենալ, սակայն պատրիարքարանը ընթացք չի տպիս դիմումներին»¹¹:

Տիգրանակերտն այս ժամանակահատվածում ունեցել է Ս. Կիրակոս Եկեղեցու ընտրովի խորհուրդ՝¹¹²

Խարբերդի ճատակայքում գտնող պատմական Տելրիզու (Դիվիզիզի), հաճաձայն 1955 թ. տևալների եղել են հինգ հայ ընտանիք-ներ¹¹³:

Հիմնականում սոցիալական պատճառներով այս ժամանակահատածում սկզբնաւորիւթել է «պաշտօնական» հայութեան արտահոսքը գիւղերից դեպի քաղաքներ: Ըստ Օշին Զիլմանկիրի¹¹⁴ «առաւելաբար փոքր քաղենական նկարագիր պարզող» հայութեան այս հատածը, որ նայենի լեզվի ուսումնառնան հնարաւորութիւնից զուրկ էր, գաղթում էր ներք քաղաքներ, մասնաւորաբար՝ կենտրոնանում 4. Պոլսում:

Արդեն այս ժամանակահատվածում, բնական օրինաչափութեամբ, նեղտես է որում «Թարուն» հայութեան երկրորդ սերնդի ազգային

109.U. Φρίκη, Ουσταμπούι, 1953, μαյής, η τωρη, ρήι 45, έτο 28 έτη 1953, γιοτίθη, ρήι 46, έτο 27:

Ստանդրովի «Ա. Փրկիչ» ազգային հիմնարանց նյութական պաշտոնաքարտը՝
Վերոյիշեալ Երկու համապատերան, Նիկաուուրին ննների սինակուն, ի շարու այլոց գրած է.
«ԱՄՐՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՆՊՈՒՆԻԱԾ ՆԵՐՆԵՐ- Կեսարիայի Տեր Դայկաղումի ծեռամբ 98
կիո ծաւար, «ԱՊՇԻՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՆՊՈՒՆԻԱԾ ՆԵՐՆԵՐ- Կեսարիայի թիմ. ծեռամբ
Փիփիս Աղումաննանց 80 կիո ծաւար, 100-ական լիրա նիրել են տկն. Երանուիի
Խավառութեամբ, Վուաշապուհ Ֆրանկիւլը եւ տկն. Սորիմն Ֆրանկիւլը, դոկու. Ա.
Լորիկեամի ծեռամբ՝ Զատկի առաօտքան Անկարայի մեջ հասարաւ ամակի հասոյր»:

110.Ս. Փրկիչ, Ստամբուլ, 1950, մայիս, ա տարի, թիվ 9, էջ 20
Տարբերակ 5, 1953 միջազգային էջ 109:

111. Յայրենիք, Բուտոն, 1952, է

112.Ալիք, 1951, փետրվարի 1:
113.Յակոբեան Թ.Խ., «Պատմական Հայաստանի քաղաքները», Եր., 1987, էջ
312.

240: 114 «Թեհա առաջընդ իր մեր լու լուն»։ Ատամբով, 2003, էջ 35

հիմագծի պահպանման երկընտրանքը: Ո՞րոնք էին այդ երկընտրանքի բաղադրանասերը.

-կամ շարունակել մնալ «թաքուն», պատմական յիշողութեան հիման վրա կիրառել հանապատաժման պաշտպանաւորութեան ծեւեր. Միմեր անունով (բուն անունով Անդրանիկ) մի հայ այսպէս է նկարագրում 1950-ականների Սեբաստիան. «Ամբողջ նահանջի 200,000 հայութիւնից մնացել է ընդամենը 2500-3000 հայ... 1920 թ. Տիգրանակերտից քայլելով վերադարձայ Սվազ (Սեբաստիա), յոգնած, հալումաշ: Ծառայ մտա պապիս գործակատար թուրքի մօտ... : Ահա 30 տարուց ի վեր է ծառայուն են: Յիմա անունս Ահմեդ, իմ կինս Զարուհին Էմինե, գաւակս Եղիշէն Արիֆ է կոչւում: Մոռացել ենք մեր հին կրօնքը, ազգութիւնը, Վարուժանից սովորած հայերենը... Տղաս, երբ բարկանում է, հայերէն է նախատում...»¹¹⁵.

-կամ «թաքուն»-ից փոխւել «պաշտօնական»-ի, ապա երկար սպասել ուժացման դառն ճակատագրին: Մի ուխտաւոր այսպէս է պատմում իր տեսած Սեբաստիայի մասին, ուր «այժմ 3000 հայեր են ապրում, որոնք «զարմանալի կերպով հայախոս են, քայ հայերէն գրել կարդալ չգիտեն: Յազարաւոր հայեր դեռ մնացել են գաւառի գիւղերում, եւ դատապարտած անշուշտ կորսւելու, եթէ մի նոր կեանք չսկսի նրանց համար»¹¹⁶:

Մինչեւ իսկ բացառաւած էր թուրք երրորդ ճանապարհը՝ թքանալու կամ քրդանալու անմիջական ճանապարհը: Կարծես թուրք ու քուրդ գանգաւածներն էլ հոգեբանօրէն պատրաստ չէին դրան: Նուրար Զարմաքչեան անունով մի շիրնացի հայ, 1982 թ. ԴիւՌ արտարին գործերի նախարար Զոն Կիրակոսեանին ուղած իր նամակի մի բաժնում բնութագրելով հայութեան ծանր վիճակը Թուրքիայում՝ բացատրում է, թէ ինչպէս գաւառներում մնացող «թաքուն» հայութիւնը բարի բուն իմաստով ենթակայ էր մնում սորուվի կարգավիճակի: Կատարելապէս սորկացած այդ հայերն աղանդերի համար գործ էին վարում, պահանջած ժամին փող էին հրամցնում եւ այլն: Այնուամենայնի այդ «դժբախտութիւնը ուներ մի բարեբախտութիւն, որն էր տեղային թուրք բնակչութիւնը հայերին ամւանում էին ֆլա կամ երմնի: Տեղային հասարակութեան այս դիրքորոշումը մեր կիսահայ գոյատեման գիշաւոր պատճաններից մէկն էր կազմում (ընդգումը մերն է - Կ.Խ.)»¹¹⁷:

1960 թ. Թուրքիայի պաշտօնական մարդահամարի համաձայն այդ ժամանակահատածում Մարդինում ապրում էր 10,232 հայ, Գաստանունուում 1204 եւ Սեբաստիայում 565¹¹⁸: Մարդահամարի ամրողական տւեալը տալիս է Արդուլլահ Եամանը 1960 թ. «Անատ-

իայի» նահանգներում ապրող հայերի թւաքանակը 53,173 ներկայացնելով¹¹⁹:

Սեր գնահատմամբ, սոյն թերը դարձեալ առնչուում են միջիայն «պաշտօնական» հայութեան (ներառեալ նաև Մարդինի բողոքական յաւետարանական եկեղեցու հետեւորդ հայութեան) եւ կրելով պետական սփյուտակ, բնականաբար, թերի են: Օրինակ՝ Յարաւ-արեւմտեան հայաստանի «պաշտօնական» հայութեան կարեւոր կենտրոններից հանդիսացող Խարբերդն այդ ժամանակահատածում 1960 թ. ունեցել է 1000 հայ բնակիչ¹²⁰:

Այս նոյն տեսակետն ունի «Որօշակի» ներկայիս խմբագրապետ Խազարեր Պերպերեանը: Նա իր «Յայասպանութիւնը տեղի չունեցաւ միայն 1915-1917 թականներուն» յօդածում, ի մի բարելով մի շաք հետագօտողների տւեալները, եղբակացնում է, որ 1960 թ. Թուրքիայի պաշտօնական մարդահամարում «դիտմամբ է անտեսել ոչ-հայախօս հայերի համբանքը»¹²¹:

Դ. 1960 - 1970 թթ.

Այս շրջանը կարելի է համարել Թուրքիայի հանրապետական պատմութեան մէջ զինուրական խունտայի բռնատիրութեան շրջան՝ գօրավար Գուրսէլի գլխաւորութեամբ: Մենդերէսի շրջանի համեմատական ազատ պայմաններին յաջորդող այս շրջանում հայութիւնն առաւել դանդաղ կշռոյներով, շարունակել է իր խիստ սահմանափակ լիանքը:

Թթահայ կեանքին քաջածանօթ Մինաս Թէօլէօնանն իր «Արեւմար մը՝ Թուրքիոյ հայոց հանրային եւ մշակութային հորիզոններու վրայ» առանձին յօդածում, բնութագրելով 1960 թ. յեղաշրջումից առաջ ու յետոյ Թուրքիայի իշխանութիւնների վարած բաղաքականութիւն ու կեցւածքը հայութեան նկատմամբ, հիմնաւորում է, որ թէեւ հակահայ այլաներժութիւնն առաջ էլ գոյութիւն է ունեցել, սակայն յեղաշրջումից սկսեալ, «այդ բարդոյթ շատ աւելի խորացաւ»: «Մենդերէսեան իշխանութիւնների կառավարութեան հարթումից թերե պետական հարածներից յետոյ (1960-1980 թթ.),» - գրում է Մինաս Թէօլէօնանը, ողակը տարուց տարի աւելի է սեղմուուն Թուրքիայի հայկական մնացորդացի հանրային-մշակութային կեանքի բոլոր մարգերում»¹²²:

Նա իհարկէ այդ սեղմուունը, ի շարս եական պատճանների, վերագրում է նաև մնացորդացի արտասահմանում կազմակերպւելուն եւ

115. <http://usersfreenet.am/~sivas/Sepasdian1950in.htm>.

116. Յայրենիք, Բոստոն, 1952, հոկտ., էջ 111:

117. Ալիք, 1989, նոյեմբերի 19, թիւ 15083:

118. Որօշակ, Արէնք, 1989, օգոստոսի 30, թիւ 1231, էջ 89:

հայկական պահանջատիրական շարժումներում դրա մասնակցութեան ու ակտիվացմանը: Այստեղ կարելութեամբ ընդգծում ենք այս հանգանանքը՝ երկու նկատառնամբ. նախ հաստատելով մեր առարկայ հայութեան ազգային գիտակցութեան արտացոլումն անկաշկանդ պայմաններում, ապա դրա նկատառելի արտահոսքն այս ժամանակա-հատւածում:

Ազգային գիտակցութեան եւ ինքնագիտակցութեան առկայութեան մասին հետաքրքիր կարող է լինել «Դայրենիքի ծայնում» բերլանի կենացքի մի դրագ, համաձայն որի, Եօվկաստում 1915թ. ոչնչացած մի հայ ընտանիքի գերդաստանից 12 ամեայ Կարապետ Մելիտոնեանը գրաւեր թուրքի միջոցով փրկվել, որդեգրուել եւ Վերանաւել է Թոյ Ձելալ Մամեդօղլու: Դայ պատահին ապրելով օտար յարկի տակ, մոռանալով իր մայրենի լեզուն միմիայն յշել է իր բուն անուն-ազգանունը եւ 50 տարի շարունակ երազել, որ մարդիկ նորից իրեն կոչեն դրանով: Այս ինքնագիտակցութեամբ, նա ի վերոյ թակութիւն է հաստատել Ս. Դայաստան եւ մեռականունեա արուն 123.

Թթրքահայ կենաճի վերաբերեալ հիտուաքրոպական լրագուռութիւն-ներ հաղորդող, վաստակաւոր մստառական Հրանտ Սահմանը 1960-ականների մասին գրում էր. «Ցիր ու ցան հայեր են ապրում մի շարք գլխաւոր քաղաքներում- Կեսարիա, Ամկարա, Դիարբեքիր, Խարբերդ. Սեբաստիա, Մալարիա եւ այլն. մի մասն է օգնութեան»¹²⁴.

Այդ ժամանակահատվածում Ս. Խաչ Դպրեվանքի աշակերտութեան ճնշիչ մեծամասնութիւնը բաղկացած է եղել զաւառներից բերեած սանրեից¹²⁵. Դպրեվանքը 1961-1962 ուսումնական տարեշրջանում ունեցել է 18 միջնակարգի շրջանաւարտ, որոնցից ընդամենը 3-ը են Կ. Պոլիսից եղել: Տիգրանակետից՝ 7, Կեսարիայից՝ 2 եւ մէկական Գաստամունոյից, Սվագից, Մուշից, Թօքատից եւ Զիլէից¹²⁶ շրջանաւարտների առկայութիւնից կարելի է կրահել այդ ժամանակահատվածի «պաշտօնական» նյութեան «ցիր ու ցան» լինելու չափն ու ցրւածութեան պատկերը:

1961 թ. Կ. Պոլսի Յայց պատրիարք ընտրեց Ծնորիկ Եպու. Գալուստեանը, որի 29 ամեայ պատրիարքութեան շրջանում բրահայ ազգային-հասարակական կեանքում տեղի ունեցան բաւական լուրջ ու բախտորոշ բարեփոխումնեն:

Հնորհք պատրիարքը 1970 թ. սեպտեմբերի 15-ին Պուտնոս Այրեսում ասում էր. «Թուրքիայի ներքին գալաքոներում բնակող հայերի ընդհանուր թիւը շուրջ 25 հազար է: Նրանք թեև հայերէն չեն խօսում եւ կրթական հաստատութիւն անգամ չունեն, սակայն իրենց հայ են զգում եւ հաւատարիմ են մնում իրենց կործին, անւանը եւ աւանդութիւններին...»:

Դժւար պայմանների տակ են ապրում նրանք եւ եթ անհրաժեշտ միջոցների չդիմի, նոր սերնդին, որ բաւական մեծ թիւ է կազմում, հայուրեան համար խսպառ կորսւած պիտի նկատել (ընդգծումները ներն է կ.ս.)»¹²⁷.

Ծնորիք պատրիարքը, ինչպէս ասեց, կատեգորիկ կերպով զանազանում էր Թուրքիայի հայութեան տեսակները, հետեւաբար 25 հազար բարձրանակը նա գիտակցաբար է վերագրում և կոչնեն հայտարիմ մնազած (իմա մեր սահմանած «պաշտօնական») տեսակին: Այս տեսակաւորման հետեւորիւնները լաւգոյնս կարելի է տեսնել «Յառաջ»-ի 1969 թ. յունարի 19-ի համարում. «Թուրքիայի ներքին գուաղներում ապրում են շուրջ քսան հազար հայեր... : Նրանց վիճակը ողբայի է: Մրանզից բայց տակաւին կան ըրբազած հայեր, որոնց թիւ յատնի է (ընդգումը մեր է Կ.Խ.)»¹²⁸.

Այդ ողբակի վիճակը դարձանելու նտադրութեամբ Կ. Պիլսուս կազմի էր մի յանձնախումբ, որի պարուականութիւնն էր ընդհանրապէս գրադաւութեամբ ներքին գաւառների հայութեան հարցերով և մասնաւորաբար նոր սերնդով¹²⁹: Յատկանշական ենք համարում սոյն հարցի գուգորդում նշել, որ պետական մարմիններն ել նման հարցերով «հետաքրքրած» են եղել, ինչը ստիպել է նրանց 1962 թ. կեանքի կոչել «փոքրամասնութիւնների հարցերով» գրադաւութեամբ, որը քառասուն տարիներ անց կազմակութեց 2004 թ. փետրվարին:

1969 թ. Կես-թոյլատու պայմաններում, Ծնորիք արք Գալուստեանին յաջողութել է այցելել Կեսարիոյ, Մալաթիոյ, Տիգրանակերտի, Ալեքսանդրեթի (Խոբենդերուն) եւ Մուսա Լեռան միակ հայարնակ գիտ Վազգրֆի հայ համայնքներին: Այնուամենայնիւ պատրիարք հնարաւորութիւն չի ունեցել այցելելու Կարճոյ (Երզրում), Սեբաստիայի, Խարբերդի, Մշոյ եւ այլ վայրերում ապրող հայ թեկորներին¹³⁰, որոնց թաքանակն այդ ժամանակ, որոշ տևալների հիման վրայ, չուրջ 250,000 էր հաշվարկվում¹³¹:

127.Այիր. Թեհրան, 1970. նոյեմբերի 10:

128. Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1969, թիւ 3, էջ 257:

129.Այիր, Թեհրան, 1970, նոյեմբերի 10

130.Րաֆֆի Մարեզինը, Թերան, 1970, Բ տարի, էջ 511:

131. Հայրենիք, Բուստոն, 1961, ապրիլ, թի 4, էջ 80:
 «Դարձած ամսագրի տվյալներում կարդում ենք. «Պողոսյան «Սարմարա» թըրթի «Դարձած ամսագրից 4. Առարկեանը, որ վերջինը շրջազայի և Մասոնության հայաբնակ վայրերը, մոտ 250.000 է հայուս մեր հայրենակիցների թիվը՝ իմանալով մի շարք տևապեսի վրայ։ Յօնածածիկը չի նշել այս տեսաները, ասական թուրքական քաջանակի քաղաքացիների հայ ընակինների մասն տվյալ է հետաքրքրական տեղեկություններ։ «Ընդհանուր երեսոյը այն է, որ մեր այլ գուած հայրենակիցները շատ թիվ տեղերում միայն եկեղեցի ունեն, իսկ ոչ մեկ տեղում հայկական դպրոց։ Եթեսաբար, այսօրուայ կացութեամբ, նրանք դառապարտուած են կողմներու իրենց լեզուն և ազգային գիտակցութիւննը»։

123.Զանասէր, Բեյրութ, 1968, ապրիլ 15. և 172:

124.Ալիք. Թեհրան, 1970, յունաշրի 12:

125.Նոյն տեղում, նոյեմբերի 10:

126.Ամենուն տարեգիրք, Բեյրութ, 1963. էջ 741:

Սա հենց այն ակնարկած արգելքներից, «կարմիր սահման ներից» է, որով ակնյայտ է դառնում պետական զգայնութիւնը Արեւմտեան Հայաստանի եւ անմիջական դրկից մարզերի նկատմամբ:

Սոյն ժամանակահատւածում վերապրոյ հայութեան հասարակական կեանքի մասին կան հետաքրքրական վկայութիւններ: Օրինակ. Կ. Պոլսի պատրիարքարամից Տիգրանակերտ ուղարկած S. Շաւարշ Պալըմեանը տալիս է իր տպաւորութիւնները եւ մանրամասութիւններով պատկերացնում է մասնաւորաբար այն ազգային ոգին, որ «տեսել է Տիգրանակերտի մէջ մնացած երկու հազար հայերի մօտ: Նրանք ընդհանրապէս պահել են իրենց հիմ, աւանդական սովորութիւնները: Օրինակ՝ նախ տղամարդիկ են ճաշում, ապա կանայք՝ գետինը լայն սփոռ փուլով»:

Պալըմեանը, սակայն, ակնարկում է նաև դրանց տիսուր ճակատագրին. «Ազգային մասնաւոր կրթութիւն ստանալու հնարաւորութիւնից գուրկ՝ այդ դժբախտները գիտակցում են միայն, որ հայ են, սակայն կարու ազգային եւ կրօնական կեանքի»¹³²:

Փաստորեն ցեղասպանութեան վերապրոյների երկրորդ մերնոյի մօտ ազգային ինքնագիտակցութեան առկայութիւնը լաւապէս շօշափում է վերը բերւած վկայութեան մէջ: Թերեւս ծովան, ուժացման եւ այլասերման երեւոյներ աւելի քիչ են կշռել, քան սոցիալական բարդութիւններն ու ֆիզիկական սպառնայիբները:

Թթրահայ գրող Մկրտիչ Մարկոսեանն իր գիւղագրական երկերում «Տիգրիսի ափերէն» (1999) եւ «Մեր այդ կողմերը» (1988, 1994, 1995 եւ 2001), պատկերաւոր կերպով նկարագրում է Տիգրանակերտի հայոց հասարակական կեանքը 1960-ականներին. Եկեղեցական արարողութիւններ, հարսանեաց հանդէսներ եւ այլն: Նա շեշտում է, որ այնտեղ աստիճանաբար դժւարացել են պարզ գոյապրուստի կենցաղային պայմանները. «Դայերը միայն արհեստաւոր էին,- վկայում է նա, որովհետեւ անելու այլ գործ չէր մնացել: Նախ՝ իրենց հողամասերը կորցրել էին, ապա պաշտօնեայ կամ զինորական դառնալ էլ չին կարող...»¹³³.

Տիգրանակերտի շրջակա Դերիքում կեանքը քիչ աւելի հանգիստ ու ազատ ներկայացնելով, հայ աւետարանական գործիչ Ծահեն Մակարեանը գրելով Դերիկի մէջ խմբած ապրող 30 հայ ընտանիքների մասին, մատունանշում է կարեւոր մի հանգամանք. «Քաղաքապետը թուրքի հետ ամուսնացած մի հայ կնոջ զաւակը լինելով, հայերի հանդէպ շատ ազնիւ վերաբերմունք ունի: Այստեղ հայերը շատ հանգիստ եւ ազատ են ապրում: Քաղաքապետը գիւղի եկեղեցիկ եւ ընդարձակ եկեղեցին յանձնել է հայերին: Քահանայ չունեն, բայց եկեղեցին միշտ պահում են մաքուր եւ լուսաւոր»¹³⁴:

132. Դայերնիք, Բուստոն, 1963, ապրիլ, ԽՍ տարի, թիւ 4, էջ 80:

133. Նոր Մարմարա, Ստամբուլ, 2001, նոյեմբերի 21:

134. «Քանբեր» հոգեւոր ամսաթերթ, Փարիզ, 1971, յունի.-փետր., թիւ 1-2, էջ 36:

Նշեալ փաստի լոյսի տակ թերեւս աւելորդ չենք համարում յիշել եւ ամրագրել Սիրայէլ Վարանդեանի ֆրազը, համաձայն որի աւելի բարձր, աւելի խորունք եւ աւելի ընդարձակ ազգային գիտակցութեան հենքի վրայ, բնական փոխորոշումնան ոլորտ է գոյացել «պաշտօնական» եւ «քաքուն» հայութեան միջեւ. Խալանցած հայի քաղաքապետ զաւակը, կրելով պետական պատասխանատութիւնը եւ գիտակցելով դրա քաղաքական հետեւամբները, իր ազգակիցներին եկեղեցի է հայաբայթել:

«Նոր Մարմարա» օրաթերթի խմբագրապետ Ռոբերտ Ջատտենեանին ուղղած իր նամակում, Ալի Ռզա Տմիկոր անունով թուրքիայի քաղաքացին, 1960-ականների իր ծննդավայր Մալաթիայի, «Չավուշողլու» թաղամասն այսպէս է բնութագրում. «Մեր թաղամասի մասնայատկութիւնն այն էր, որ բնակչութեան 60 տոկոսը հայեր էին, իսկ մնացած 40 տոկոսը մահմեդական հայրենակիցներ: Մեր տան երկու կողմերուն հայեր էին բնակում: Այս դրացիութեան պատճառով թաղամասի ժողովուրդը այնպէս միաձուլվել էր իրարու, որ կարծես դարձել էին միս ու եղունգ»¹³⁵: Սալաթիան պատմական Փոքր Հայքի հայութեան կարեւոր քաղաքներից մէկն է, ուր, ըստ Ծահեն Մակարեանի՝ 1960-ականների վկայութեան, ապրում էին 120 ընտանիք հայեր, սոցիալական լաւ վիճակով «արհեստաւորներից եւ արեւտրականներից բաղկացած»¹³⁶:

Ծահեն Մակարեանը հարուստ տեղեկութիւններ է տալիս նաեւ Փոքր Հայքի և յարակից շրջանների (տարածք «Դ») «պաշտօնական» հայութեան եւ յատկապէս Սեբաստիայի մասին, ուր այդ ժամանակահատւածում ապրում էին, մեծ մասամբ առեւտրով եւ արհեստով գրադոյ, 80 հայ ընտանիքներ: Նա Սեբաստիայի հայութեան մասին հաղորդում է նաեւ մի այլ կարեւոր տեղեկութիւն. «Անշուշտ շրջակայքում եւ գիւղերում էի հայեր գտնուում են...»¹³⁷:

Փոքր Հայքի և յարակից շրջանների միւս քաղաքների վերաբերեալ, Բուն շապին-գարահիսարջի Ծահնազար Քեօթահեանը, 1969 թ. իր ուղեգրական յուշերում գրում էր. «...Կանգ առանք Սու-Ծեհիր (Ենտիրէն), հարցնելով այնտեղ գտանք 90 տարեկան դեռ կայտառ ու շարժուն մի հայուի, որ քահանայի հարս էր եղել եւ եղեանից յետոյ յաջողել էր մնալ այնտեղ: Նա էլ իր կարգին մեզ առաջնորդեց ուրիշ հայ ընտանիքի մօտ. բոլորն էլ հայերէն էին խօսում եւ մեզ ընդունեցին սիրալիր...»¹³⁸:

Նկատելի է դառնում, որ Փոքր Հայքի և յարակից շրջանների հայութեան սոցիալական կեանքը այս ժամանակահատւածում տարբերել է զուտ ֆեոդալական տնտեսակարգ ունեցող շրջաններից: Ըստ Պոլսի Գատօգիտ թաղի քահանայ Տ. Մովսեսի. «Եօզկատում

135. Նոր Մարմարա, Ստամբուլ, 2004, յունարի 27:

136. «Քանբեր» հոգեւոր ամսաթերթ, Փարիզ, 1970, ապրիլ, թիւ 4, էջ 79:

137. Նոյն տեղում:

138. Նաւասարդ, Լու Անջելոս, 1986, ապրիլ, թիւ 45, էջ 20:

գտնում են 16 հայ ընտանիք: Արանցից մի մասը զբաղված են Երկաթագործութեամբ, մի քանիսը՝ դերձակութեամբ, իսկ մնացածներն էլ բանուրներ են»¹³⁹: Այս վկայութեան հիմնա վրա Փոքր Հայրում և յարակից շրջաններում չկան ճորտական աշխատանքի բացայատ նշոյներ, որոնք ակնյայտ են եղել Արեւմտեան եւ Հարաւ-Արեւմտեան Հայաստանում:

Իւլամացած համշենահայութեան այս ժամանակահատուածի թաքանակի մասին հանդիպում ենք Սերո Խանզադեանի աշխատութեան մէջ: «Այժմ, ոչ լրի տեալներով, Տրապիզոն-Գիւմուշանե-Բաքերդ-Սպեր-Համշեն ընդարձակ հատուածում երեք հարիւր հազար մահմեդական հայեր են ապրում: Միայն Սուլընեիի փոքրիկ նահիելում (գաւառակ, վիճակ) հինգ հազար տուն մահմեդական հայեր կան, 30-35 հազար մարդ: Մոռացած հայութիւն... »¹⁴⁰: Այս տեղեկութիւնը արժեքաւոր է նաև այն տեսակետից, որ ընդհանրապէս այս ժամանակահատուածում համշենիցների մասին արգոյ են շատ սահմանափակ թուվ տւեալներ:

Գալով Արեւմտեան Հայաստանի (տարածք՝ «ա») այլ քաղաքներում բնակող հայութեան վիճակին, եւս արգոյ են որոշ վկայութիւններ, առաւելաբար Սասուն-Մուշ-Վարդոյի շրջանների մասին: Յայ աւետարանական հոգեւոր հայր Հրանտ Կիւղելեանն իր 1969 թ. ուղեգործութեան մէջ առանձին գլուխ է յատկացրել «Վարդո Աշիրեր»-ին, ուր եւ շատ ճիխ մանրանասութիւններով ներկայացնում, է այդ շրջանի հայութեան համայնքային-սոցիալական իրավիճակը¹⁴¹:

Առարկայական ծանր ու դաժան պայմաններում, ազգային ինքնագիտակցութեան պահպանման իրողութիւնը, նկատելի է նաև այստեղ, ուր, ըստ Շահեն Մակարեանի, ապրում են «քոլորովին ան-նպաստ պայմանների տակ, շրջապատճած մոլեռանդ իսյան քուրդ գիւղերով, դեռ իրենց հայութիւնն ու հաւատըք պահող» հայեր¹⁴²:

Ասենք նաև, որ 1966 թ. Վարդոյում պատահած Երկրաշարժից մեծապէս տուժել են այնտեղի հայերը: Լուսանկարիչ Ջերի Գունտար-Շեանը հասել է Վարդո, աղետից ընդամենը մի քանի ժամ յետոյ եւ ականատես է եղել «աւերակների տակ ճշացող» հայ մանուկներին: Մի քանի օր անց, նա տեղեկացրել է, որ Երկրաշարժից յետոյ բարեբախտաբար «նկատարելի թուվ քրդացած հայեր տակաւին ողջ են մնացել Վարդոյում»¹⁴³:

Քերի Գունտարնեանը նոյնպէս վկայում է, որ Պոլսի պատրիարքարանի իրապարակած անանացանկի համաձայն 1966 թ. պատահած

աղետին զի են գնացել չորս հայ ընտանիքներ Վարդոյում, թուվ 14 անդամներով¹⁴⁴:

Պիտի ասել, որ տւեալ Երկրաշարժը, մարդկային ցաւակի վնասներ պատճառելով հանդերձ, կարեւոր նշանակութիւն ունեցաւ «քաքուն» հայութեան մի բաժնի յայտնաբերման գործում: «Սասուն» գրքի հեղինակը ակնարկում է այս հարցին ասելով, որ Երկրաշարժը անակնակալ յայտնութիւն եղաւ, եւ որի «շնորհիւ» ի յայտ նկան ինչպէս Վարդոյի շրջանում այնպէս էլ Սասունի լեռներում գոյութիւնը պահող հայկական գիւղեր, «քրդացած (միայն լեզով), քրիստոնեայ մնացած ամրողական հայ գիւղեր»¹⁴⁵:

Վերը նշանակած վկայութիւններում «քրդացած»-ը թերեւս բառացի-օրեն հոմանիշ պիտի համարել դոկտ. Աշոտ Սելքոնեանի մատնանշած «քուրքացած» կամ «տաճկացած» բառերին, որը, ըստ Եղիշեան, ծովածութեան ինաստից առաւել պարունակում է իր մէջ թաքնածութեան հայկացութիւնը:

Տրամաբանութիւնը հետեւեալն է Երնիկական ծովածան եւ ուժացման պայմաններում կատարեալ մետամորֆոզացած տարրի յայտնաբերումն ու զանազանումը միևներից անկարելի է: Նոյնիսկ մարդարանական եւ ֆիզիոլոգիական իմունիթերը բաւարար չափորոշիչներ չեն տալիս յատկապէս արագ յայտնաբերման գործի համար:

Ետեւաբար, եթե ուղեւորներն ի վիճակի են ոչ մասնագիտական պարզ որոնումներով գտնել «քուրքացած» կամ «քրդացած» հային ու զանազանել նրան բուրքից կամ քուրդից, դա նշանակում է, որ տւեալ հայը, իր Երնիկական պատկանելութեամբ, տակաւին չծովածած, բայց եւ բուրքախօս, քրդախօս կամ կրօնափոխ հայ է «քաքուն» հայ կամ «hidden» կամ «crypto» արտենիան:

Այս հայութեան համատեքսում Սասունը հանդիսանում է ամենախորիրբաւոր եւ հետաքրքիր աւանը: Շաարջ քահանայ Պալըմեանի վկայութեամբ, «Այսօր Սասուն լեռներում հարիւր տուն հայութիւն կայ, իւրաքանչիւր տուն 15-30 անդամ ունի, որոնք հարսներով ու բռներով ապրում են իրենց սեփական կալւածների մէ»¹⁴⁶: Նման մի թիւ թիւ թէ շատ հաստատում է նաև Շահեն Մակարեանը. «Սասուն մէջ ներկայում հազարից աւելի հայեր կան»¹⁴⁷:

Այստեղ պիտի նկատել ազգային ինքնագիտակցութեան ու հաւաքական կեանքի գիտակցութեան առկայութեան փաստը Արեւմտահայաստանի «քաքուն» հայութեան մօտ. «Գաւառի մէջ կան այնպիսի հայեր, որոնք իրենց անձնական շահերը կանտեսեն, հանգիստը կզոհեն

139.Ալիք, Թեհրան, 1962, հոկտեմբերի 14:

140.Խանզադեան Ս., Զայն Համշենական, Երեւան, 1971, էջ 11:

141.«Բանբեր» հոգեւոր ամսաթերթ, Փարիզ, 1969, նոյեմ.-դեկտ., թիւ 11-12, էջ 244- 246:

142.Նոյն տեղում, 1971, յուն.-փետ., թիւ 1-2, էջ 35:

143.Գարգաշեան Վ., «Fifty years behind a lens», Հայրենիք Վիթլի, Բուստոն, 2001, ապրիլ:

144.Քագին, Բեյրութ, 1968, յուլիս:

145.Ալիք, Սասուն, Երեւան, 1990, էջ 10:

146.Ալիք, Թեհրան, 1963, մարտի 31:

147.«Բանբեր» հոգեւոր ամսաթերթ, Փարիզ, 1970, յուն.-փետր., թիւ 1-2, էջ 29:

յանուն եկեղեցու եւ համայնքի...», - կարդում ենք Շաւարշ քահանայ Պալըմեանի տւած տպաւրութիւնների մէջ¹⁴⁸:

Բնորոշելով Արեւատեան Յայստանի Ֆեռոյալական իրավիճակը եւ այն, որ. «Գաւառի կենցաղն ու ապրելակերպը նախնական են», Շաւարշ քահանայ Պալըմեանը ակնարկում է մի կարեւոր երեւոյի, որ յատուկ է հայի ազգային նկարագրին. «Այսօր գաւառի մէջ աղքատներ ունենք, սակայն մուրացկաններ չունենք»¹⁴⁹:

Գաւառահայութեան առօրեայի մասին ուշագրաւ են նաև Շահեն Մակարեանի վկայութիւնները: Անդրադանալով սաստնցինների հաւաքական գիտակցութեանն ու կեցւածին, նա գրում է մի միջադէպի մասին, որը աւելորդ չենք համարում մէջբերել այստեղ. «Երկու տարի առաջ, մեզ հետ վէճի բռնած դրացի քրդերը մեզնից մի տարեց սպանեցին: Ու սկսեցին մեզ անիրաւել ու կողոպտել: Բողոքեցինք: Ունրագործն անմիջապէս բանտարկեց, բայց յետոյ ազատ արձակեց եւ սկսեց աւելի չարանալ ու ազատ համարձակ մեզի անտանելի վնասներ հասցնել...: Տիգրանակերտ բողոքեցինք: Այս անգամ կառավարութիւնը խուզ դարձաւ եւ չուզեց միջամտել»¹⁵⁰:

Հրանտ Սամուելն ակնարկելով, որ գաւառներում «հազարաւոր բուրքախօս հայ երիտասարդութիւն» կա, վերլուծում է նրա ծովածնա դէն պայքարող պղոսահայ հայրենասէր մտաւորականութեան, հոգեւորականութեան եւ գործիչների գործունեութիւնը եւ եզրակացնում, որ հենց այդ ծովածնա մտահոգութեամբ են գործել ու աշխատել նրանք «աւելի քան կէս դարից ի վեր»¹⁵¹:

Հրանտ Սամուելն ակնարկում է եւս մի այլ հարցի, որը մեր կարծիքով, բնորոշ նշանակութիւն ունի մեր նիւթի առնչութեամբ Թուրքիայի պետական քաղաքականութեան զնահատման մէջ: Նա վկայակոչելով Շնորհը արք. Գալուստեանին եւ ժողովրդակար կուսակցութեան հեղինակաւոր դէնքերից եւ խորհրդարանի պատգամաւոր Սկրտիչ Շելեֆեանին՝ պարզում է, թէ ինչպէս Թուրքիայի օրույ իշխանութիւնները, «շնորհակալ լինելու փոխարէն», յաճախ անյառքահարելի դժւարութիւններ են յարուցել «Անատոլիայի» հայ մանուկներին, Կ. Պոլիսի փոխադրելու գործում¹⁵²:

Այս վկայութիւնը մէկ կողմից հաստատում է մեր «կարմիր սահմանների» տեսութիւնը, իսկ մի այլ մեկնարանութեամբ, բնորոշում է պետական յստակ քաղաքականութիւնը՝ գաւառահայութեանն առաւել մեկուսացնելու եւ մայր օրգանիզմից հեռու պահելու ուղղութեամբ:

Համաշխարհային պատմութեան մէջ 1960-ականները հանդիսացել են որպէս երիտասարդութեան եւ ուսանողութեան քաղաքա-

կան դերակատարութեան ժամանակաշրջան: Այդ շրջանում Մենդետսեան համեմատական ժողովրդավարութիւնը համտեսած եւ զինուրական բռնապետութեան ենթարկած Թուրքիայի քաղաքա-հասարակական կեանքը, տրանարանօրէն չեր կարող յոի չիմեր այլեւայլ շարժումներից ու հոսանքներից:

«Ժողովրդավար կուսակցութեան» բիրտ ճգնան եւ ուրոյն եւ իրական սոցիալ-դեմոկրատիայի քացակայութեան պայմաններում, կոնունիզմը, ապա ծայրայեղ ծախս էր սկսել լայնօրէն հնայել ու իր շարքերում ներգրաւել Թուրքիայի երիտասարդութեանը, որից անշուշտ չեր կարող անմասն մնալ թրքահայութիւնը, յատկապէս աւատապետական, յետամնաց ու խաւարանիտ «Անատոլիայում»:

Մի «Քաքուն» հայ իր դաժան մանկութեան ու երիտասարդութեան տառապամբները, ընտանիքի դառն տեղափոխութիւններն ու իր «ծախս» հոսանքներում ներկրւելու պատմութիւնը պատմելով, «Դոգիս քեզմով կը խայտայ» գրի հեղինակ եւ առաջադիմական գրող, Քենալ Եալչինին, ասում է. «Սօրս երգերն ընդիհանրապէս թախծոտ էին: Իմ երգերը չեր հաւանում: Սայրս իր երիտասարդութեան դաշնակցական է եղել: Քաղաքական տեսակետից էլ ինձ երբեք չեր հաւանում: Ինքը, փեսաները, մեծ մօրաքրոջ ամուսինը, բոլորն էլ դաշնակցական կուսակցութիւնից էին եղել: Որպէս ընտանիք, մենք այդ արտի մէջ ենք բուտել: Սօրս դիմադրելու ուժը, կամքը քարի պէս տոկուն էր: Իր հաւատը, յոյսը երբեք չկորցրեց: Իր լաւատեսութիւնը, ճարդասիրութիւնը, ընդդիմութեան ջիղը գալիս էր երիտասարդութեան ընթացքում իր կուսակցական լինելուց: Իմ անհատականութեան եւ յատկապէս քաղաքական տեսակետներիս հասունացման մէջ մօրս ազդեցութիւնը մեծ է եղել...»¹⁵³:

Կոտորածները, պարբերական բռնազարդները եւ էրնոկոնական ինքնութիւնից հրաժարւելու անմարդկային հարկադրանը «Քաքուն» հայերի մօտ ստեղծել էին քաղաքական իշխայատուկ տրամադրութիւն եւ երբ պայմանները թոյլատու էին, նրանք անհատարար դրսեւորում էին քաղաքական խիստ դիրքեր եւ հակապետական կեցւածքներ:

Մինչեւ 1960-ականները Թուրքիայի Կոնունիստական կուսակցութիւնը, իր «ինտերնացիոնալիստական» կարգախօսներով, հանդիսանում էր այն կազմակերպած կառոյցը, որի մէջ համախմբւում էին հակառեժմ ուժերն ու զանազան էրնոկոնական խնքերի ներկայացուցիչները: Այդ բականներից յետոյ կուսակցութեան գաղափարախօսական լճացումը, ներքին թեալերութիւնն ու հերթական անջատումները եւ իշխանատենչական ծգտումներն աստիճանաբար իջեցրեցին նրա երբենի հեղինակութիւնը եւ թուլացրեցին նրա կազմակերպական կորովը, որի հետեւանքով հակառեժմ շարժման զլուխն անցան փոքր կառոյցներով եւ ահարեւկալական խնորումներով ձախ-ծայրայեղական իրերամերժ խմբեր եւ խմբակցութիւններ:

148.Ալիք, Թեհրան, 1963, մարտի 31:

149.Նոյն տեղում:

150.«Քանրեր» հոգեւոր ամսաթերը, Փարիզ, 1970, յունւ.-փետր., թիւ 1-2, էջ 30:

151.Ալիք, Թեհրան, 1969, դեկտեմբերի 29:

152.Նոյն տեղում:

Կոմունիստական կազմակերպութիւնների ներքին փոխարաբերութիւնների ոլորտում եւս, հակառակ կոմունիզմի դասականացածքարոզութեան, գնալով ակնյայտ էին դառնում երնիկական խորականութեան եւ այլամերժութեան երեւյթներ: Այս իմաստով կարեւոր ենք գտնում այստեղ մեջքերել ժամկ անունով մի ծախսակողմեան թուրքի տեսակետները, որն իր երիտասարդ հասակում սիրահարուած է եղել մի կենարացի «Քաքուն» հայի Զաքարիա անունով: Նա Քենալ Եալչինին պատմում է, թէ ինչպէս «միութեան պատասխանատու տիկինը» ուղղակի եւ անուղղակի թուրք միջոցներով արգելքներ է ստեղծել իր եւ Զաքարիայի յարաբերութեան հարցում. «Ննան վիճարանութիւններ եւ խոսակցութիւններ ունենար բազմաթիւ ընկերների հետ,- պատմում է ժամկ, ոմանք իրենց յանցաւոր էին զգում, որ չին կարողացել ինծ համար մի թուրք ընկեր գտնել: Գլխից զարուածի պէս էի դարձել: Սա ինչ՝ ծախսակողմեանականութիւն էր: Մէկ կողմից «մարդիկ հաւասար են», «բանուրներ, թուրք երկրների, միացէք» էին զոռում, երգեր էին երգում, միևն կողմից «Զաքարիան հայ է, չես կարող իր հետ ամուսնանալ» էին ասում...»¹⁵⁴.

Ազգամիջեան անվտահութեան եւ զաղափարախօսական ամբոխավարութեան եւ կեղծաւորութեան ննան պայմաններում, «Քաքուն» հայութիւնն իր հակապետական դիրքն ու տեղն այլեւս չէր կարողանում որոնել թուրքական ծախսակողմեան հոսանքներում: Այդպիսով, նրա քաղաքական ծգուումները յաջորդող տասնամեակներով ընթացել են ամենատարեր ուղիներով:

Ե- 1971- 1980 թթ.

Այս ժամանակահատուածը յատկանշում է «Գորշ գայլերի» հակահայ գործունեութեամբ: Բուն անունով «Ազգայնական շարժում» (MHP) ծայրայել աջ ցեղապահտական այս կուսակցութիւնը, գնդապետ Ալիքաշլան Թուրքէի գլխաւորութեամբ 1969 թականից հանդիսացել է պանթուրանիզմի ամենահումկու բազուկը Թուրքիայի ներքին եւ արտաքին քաղաքականութեան դաշտերն ամեն կարգի ընդդիմութիւնից ու հակառակորդից մաքրելու գործում:

Կիսազինորական այս կառոյցի «Էսկադրոններն» այդ շրջանուն գործունեութիւն ծաւալեցին ինչպէս թուրք եւ քուրդ այլախոն տարրերի, այնպէս էլ երկրի եւ արտասահմանի հայութեան դէմ:

Թերեւս թրքական պատկանելութեան TIS (Turk- Islam- Sunni) բանաձեւի յօրինումն ու տարածումը կարելի է այս շրջանի արդիւնքը համարել:

Յատկապես հայ ազատագրական շարժման նոր գինեալ պայքարի ժամանակատածում «Գորշ գայլերի» կիրառած թրքացման քարոզարշակի սպառնալիքի ներքոյ թրքահայութիւնը ստիպւած ինքն

իրեն ներկայացնում էր որպէս քիստոնեայ թուրք հայկական ժագումն ու պատկանելութիւնը քաղաքական յանցանք նկատելով: Այս կապակցութեանը հետաքրքրական մատնանշում կա պատմարան Չոն Կիրակոսեանի «Երիտրուքքերը պատմութեան դատաստանի առաջ» արժեքաւոր աշխատութեան մէջ, ուր մեջքերում է թուրք պրոֆ. Նեծադի պնդումը, թէ. «հայերն առհասարակ իրենց քիստոնեայ թուրքեր են նկատում»¹⁵⁵: Պատմագիտական եւ երնլորգիական տրամաբանութիւնից հեռու նաև անհերետութիւններով էր հիմնաւորում սոյն ժամանակահատուածի հակահայ քաղաքականութիւնը:

Ծնորիք պատրիարքի տւեալներով՝ այդ ժամանակի «խլամացած» հայութեան թաքանակը մինչեւ մէկ միլիոնի էր հասնում, որոնց կարեւոր մի մասը գիտակ էր իր հայկական արմատներին: 1980 թ. Երուսաղէմում իր բանախօսութեան մէջ Ծնորիք պատրիարքը հետեւեալն է ասում. «...Գաւառի մէջ Շոյիսկ մինչեւ մէկ միլիոն հայեր ունենք»: Եւ աւելացնում է, որ Մալաթիայում սոցիալապես ապահոված հայեր կան, նոյնպէս եւ էլազիգում հայեր կան եւ եկեղեցի ունեն: Տիգրանակերտ հայեր կան, «իսկ լսածի համեմատ, Սասոյ լեռների վրա էլ ցրած հայեր կան, որի մասին ժամանակին ձեռքս անցաւ 35 գիւղերի մի անւանացանկ»...»¹⁵⁶.

Այս ժամանակահատուածում Կեսարիայի հոգեւոր պետ Սերովը քահանա Կիլեանը, որ 1976 թ. Սատկի առթիւ ացելել էր մի շարք քաղաքներ, իր հաղորդած տեղեկագրում կարեւոր տեղեկութիւն է տալիս հիմնականում Փոքր Հայքի և յարակից շրջանների հայութեան մասին, ըստ որի Սերբասիայում բնակած են եղել 75, Թորքանում՝ 25, Ամասիայում՝ 30, Գիւմիշարքէյում՝ 25, Պողազլեանում՝ 30 Գաստամոնում՝ 80 հայ ընտանիքներ՝¹⁵⁷, մեր հասկացութեանը գերազանցապես «պաշտօնական» հայերից: Ֆիշեննենք նաեւ, որ սոյն տեղեկագրից դարձեալ պարզում է ակնարկւած «կարմիր սահմանների» հարցը:

Քաղաքների ցանկը դեռ կարելի է ընդլայնել՝ աւելացնելով նաեւ Ամասիան, ուր 1971 թ. տւեալներով ապրում էին 300 հայեր¹⁵⁸: Պատմական Գումիշանէում 1970-ականների տւեալներով՝ կային 330 հայ բնակիչներ¹⁵⁹: Այնուամենայնիւ, գոյուրիւն չունի համապարփակ պատկեր այս ժամանակահատուածի «պաշտօնական» հայութեան թաքանակի համար: Նոյնիսկ Արեւմտեան Հայաստանի (տարածք՝ «ա»)

155.Կիրակոսեան Զ., Երիտրուքքերը պատմութեան դատաստանի առաջ (գիրք Երկրորդ), Երեւան, 1983, էջ 445:

156.Ալիք, Թեհրան, 1980, դեկտեմբերի 18:

157.Նոյն տեղում, 1976, մայիսի 25:

158.Յակոբեան Թ. Խ., Պատմական Հայաստանի քաղաքները, Եր., 1987, էջ 36:

159.Նոյն տեղում, էջ 135:

սրտում՝ երգումում եւս, ըստ «Ալիք» օրաթերթի, 1973 թ. դեռ գոյութիւն և ունեցել հայեր¹⁶⁰, անշուշտ «պաշտօնական» հայեր:

Առաւել բարդ անորոշութեամբ եւ տվեալների պակասութեամբ շարունակում է մնալ հայութեան միւս տեսակների պարագան «Խսլամացած» համշենահայութեան եւ պոնտահայութեան սոյն ժամանակահատումի թարաբանակի մասին լայն քննարկումներ և կատարել Բարունակ Թոռլաքեանը: 1981 թ. վերջին լոյս է տեսել նրա «Համշենահայերի ազգագրութիւնը» ծալալուն աշխատութեան առաջին մասը, ուր ասում է. «Ներ ծովի հարաւում առնազն 400 հազար մահմեդական համշենահայ պիտի լինեն»¹⁶¹:

«Դաշի չունին անոնք,- գրում էր Դրանտ Սամուլը 1976 թ., որ Սեծ Սպանդի զարհութելի օրերուն կրօնափոխութիւնը փոկութեան լաստ համարելով խուսափեցան ցեղասպան դահիճի եաթաղանին զոհելէ»¹⁶². Այսպիսով, Դրանտ Սամուլը խորքում ակնարկում է «քաքուն» հայութեան թարաբանակի մեծութեանը այս ժամանակահատումուն: Նա նաև իր հետազոտական արժեք ներկայացնող յօդածներում, նշմարում է «քաքուն» հայութեան սերնդափոխութեան հարցը, բնութագրելով, որ առաջին սերնդին պատկանողները, ովքեր անմիջական կերպով յիշում են «իրենց հայութիւնը, քրիստոնեական աւանդութիւններն ու մասամբ նաև լեզուն», փորձում են դրանք փոխանցել «իրենց ժառանգորդներուն», ահաւոր ուսման պայմաններում¹⁶³:

Դարձեալ առանձին ուղեգրութիւնների ընդմիջից հաստատուում է «քաքուն» հայութեան գոյութիւնն Արեւմտեան Դայաստանի ամենայ ծայրամասային վայրերում անգամ: Զբոսաշրջիկ Դամբարձում Վասիլեանը, որ այս ժամանակահատում այցելել է իր պայենական գիւղը՝ Բաղին, Վկայում է, որ Բաղինում (հաւանաբար Դերսինի մօտակայքում) մնացել են մի քանի կրօնափոխ հայեր, որոնցից մեկը նոյնիսկ շրջակա քրդաբնակ գիւղերից մեկի գիւղապետն է¹⁶⁴:

Թուրքիայի արեւելեան շրջաններում ծպտեալ շրջած Յակոր քահանայ Գլընծեանն իր «Քրիստոնեայ փոքրամասնութիւններ Թուրքիայից» յօդածաշարում, բնորոշելով այդ ժամանակահատումի հայութեան սոցիալական վիճակը, որ այդ հայերի շառակինքը վերածած են եղել տնային ստրուկների, եւ պարտաւոր են կատարել ամեն տեսակ աշխատանք իրենց տիրոջ համար եւ այլն: Սակայն հակառակ այդ սոցիալական ծանր պայմանների. «Արտաքնապես

խաճացած (նրանց կոչում են «մուսուլմանի»), նրանք պահպանում են իրենց հայկականութիւնը»¹⁶⁵.

Ինչպէս նախկին, այնպէս էլ այս ժամանակահատածում «քաքուն» հայի համար բացառուած է եղել խպառ ծովլելու, թուրքանալու նամրան: Թեև «գեավուր» (թուրքերնով նշանակում է անհաւատ, անհնագանդ, խոռվարար) նաստացուցիչ կոչումն առերեւոյք փոխել էր հեղնական «մուսուլմանի»-ի, սակայն բնագդին համագօր երնիկական ներնագիտակցութիւնից բխած պատճեշը շարունակում էր անթափանց մեալ ծովլման դեմ:

Մեր գնահատմամբ այդ պատճեշի պահպաննան հարցում առկա է իրկելողմանի ցանկացողութիւն մեկ կողմից «քաքուն» հայութեան մօտ, իսկ միւս կողմից հայան թուրք կամ քուրդ զանգածների: Այս իրողութիւնն ապացուցող մի վկայութիւն կա Քեմալ Եալչինի գոյին պատկանող գրքում, ուր մի «քաքուն» հայ դառնօրեն արտայայտում է իր դէմ փակած գրքում, ուր մի «քաքուն» հայ դառնօրեն արտայայտում է իր դէմ փակած գրքում ելքի մասին. «Իսլամ էլ դառնաս, հաջի էլ դառնաս, -ասում է նա, նորից ծակատիդ փակցած «կենավուր» պիտակը չես կարող հանել»¹⁶⁶:

«Թաքուն» հայութեան սոցիալական կենարին առնչուող հարուստ և հետաքրքրական տեղեկութիւնների կարելի է հանդիպել «Եւրոպայի զաղրական աշխատաւորների պաշտպան միջենեղեցական յանձնախմբի» երկու առանձին տեղեկագիր-ուսումնասիրութիւնների մէջ. առաջինը 1979 թ., իսկ երկրորդը 1982 թ. պատրաստուած¹⁶⁷: Կաչէ Թրուտեանը քարգմանելով եւ խորքային վերլուծնան ենթակելով առաջին տեղեկագիրը արեւելեան նահանգների քամինի կապակցութեամբ գտնում է, որ Ժազան աշխատողներ են եղել քրիստոնեաները եւ տնտեսական ամենանեղ կացութիւնների մէջ անգամ, ի տարբերութիւն քրդերի, կարողացել են շատ աւելի բարուօք կեանք ստեղծել իրենց ընտանիքների համար: «Այս տնտեսական ազդակը,- ըստ զեկուցաբերների, եղրակացնում է Բրուտեանը, կարեւոր պատճառ է, որ քրդերը թշւառութեան մէջ իրենց բնագդական քալանի ու բռնութիւնների բաւութեան նոխազ դարձնեն քրիստոնեաներին...»¹⁶⁸:

Ի՞նչ թիւ էին կազմում «քաքուն» հայերն այս ժամանակահատում: Այս ուղղութեամբ մեր տրամադրութեան տակ է մի շատ կարեւոր փաստ, որը մեր կարծիքով իիմնաւած է Ստամբուլի «Նոր Սարձարա» օրաթերթի աշխատակից Կ. Մուրատեանի տվեալների վրա:
Այս թիւ էլլի կազմում «քաքուն» հայութեան առաջական պահի կոմիտէի Ասոյն տեղում:

160.Ալիք, Թեհրան, 1973, սեպտեմբերի 23:

161.Սովետական Դայաստան, Երեւան, 1983, ISSN 0131-6834, թիւ 6, էջ 31:

162.Ալիք, Թեհրան, 1976, մայիսի 25:

163.Նոյն տեղում:

164.Սիմոնեան Դ. Լ., Թուրք-հայկական յարաթերութիւնների պատմութիւնից, Երեւան, «Դայաստան», 1991, էջ 572:

54

165.Կիրակոսեան Զ., Երիտրութերը պատմութեան դատաստանի առաջ (գիրք երկրորդ), Երեւան, 1983, էջ 428:

166.Քեմալ Եալչին, Դոգիս քեզմով կը խայտայ, քարգմանեց գարեգին արք. Պերծեանը, Երեւան, 2003, էջ 347:

167.Ալիք, Թեհրան, 1984, մայիսի 5, թիւ 13512:

168.Նոյն տեղում, 1980, մարտի 3, թիւ 12338:

169.Դայրենիք, Բուստոն, 1961, ապրիլ, Լթ տարի, թիւ 4, էջ 80:

55

Մուշալերով այժմ (իմա 1975 թ.) Թուրքիայում ապրող հայերի թւաքանակը հասնում է շուրջ 250 հազար մարդու»⁷⁰:

Իրանցի հետազօտող Արդուլիսուսյան Սաահյեանն իր աշխատութեան մէջ այս նոյն թւաքանակը հաստատող տեղեկանք է մէջբերում «Հայրենիքի Զայն» թերթից, բայց կասկած է յայտնում, որ «Թուրքիայի պարագայում 250 հազարը շատ կասկածելի թիւ է, ուրեմն իր մէջ պիտի ընդորկի բազմաթիւ «կամոֆլած» հայերին, որոնք թուրքական անուններ ունեն եւ հսկանացել են հետապնդումներից ու հալածանքներից խուսափելու համար»⁷¹:

Յայտնած կասկածը փարատելու համար Գրիգոր Աւագեանն էլ մէջտեղ է դնում «Քաքուն» հայութեան իրողութեան փաստը եւ այս կապակցութեամբ բազմաթիւ, տարաբնոյք եւ յաճախ հակասական տեսալներին ի տես, իր աշխատութեան մէջ եղուսկացնում է. «Ո՞րն է այդ տեսալներից ստոյգը: Մեր կարծիքով անշուշտ 250 հազարը: Դեռ աւելին. նրա կարծիքով Թուրքիայի գիղական բնակավայրերում (յատկապէս արեւելեան Վիլայեներում) ապրում են մեծ թուու հայեր, որոնք, սակայն մի կողմից վայի ազդեցութեան տակ թաքցնում են իրենց ազգային պատկանելութիւնը, իսկ միևնույն կողմից կտրուած լինելով աշխարհից եւ ապրելով խիստ ծեկուսացած կեանք, պատկերացում է չունեն հայերի գոյութեան (գոյատեւման) մասին եւ անտարեր կերպով գրում են թուրք. բայց մեխանիկորեն շարունակում են պահպանել ազգային որոշ սովորութիւններ եւ աւանդներ: «Այստեղ շատ գիլերում, - Եղուսկացնում է Աւագեանը, - շարունակում են ապրել քրիստոնեայ հայեր, որոնք խնամքով քաքցնում են իրենց եւ ազգային եւ կրօնական պատկանելութիւնը (ընդգծումներ մերն եւ Կ.Խ.):»⁷²:

Ահա Գրիգոր Աւագեանի այս լրացուցիչ բացատրութիւնները սպառիչ են համոզելու համար, որ նշած թւաքանակը (250 հազարը) գերազանցապէս առնչում են «Քաքուն» հայերին:

Մի յատկանշական փաստաթղթի լոյսի տակ առաւել պարզուում է հայութեան «խնամքով թաքնելու» երեւոյքը: Այսպէս՝ Քերեմ Օկտեմն իր «Թուրք Հայրենիքի ստեղծումը՝ արդիականացումը, ազգայնականութիւնը եւ աշխարհագործութիւնը՝ Հարաւ-արեւելեան Թուրքիայում՝ 19-րդ դարավում եւ 20-րդ դարում» աշխատութեան մէջ վեր հանելով Ուրֆա քաղաքի բարոյա-հոգեբանական եւ պատմա-ծաշկութային նշանակութիւնը հայ ժողովրդի համար՝ գրում է. «Հայկական եւ Միջիանական համայնքների անդամներն ապրել են քաղաքում մինչեւ 1970-ական թականները, երբ, ըստ տեղացիների, մահացաւ, քաղաքի վերջին հայը

170.Աւագեան Գ. Ե., Հայկական ՍՍԴ բնակչութիւնը (Տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրութիւն), Երեւան, 1975, էջ 77:

171.Սաահյեան Ա., Աշխարհի ժողովուրդները (պարսկերն), Թեհրան, 1983, էջ 173:

172.Աւագեան Գ. Ե., Հայկական ՍՍԴ բնակչութիւնը (Տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրութիւն), Երեւան, 1975, էջ 77-78:

թիշկ Վանեսը»: Ապա շարունակում է Օկտեմը. «Ըստ մի շարք հետազոտութիւնների ու փաստաթղթերի, այսօր առնւազն 200 եւ հաւանաբար դեւի ծագումով հայ ընտանիքներ ապում են Ուրֆայում: Նրանք իսլամացւած են, ունեն բրձական անուններ եւ հանրութեան մօտ խուսափում են որպէս հայ ներկայանալուց: Երբ հայկական եկեղեցին մզկիթի էր վերածում 1990-ականների սկզբում, աւելի քանի 200 բողոքազրեր, ի բողոք այդ վերածման, հասցեագրւեցին Ուրֆայի նահանգապետին, որոնց ընթացք չորեց անստորագիր լինելու պատրիակով»⁷³:

Այս կարեւոր վկայութեամբ պարզ է դառնում «Քաքուն» հայութեան ազգային գիտակցութեան ու նրանց հաւաքական յանձնառութեան չափը, ազգային գոյատեւման բարդ, աննպաստ եւ դժոնակ պայմաններում: Պայմաններ, որոնք վերջին հաշուկ, տեղահանութեան համար լուրջ պատճառ կարող էին հանդիսանալ:

Պոլսահայ «Ժամանակ» օրաթերթի 1976 թ. համարներից վեցրյած տեղեկութիւնների համաձայն՝ 120 հոգուց բաղկացած սասունցի 16 ընտանիք ժամանել են Պոլսի թշուագոյն վիճակում: Արարկիրում կան 450 անչափահաս երեխաներ, որոնցից միայն 200-ը հնարաւորութիւն ունեն վարժարան յաճախելու: Ակնի եւ շրջակայի հայ բնակչութեան թիւը հասնում է 190 հոգու, որոնցից 40-ի մասնութեանը գրկած են կրթութիւնից: Դիվրիկի եւ շրջակայի հայերի թիւը հասնում է 200-ի, որոնց մէջ կան մօտ 60 արհեստաւորներ»⁷⁴: Սոյն ժամանակահատւածում ննան արտահոսքը յաճախ են պատահել յատկապէս Արեւմտահայաստանից:

Ստեփան Պողոսեանն իր «Պանթուրքիզմն երեկ եւ այսօր» աշխատութեան մէջ խորհրդային պատճառաբան և. Խ. Մախմուտովի տեսալների հիման վրայ յայտնում է, որ 1970-ականներին Բայեզիդի թնակիչների 58.2, Բիթլիսի 74.4, Դիարբեքիրի 68.8, Էլազիդի 52.8, Ջաքքեարի 88.9, Սունդի 74.1, Վանի 76.6 տոկոսը քրդեր են: Ապա վկայակոչելով «Ազգակի» 1977 թ. նոյեմբերի 8-ի համարը՝ անշատ այսօր աշխատութեան մէջ խօսում Արարատի բնակչութեան 64 տոկոսը, Բիթլիսի 69, Բիթլիսի 69, Սունդի 99, Ուրֆայի 61, Դիարբեքիրի 69, Սարդինի 92 տոկոսը»⁷⁵:

Լեզուական պատկերի մասին նոյնպէս ակնարկում է Զրիստինա Կոււկումնենն իր «The Invisible War in North Kurdistan» (Աներեւոյք պատերազմ հիւսիսային Բրդստանում) ուշագրաւ աշխատութեան մէջ, ուր մէջբերելով «Զոմհուրիերի» 1966 թ. յունիսի 31-ի համարի տեսալները.

173. Oktem Kerem, Creating Turk's Homeland: Modernization, Nationalism and Geography in Southeast Turkey in the late 19th and 20th Centuries, University of Oxford, 2003, p. 12:

174.Պատմա-քանանահրական հանդէս, Երեւան, 1977, թիւ 1(76), էջ 256:

175.Պողոսեան Ա., Պանթուրքիզմն երեկ եւ այսօր, Երեւան, 1990, էջ 40:

պարզում է, որ թուրքերն չի խօսում Մարդինի 91 տոկոսը, Սղերդի 87, Յաքերի 81, Դիարերի 67 եւ Բիրլիսի 66 տոկոսը¹⁷⁶:
Որոշ կրծատումներով ի մի ենք բերում սոյն տոկոսային տևալները (Աղ. 5):

Վիլայետ	Թուրքերն չխօսողների յարաբերականութիւնը			Թուրքերի թային յարաբերակցութիւնը ըստ Մահմադովի
	ըստ Ազգակի 1977 թ.	ըստ Ազգակի 1977 թ.	միջին	
Բայեզիդ	-	-	-	58.2
Բիրլիս	66	69	67.5	74.4
Դիարերի	67	69	68	68.8
Էլազիզ	-	-	-	52.8
Ջաբարի	81	-	81	88.9
Սղերդ	87	99	93	74.1

Աղյուսակ 5

Եթե կանգ ենք առնում Սղերդի պարագայի վրա, բերած տևալներից պարզում է, որ Սղերդի բնակչութեան առնւազն 20 տոկոսը քուրդ չէ եւ թուրքերն էլ չգիտի: Տրամարանական մտահանգումն կարող է լինել այն, որ այդ հատուածը, ամենավատ պարագայում քրդախոս քայց ոչ-քրդական եթենկական խմբի է պատկանում:

Այս պատկերն առաւել ճոխանում եւ հետաքրքրական է դառնում, եթե վերում նշաւ «Չոմհուրիերի» 1966 թ. յունիսի 31-ի համարի տևալները համենատում ենք Յ. Յ. Գալստեանի «Քրդական հարցի արտացոլումը ժամանակակից թուրքական մամուլում» աշխատութիւնում կազմած պատկերը, ուր, իհմք ընդունելով Ֆիլիզ Բարաջանի դարձեալ «Չոմհուրիերի» 1968 թ. յունիարի 15-ի համարում լոյս տեսած տեղեկատութիւնը, քրդալեզու բնակչութեան յարաբերականութիւնը Սղերդի պարագային գնահատում է 71, Յաքքարի պարագային 80, Մարդինի պարագային 67, Դիարերի պարագային 66, Բիրլիսի պարագային 64 տոկոս եւ այլն¹⁷⁷: Սոյն տևալները ի մի ենք բերում հետեւեալ պատկերում (Աղ. 6).

176. Koivunen K, The Invisible War in North Kurdistan, Yurmala, Latvia, Gender and Multiculturalism, June 7-13, 1998:

177. Գալստեան Յ. Յ., Քրդական հարցի արտացոլումը ժամանակակից թուրքական մամուլում, «Մերձաւոր եւ Սիրիան Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ» ժողովածու, Երեւան, 1975, էջ 252:

Վիլայետ	Ըստ «Չոմհուրիերի» 1966 թ.		Ըստ Չոմհուրիերի 1968 թ.
	ընդհ. բնակչու- թիւն (հազար մարդ)	քրդալեզու բնակչութ. (տոկոսը)	
Սղերդ	232	71	87
Խարյարի	68	80	81
Մարդին	353	67	91
Դիարերի	402	66	67
Բիրլիս	129	64	66

Աղյուսակ 6

Սոյն համենատութիւնից էլ պարզում է, որ Սղերդի բնակչութեան 16 տոկոսը (առնւազն 37 հազար մարդ) ոչ թուրքալեզու է եւ ոչ քրդալեզու: Իսկ Մարդինում կա 24 տոկոսանոց այդպիսի մի զանգած (առնւազն 85 հազար մարդ): Արդեօք դրանք հենց «քաքուն» եւ «պաշտօնական» հայերը չեն՝ (դեռ չենք խօսում միևնույն վիլայեթների (մարզերի) մասին, որոնց պարագայում տևալների մերձութիւնը ներադրում է որոշ հաւանական վլրամբեր):

Եզրական պատկանելութեան մասին թուրքական աղբիւրներից բաղադր տևալների հիման վրա եզրակացութիւնները լիարժեք եւ բաւարար կարելի չեն համարել, եթե անշուշտ դրանց չկցւին կենդանի վլայութիւններ: Արեւմտահայաստանում գոյատեած «քաքուն» հայութեան մասին ահաւասիկ մի երկու վկայութիւն կապահանգամատածին:

Լուսանկարիչ Շիրազը (Յովհաննես ճերեծեան) իր հարցազրոյցում պատմում է 1971 թ. իր տեսածները Իգդիրի մասին. «Եթե օք թուրք իհրը հիւրընկալը» վստահացաւ, որ մենք հայ ենք՝ ասեց, որ իրենց դրացու տիկինն էլ հայ է...»¹⁷⁸:

Սասնոյ լեռնաստանի մասին իր յուշերում լուսանկարիչն ասում է. «146 գիլերով կակա մի լեռնաստան է Սասունը, ուր դեռեւ 11-ը ամրողութեամբ հայ են»: Ավա պատմում է թնիկ սասունցի Քեշիշեան տոհմի հետ իր հանդիպման մասին, եւ այն, որ աւանդական այդ ընտանիքի նահապետը խնդրել է իհենից, որ իր լուսանկարը յանձնի «հայոց քագաւորին» ու կարողիկոսին եւ նրանց ասի Քեշիշեան տոհմի հայ մնալու մասին: Սասնոյ լեռների վրայ, «ասկէ եսք,- ասել է նահապետը, չեմ գիտեր, թինչ կը պատահի այս երեխաներուն հետ...»¹⁷⁹:

Զորավար Գուրսելի զինուրական իշխանութեանը յաջորդող այս ժամանակահատածում «քաքուն» հայութեան մօտ, ինչպէս նշել էինք,

178. Արմենիա, Սիլիոն, 1987, ապրիլ, էջ 30:

179. Նոյն տեղում, էջ 31:

ստեղծում էր քաղաքական խաղաղ գործունեութեան հնարաւորութիւնը Այս մասին եւս մի այլ «Քաքուն» հայ, թենալ Եալչինին պատմում է այդ դաշտի ծեւաւորման մասին. «1970 թ. յաջորդող օրերին կարծես մի թի հանգիստ էինք: Աղիեամանի, թեահրայի մեջ յառաջադիմական կազմակերպութիւններ էին կազմակերպութիւնների մեջ եւ քուրդ, եւ «մերինների» երիտասարդները համախմբելով ընդհանրական նպատակների էին պատրաստում: Քուրդ երիտասարդները «մերինների» երիտասարդներին առաջարկում էին, որ իրենց ծագումը չծածկեն, ինքնուրիւնն ու հաւատքը քացայախ կերպով յայտարարեն: Մյա համար ապահովութիւն էին տալիս: Այս բարեացակամ, անկեղծ, յետին նպատակներից հեռու մթնոլորտում քազմաքի երիտասարդներ սկսեցին ասել. «Ես հայ եմ, ես ծագումով հայ եմ, իմ կրօնը տարբեր է»: Կարծես կամաց- կամաց մթնոլորտ էր կազմում, ուր մարդիկ կարողանային հանգիստ շնչել, անվախ պառկել ու խնդալ («մերիններ»)-ից պիտի հասկանալ «Քաքուն» հայեր- Կ.Խ.»¹⁸⁰:

Խաղաղ գործունեութեան հնարաւորութիւնը «Քաքուն» հայութեան համար երկար չէր կարող դիմանալ՝ թուրքիայի քաղաքական դաշտում, որը յատկապէս սոյն ժամանակահատւածում խիստ անկայուն էր աջից կենտրոն տատանող, «գորշ զայլական» շանտաժներով լեցուն եւ քաղաքական ազդեցութեան զանազան լժակներով կառավարուղ: Այս վերաբերեալ նոյն հայը շարունակում է պատմել. «Այս մթնոլորտը սակայն յաճելի չէր ոմանց եւ մի շարք քաղաքական շրջանակներից: Սկսեցին արծարծել քամբասանքներ, «հայերը կազմակերպում են», «կեալուրները բացելու են իրենց եկեղեցիները», «հայերն իրենց պապերի ինքերը ետ են ուզելու», «եւ այլն»¹⁸¹:

Թէ ինչքանով են համատարած եղել «Քաքուն» հայութեան քաղաքական ցանկութիւնները, տրամադրութիւններն ու կամքը, դժար է պատասխանել ճշգրտողին: Սակայն կարենի է միանշանակ ասել, որ երիկական ինդուվիդալիզացիայի նրա բնական ծգտումների կոպիտ ճգնումը, նրա դէմ շարունակող թուրքացման քաղաքականութիւնը, մարդկային իրաւունքների ոտնահարումը եւ երնիկական խորականութիւնը նրան մղում էին հակապետական կոշտ եւ անտագոնիստական պայքարի ուղիներ, ինչը ակնառելի է դառնում յետագայ ժամանակահատւածում:

Զ- 1980 - 1991 թթ.

Եթէ 1960 թ. գինորական յեղաշրջումը առաւելաբար միտւած էր «Ժողովրդավար կուսակցութեան» գլխաւորութեամբ կազմած իշխանութիւնների տապալման, 1980 թ. յեղաշրջումն, ինչպէս ներքին քաղաքական, այնպէս էլ տնտեսական, հասարակական եւ յատկապէս

180. Թենալ Եալչին, «Դոգիս քեզմով կը խայտայ», քարգմանեց Գարեգին արք. Պերճնանը, Երեւան, 2003, էջ 346:

181. Նոյն տեղում:

արտաքին քաղաքական հիմնական փոփոխութիւններ առաջացրեց թուրքականը: Սակայն քուրդ վերլուծարամների կարծիքով գօրավար թենան էրենին գլխաւորած իշխանութիւնների մեծագոյն հիմնահարցերից հանդիսացաւ հայկական հարցը: «Թերզումանը» իր 1988 թ. յունիսի 28 համարում, «մեծագոյն հոգը՝ հայը» խորագրով յօդածում հաստատելով մարդու մասնակիութեանը, ակնարկում է այն հայկական հարցի առաջնային նշանակութեանը, ակնարկում է այն կարեւոր իրողութեանը, ըստ որի «Նախագահ էրենը ութ տարուց ի վեր գրալել է այս հարցով»¹⁸²:

Քրդական միջավայրերում վերապրող, քրդական կենցաղ վարող հայութեանը թրքացնելու փորձերն ապարդիւն էին անցնում, թերեւս այն պարզ պատճառով, որ այդ փորձերն անմիջականորեն հանդիպում էին առաջին հերթին հենց քրդական հակազդեցութեանը: Վահան Բայրուրեթեանը իր հերինակած «Հայ-քրդական յարաբերութիւնները օսմանեան կայսերութիւնում» աշխատութեան վերջաբանում, ուր ընարկում է քրդական հարցը թուրքիայի ժամանակակից պայմաններում, վերլուծել է բռնի թուրքացման քաղաքականութեան անձարկութիւնը այս ժամանակահատւածում, եւ եզրակացնում է, թէ ինչպէս այդ քաղաքականութիւնը բախւում էր քուրդ զանգվածների աճող դիմադրութեան հետ¹⁸³:

Մյո իմաստով առաւել հաշւարկած եւ համակարգութ քայլերով է բնորոշուում էրենի գլխաւորած իշխանութիւնների վարած հակահայ ուղամավարութիւնն այս շրջանում, երբ թրքացման քաղաքականութիւնն փոխարեն, առաւելաբար որդեգրուց իշխանացման քաղաքականութիւնն:

Իհարկէ պիտի ասել, որ այս «իշխանական քաղաքականութեան» բուն եկակետները միայն հայութեան հարցին չին առնչում: «1980 թ. զինուրական յեղաշրջմամբ գործի անցած իշխանութիւնները.- Կարդում Շնկերվար-ժողովրդավար ժողովրդական Կուսակցութեան» (SHP) ներ 1991 թ., ապրիլի 23, երկրում տիրող զաղափարական պարապութիւնը փորձեց լցնել կոօնով»¹⁸⁴: Այս վակուումի լցանիւթից, խոշոր բաժին էր յատկացել ի շարս ոչ-իսլամների նաեւ բնականաբար, խոշոր բաժին էր յատկացել ի շարս ոչ-իսլամների նաեւ հայութեանը: Օգալի կրթական նախարարի օգնականներից, Զեմիլ Գրվանջը, 1987 թ. իր ասուլիսում, նկատել էր տալիս «ոչ-իսլամների գովանջը, 1987 թ. իր ասուլիսում, նկատել էր տալիս «շահագրգուածութիւնը» երկրի պաշտօնական կրօնի զաւակներն եւ այդպիսով հիմնաւորում էր կրօնի դասաւանդութեան ներառումը նախարարութեան ծրագրերում¹⁸⁵:

Ազար գիւղի (Յերենտ, Սասունի մօտակայքում) շուրջ 600 հայ բնակչութեան իշխանացումը, 1983 թ. ամռանը, կամ Աղիեամանի Կերկը գիւղաբաղաքում, 19 հայերի կրօնափոխութիւնը 1984 թ. աշնանը,

182. Դրօշակ, Արենք, 1988, օգոստոսի 3, էջ 38:

183. Քայլուրեթեան Վ. Ա., Հայ-քրդական յարաբերութիւնները օսմանեան կայսերութիւնում, Երեւան, 1989, էջ 331:

184. Դրօշակ, Արենք, 1991, մայիսի 22, էջ 62:

185. Դրօշակ, Արենք, 1987, փետրվարի 4, էջ 36:

լաւագոյն փաստարկը կարելի է համարել իսլամացման քաղաքականութեան կապակցութեամբ¹⁸⁶.

Աջար գիւղի բնակչութեան կրօնափոխութեան մասին ակնարկում է նաեւ ֆրանսիակայ հետազօտող՝ Արման Գասպարը իր հեղինակած «Դայ ազգային ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը» աշխատութեան մէջ, աւելացնելով, որ այդ կապակցութեամբ, տարբեր մեկնարանութիւններով, յայտնել են օրին թուրքական եւ սփիտքեան մի շարք լրատամիջոցները¹⁸⁷:

Մի «քարուն» հայ նկարագրելով այն ժամանակահատածին բնորոշ, 1980 թ. սեպտ. 12-ի զինուրական յեղաշրջման հետքերն ու դրան հետեւանքով առաջացած կացութիւնը այսպէս է վկայում. «յեղաշրջումից յետոյ «մերինները» եւ ասորիններն ահաւոր ճնշումների եւ նախատինքների ենթարկեցին: Ապահովութիւն, խաղաղութիւն, բարեացականութիւն չննաց: Դայերին եւ ասորիններին նախատողները «վերից» քաջալերուում էին մի շարք քաղաքական շարժումների կողմից»¹⁸⁸:

Նշած ահաւոր ճնշումն իհարկէ միայն քաղաքական բնոյք չուներ: Եւրեւան իսլամացման քաղաքականութեան առընթեր, յատկապէս արեւելեան տարածքներում կարգադրուել է հակաֆեռուական մի կացութածեր, որը մեծապէս ազդել է հայութեան վրայ: Այսպէս քուրդ աւանդական օջախներում ստրուկի կարգավիճակ ունեցող հայ «ֆլա»-ները պաշտպանուում էին իրենց քուրդ աւատապէտ «Աղա»-ների միջոցով ընդուն ամէն տեսակ սպառնական արտաքին ազդակների¹⁸⁹:

Խոշոր աւատապէտական յարաբերութիւնների քայլայման պայմաններում երեկու հայ «ֆլա»-ները այլևս պարտադրուեցին մշակի կարգավիճակով աշխատանքի անցնել քուրդ միջին գիւղացիութեան մօտ, ինչը մեծապէս խոցելի էր դարձնում նրանց հասարակական, կրօնական եւ մինչեւ իսկ ֆիզիկական առումով: Անա իրայասուկ այդ հասարակական կացութիւնն էլ իր հերթին բացասական հետոք է բողել յատկապէտ քուրդաշատ նահանգների հայութեան արտահոսք հարցում:

Թրքահայ մամուլի էջերում յաճախ կարելի է հանդիպել 1960-ական եւ 70-ական թականներին Սալարիայում, Սասունում, Սեբաստիայում եւ այլուր ծնած, 80-ականներին հասարակական կեանք թեւակոխած եւ Ստամբուլում հաստատած հայերի անձնական կենսագրականների, որոնք այսպէս թէ այնպէս վկայում են հայութեան այս որոշակի արտահոսքը արեւելեան քաղաքներից եւ գիւղերից: Անաւասիկ դրանցից մի քանիսը.

186. Hofmann Tessa, Armenians In Turkey Today, October 2002, p. 18.

187. Գասպար Ա., Դայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, քաղաքանեց եւ խմբագրեց Արմեն Տօնոյեանը, Լու Անջելոս, 1989, էջ 112:

188. Թեմալ Եալչին, Դոգիս թեզմով կը խայտայ, քարգմանց Գարեգին արք. Պերծեանը, Երեւան, 2003, էջ 346:

189. Hofmann Tessa, Armenians In Turkey Today, October 2002, p. 17.

-Յակոր Չըքար. Ծննել է 1965 թ., Մալաթիայում: Նախնական ուսումը ստացել է Բանկալիի Մխիթարեան վարժարանում¹⁹⁰:

-Համբար Ազգայա. Ծննել է 1965 թ., Սւազի (Սեբաստիոյ) գանգալ գիւղում: Աւարտել է պատրիարքարանի Սուրբ Խաչ դպրեվանքը¹⁹¹:

-Մելինէ Պէյլերեան. Ծննել է 1958 թ., Էրգինջանում (Երզնկայում): Աւարտել է «Էսայեան» աղջկանց վարժարանը¹⁹²:

-Ետիալ Թեմելի. Ծննել է 1969 թ., Տիգրանակերտում: Աւարտել է պատրիարքարանի Սուրբ Խաչ դպրեվանքը¹⁹³:

-Արամ Ղեմիր. Ծննել է 1965 թ., Սասունում: Ներկայիս «Ս. Փոկիչ» ազգ. հիւանդանոցի հոգարադուրեան անդամ է¹⁹⁴:

Սոյն արտահոսքին առընթեր, պետական համագրանշ ծրագրով, երնիկական տարրեր ծագումներով ցեղախմբերով են բնակեցւել հայաբնակ եւ հայապատկան տարածքները յատկապէս Արմետեան Դայաստանում: Ըստ Արման Գասպարի Աֆղանստանից կիրագիծական քաղմարի խմբեր են բնութեան վանի հիւսիսային շրջանների ամայացած գիւղերում: «Թրքա-թուրանական այս քաղաքականութիւնը-յայտնում է Արման Գասպարը, կշարունակի մինչեւ որ անքող շրջանը հայագերծիլի»¹⁹⁵:

Ընդգծենք, որ հայապատկան տարածքները թրքածին ցեղերով բնակեցման գործողութիւնը, ինչպէս օսմանական այնպէս էլ հանրապետական Թուրքիայի հակահայ քաղաքականութեան նշանակալից երեսներից է համարում, որը այս ժամանակահատածում էլ հերթական անգամ կիրարուել է:

Այս ժամանակահատածում կիլիկիայի հայութիւնը (տարածք՝ «գ»), պահպանելով հանդերձ ազգային-հանայնքային իր դրածքը, այնուամենային դէմ հանդիման է կանգնել պետականօրեն յարուցած դժւարութիւնների: Ընորիք արք. Գալուստեանը 1987 թ. Թուրքիայի վարչապէտ Թուրգուտ Օզալի հետ վարած իր բանակցութիւնների մասին հանրութեանը բացատրական տալով, ակնակում էր. «Ասւեց նաեւ, որ Թրքիանի հայոց եկեղեցին, իր կալվածներով, սոնմարներով եւ դրամներով գրաւել է Վագֆի Վարչութեան կողմից, առանց որեւէ պատճառարանութեան, երբ տեղի վրա դեռ ունենք 18 հոգիանոց հայ համայնք»¹⁹⁶:

Ընորիք արք. Գալուստեանի երրորդ եւ վերջին այցելունը գաւառահայութեան, տեղի է ունեցել 1989 թ., որի ընթացքում ի յայտ են գաւառահայութեան, տեղի է ունեցել 1989 թ., որի ընթացքում ի յայտ են

190. Սուրբ Փոկիչ, Ստամբուլ, 1985, մարտ, 36-րդ տարի, թիւ 425, էջ 3:

191. Սուրբ Փոկիչ, Ստամբուլ, 1985, նոյեմբ., 37-րդ տարի, թիւ 433, էջ 5:

192. Նոյն տեղում, 1986, օգոստոս, 37-րդ տարի, թիւ 442, էջ 3:

193. Նոյն տեղում:

194. Սուրբ Փոկիչ, Ստամբուլ, 2001, յունիս-յուլիս, թիւ 620-621, էջ 9:

195. Գասպար Ա., Դայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, քաղաքանեց եւ խմբագրեց Արմեն Տօնոյեանը, Լու Անջելոս, 1989, էջ 112:

196. Արմենիա, Սիդնեյ, 1987, ապրիլ, էջ 28:

Եկել նորութիւններ: Այսպէս Սամսուն գիշերելուց յետոյ, յունիսի 8-ին առաւտեան պատրիարքը անցել է Մէրզիֆոն ապա Կիւմիւշաճըգօյ, ուր բոլոր հայերը, թերեւս մի քանի հոգու բացառութեամբ, լաւ հայերն են խօսում ու հասկանում են. «15 ընտանիքներ կան այնտեղ, բոլորն էլ կրում են հայկական անուններ: Ներկայիս 12 հայ ընտանիքներ են ապրում Պողազեանի մէջ, շուրջ 40-50 հոգի»¹⁹⁷:

Սոյն ժամանակահատւածում իշլամացման քաղաքականութեան դամուկեան սուրբ գլխին, ահա «Անատոլիայի» հայը, «Ներքին ամուսնութեան» կամ «օտարի չերթալու» մարտավարութեամբ, մաքառում է իր ազգային նկարագրի պահպանման համար: Տիգրան Դաւթեանն իր ուղեգործութիւնների մէջ, 1989 թ., բնութագրելով Սեբաստիայի հայութեան կեանքը, նյոյնպէս հաստատում է շրջանի հայութեան կամքը իշլամացման քաղաքականութեան դէմ: Այսպէս. «Սևազուն ներկայիս ապրուն է 25 տուն հայ. առիթ ունեցանք նրանց մէջ լինելու: Սեբաստիայի եւ միւս քաղաքների հայերը մէծ ճիզ են թափում հայկական օջախ կազմելու եւ խուսափում են ոչ-հայերի հետ ամուսնանալուց. տեղում հանդիպեցինք երկու երիտասարդի, որոնք հայ կին ունենալու որոշումով հարս էին թերել երգումից եւ հեռաւոր Խսենդերունից»¹⁹⁸:

Այս խուսափողական մարտավարութեան կիրառան մասին մի «քարուն» հայ պատում է Քենալ Եալշինին. «Քոյրս մի գեղեցիկ աղջիկ էր: Յօրս մօտ մեծացած, տարիներով իրեն ծառայած մի քուրդ աղա քրոջս իր տղայի համար հարս ուզեց: Յայրս ամեն բան նկատի առնելով չհամաձայնեց: Յետոյ վախենալով, որ կարող է փախցնեն քրոջս, նրան կարգեց «մերիններից» մի ճաղատ, տգեղ, աղքատ ու որք հովիտի հետ»¹⁹⁹.

Այստեղ պիտի հաստատել, որ այս երեւոյթը ազգային դիմագօնի պահպանման նպատակին է միտւած եւ անշուշտ չունի կրօնական ելակետ: Երեւոյթ, որ առկա է ինչպէս «պաշտօնական» եւ «քարուն», այսպէս էլ մի տասնեակ սերունդ առաջ անգամ «փայամացած» հայութեան մօտ: Գառնիկ Ասատրեանն ու Արման Կիրակոսեանը համշենահայութեան մօտ այս երեւոյթի առկայութեան մասին գրել են. «Թուրքիայի տարքում պահպանած հայերի թիւն կարելի է դասել նաեւ, այսպէս կոչւած համշենացիններին, որոնք լիովին պահպաննեցին իրենց բարբարը եւ սովորութիւնները: Նրանք ապրում են մեկուսացած եւ խուսափում են քուրքերի հետ խառն ամուսնութիւնից (ընդգծում մերս է. Կ.Խ.)»²⁰⁰:

Արեւմտեան Յայաստանում (տարած՝ «ա») բնակող «քարուն» հայութիւնը, այս ժամանակահատւածում էլ, շարունակել է իր խիստ մեկուսացած կեանքը: «Զարթօնքի» 1984 թ. փետրվարի 23-ի համարն այդ շրջանի հայութեան մասին տալիս է մի դիպուկ տեղեկութիւն. «Վանի

շրջանի բնակիչները յայտնում են, որ լեռների բարձրադիր գիւղերի մէջ հայեր կան»²⁰¹:

Համլէն եւ Պրօն իրենց հեղինակած «Վերագտնաած յիշատակը» աշխատութեան մէջ, որ լոյս է տեսել 1983 թ., մէջբերել են Վանում 1956 թ. ծնւած եւ Ֆրանսիա հաստատւած մի հայի վկայութիւնները երգումում, Կարսում եւ այլ քաղաքաներում եւ գիւղերուն բազմաթիւ հայ ընտանիքներին իր հանդիպումների մասին»²⁰²:

Այս ժամանակահատւածի հայութեան ցրածութիւնը պատկերացնելու համար ասենք, որ մինչեւ իսկ Ներսիմի մօտակայքում գտնող Խոզաք (Յոզաք) եւ Փերի (Ակրազաք) երկու պատմական գիւղաքաղաքներում էլ, ըստ Թ. Խ. Յակոբեանի, գոյութիւն են ունեցել մի քանի հայ ընտանիքներ»²⁰³:

Երենի յնաշշազական իշխանութիւնների իրականացրած կարեւոր «առաքելութիւններից» մէկը այն էր, որ քաղաքական, հասարակական եւ նոյնիսկ քրեական ամբաստանութիւնների լայնատարած հրապարակային տարափով, շարքից հանւեցին հաւանական հակառակորդներն ու անցանկալի տարրերը: Այդ բրում «մաքրագործման» ենթարկեցին նաև ոչ-բրուր էրնիկական պատկանելութեամբ բազմաթիւ պետական գործիչներ: Միթ-ի 221 հոգանոց «գաղտնի տեղեկագրում», որը իր անցել է «Սոքքա» շաբաթաթերթի աշխատակիցների ծեռքը 1988 թ., հանդիպում ենք Արտաշ Բարբուղեանի, Ամիկ Սվաճեանի եւ Շիւրու Բալչիի անուններին: «Սոքքա» շաբաթաթերթը «Պուտոյ ապահովութեան պետ» Շիւրու Բալչիի մասին յատուկ շեշտադրութեամբ գրում էր, որ նա «ծնել է Դիվիլիկիի (պատմական Ղերիկը) հայկական գիւղերից մէկում եւ ծագումով հայ է»²⁰⁴:

Հասկանալի պատճառներով Քրդական շարժման նկատմամբ չէր կարող անտարբեր մնալ «քարուն» հայութիւնը: Յատկապէս թուրքիայի հարաւ-արեւմուտքում (տարածներ՝ «ա» եւ «բ») բռնկած քրդերի ազատագրական զարթօնքը անմիշական ազդեցութիւն էր թողնում հայութեան վրայ:

Այս առնչութեամբ յատկանշական է 1989 թ. նոյեմբերին Թուրքիայի պետական հեռուստատեսութիւնը հաղորդումը, ընդ որում ասւում էր. «Նոյեմբերի 27-ին Յաքբեարի Յիւլսեբուա գաւառի Իրիեաք գիւղում ահաբեկչական յարձակում է կատարել, որի ընթացքում գոհել է 28 մարդ: Գիւղից հեռանալիս, ահաբեկչները մի թուրցիկ են թողել»

201.Պատմա-քանասիրական համդէս, Երեւան, 1985, թիւ 1(108), էջ 221:

202.Գասպար Ա., Յայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, բարգմանց եւ խմբագրեց Արմեն Տօնոյեանը, Լու Մնջելոս, 1989, էջ 111-112:

203.Յակոբեան Թ. Խ., Պատմական Յայաստանի քաղաքները, Երեւան, 1987, էջ 147 եւ 247:

204.Դրօշակ, Արենք, 1988, սեպտեմբերի 28, էջ 40:

197.Արմենիա, Սիդնեյ, 1989, օգոստոս, էջ 36-37:

198.Ալիք, Թեհրան, 1989, սեպտեմբերի 19:

199.Քենալ Եալշին, Յոզիս թեզմով կը խայտայ, բարգմանց Գարեգին արք. Պետքեանը, Երեւան, 2003, էջ 350:

200.Ալիք, Թեհրան, 1989, նոյեմբերի 19:

սպանածներից մեկի մօտ: Պարզւել է, որ այդ անձնաւորութիւնը Զենիլ Ծցըն է, ողը ծագումով հայ է»²⁰⁵:

Քրդական շարժումներին հայութեան մասնակցութիւնը, առաւել զգալի է դառնում յաջորդ ժամանակահատածում: Այս երեւոյթը, ոչ միայն ապացուցում է «քաքուն» հայութեան զանգածային ներկայութիւնը նշանած տարածքներում, այլ նաև լաւապես բնութագրում է նրանց հակապետական կողմնորոշումը: Այս մասին հանգամանօրէն կանորադառնաք ստորեւ:

Ե- 1991 - 2005 թթ.

Այս ժամանակահատածի բնորոշ շրջադարձն է կազմում խորհրդային Միութեան վլուգումն իր բոլոր յարակից հարցերով եւ հետեւանքներով: Քաղաքական մի շարք վերլուծարաններ վլուգման պատճառները հիմնականում գտնում են ևս. Միութեան եւ դրա արքանեակային համակարգի տնտեսական սնանկութեան, ռազմական եւ տիեզերական տեխնոլոգիաների աննրցունակութեան եւ տկարութեան մեջ:

Սա իհարկէ, առանձին ուսումնասիրութեան նիւթ է: Սակայն մեր գնահատմամբ վլուգման գլխաւոր եւ առաջնային պատճառներն են հանդիսացել մեկ կողմից՝ խորհրդային համակարգում ազգային-էթնիկական հարցերի առկայութիւնը եւ միւս կողմից՝ տեղեկատական աշխարհի սրընթաց զարգացումները:

Այս երկու գործօններն են, որ ըստ մեզ, ԽՍՀՄ վլուգման պատճառ հանդիսանալուց բացի, յեղափոխական վիճակի մէջ դրեցին բովանդակ տարածաշրջանի իրաւագրկած ազգերին եւ էթնիկական խնդերին իրենց անլոյժ կամ թերի լուծած ազգային հարցերի արժարժան եւ արդար լուծման ուղղութեամբ:

Ահա ազգային ինքնանանաշման համընդիանուր զարթօնը եւ տեղեկատական եւ հաղորդակցական միջոցների աննախադեպ թօփչօք ճակատագրական նշանակութիւն ունեցան մեր նիւթի առարկա Թուրքիայի հայութեան համար:

Թուրքիան և. Միութեան պէս բազմազգ պետութիւն լինելով հանդերձ նոյն ճակատագրին չճատնեց: Սակայն ԽՍՀՄ վլուգումը եւ դրա հետեւանքով խորհրդային հանրապետութիւնների անկախութիւնը կամ վերանկախացումը քաղաքական եւ իրաւական նախադեպ հանդիսացաւ միւս բոլոր բազմազգ պետութիւնների համար: Այդիսով, Թուրքիան ապրեց եւ տակալին ապրում է վլուգման ու տարածքային մասնատման զարիւրելի մղջաւանց:

Թուրքիայի հաւանական վլուգման եւ հոլյային ամրողջականութեան քայլայման ցանկացած ուղի, մեր համոզմամբ, անխուսափելիորէն անցնելու է «հայկական հարցի» ընդմիջից:

«Թուրքիայի համար,- գրում է հայ քաղաքական մտքի վաստակաշատ գործիչ Ուրեն Տէր-Մինասեանը,- հայկական խնդիրը նոյնքան եւ աւելի վլուգման կը համարէր քան քրդականը: Յայ ժողովրդի ազգային գիտակցութիւնը, բարձր մշակոյթը, հայկական դատի միջազգային բնոյթը աւելի համանական կը դարձնէին Յայաստանի քան Բուլղարստանի ստեղծումը»²⁰⁶: Եթէ հայութեան ազգային ներուժի Ուրենի թարկած գործօններին գումարենք նաև անկախ Յայաստանի գոյութեան փաստը, ապա պատահական չպիտի ընկալել բրիտանական եթերնան ընկերութեան (BBC) վերլուծութիւնը, համաձայն որի՝ Թուրքիայում ոչ մի հարց չունի այն աստիճան զգայնութիւն, որքան հայերի ճակատագիրը Օսմանեան կայսրութեան վերջին տարիներում»²⁰⁷: Իսկ այդ հարցը առնազն «ամենազգայունը» չպիտի լինէր, եթէ առնչած չինէր Թուրքիայի ներկայի իրողութեանը եւ ճատակագրական նշանակութիւն չունենար դրա ապագայի վրա:

Այս իհման վրա սոյն ժամանակահատածը տարբերում է միւսներից ոչ միայն իր այժմէականութեան եւ տւեալների համեմատական առատութեան, այլ մանաւանդ Թուրքիայի հայութեան հասարակական կեանքի եւ ազգային-հաւաքական գիտակցութեան բնագաւառներում արտացոլող որակական փոփոխութեան առումով:

Դետեւաբար այս ժամանակահատածի մեր քննարկումներն առաւել տարաբնոյք տեղեկութաբանութեամբ ներկայացնելով, կիործենք կացութիւնը որոշակիացնել մեր բնութագրած տիպերի՝ «պաշտօնական», «իսլամացած» եւ «քաքուն» հայութեան համար:

ԷԱ- «Պաշտօնական» հայութիւն. «Պաշտօնական» հայութեան իրավիճակին անդրադառնալու համար կարեւոր ենք համարում նախ ճշտել նրա թային մօտաւոր պատկերը:

1995 թ. իրատարակված «Յայերն աշխարհում» համարու հանրագիտարանը «պաշտօնական» հայութեան թաքանակը գնահատում է մօտ 10,000²⁰⁸ (Աղ. 7).

	Տեղանուն	Ընտանիք
1	Անկարա	300
2	Մալարիա	120
3	Դիարեքիր (Տիգրանակերտ)	110
4	Սվագ (Սեբաստիա)	72
5	Թորատ (Ելողիա)	29
6	Կայսերի (Կեսարիա)	28
7	Անասիա	36

206. Դրօշակ, Ժընե, 1925, յուլիս, էջ 11:

207. Ալիք, Թեհրան, 2004, դեկտեմբերի 14:

208. Յայերն աշխարհում, Երեւան, 1995, էջ 45:

8	Արարկիր	12
9	Քենալիէ (Ակն)	6
10	Սասունի գիւղեր	69

Աղիւսակ 7

Ակնյայտ է, որ սոյն ցանկից բացառած են պատճական Կիլիկիայի հայաբնակ տեղանունները: Դանրագիտարանում նշած թերը, առնազն Տիգրանակերտի եւ Մալարիայի դեպքում գերազնահատած են եւ Կեսարիայի դեպքում թերազնահատած, իսկ Խարբերդի պէս կարեւոր համայնքը անտեսած է առհասարակ: Դետեւաբար ենթադրելի է, որ հանրագիտարանը օգտագործել է անելի հին քան 1970-ականներին առնչող արդիւրները: Այդուհանքերը հանրագիտարանի այս տեղեկանքը կարեւոր է թէ հայ բնակչութեան թաքանակի այլ համայնքների թիւ ճշտորոշման համար:

Սահմանափակ թուվ համայնքների հայ բնակչութերի թաքանակի վերաբերեա առաւել այժմէական է թում 1997 թ. պատրիարքական ընտրութիւններին մասնակիցների թաքատկերը գաւառական հինգ ընտրատարածքներում²⁰⁹ (Աղ. 8).

Ընտրատարածք	մասնակիցների թիւ
1 Կեսարիա	59
2 Դիարբերի	5
3 Խոքենդերուն	41
4 Քոքիսան	7
5 Վազգը գիւղ	121

Աղիւսակ 8

Դամայնքների թիւն անշուշտ առելին է: «Թուրքիայի հայոց համայնքային օրացոյց»-ը 1991 թ. համապարփակ մի պատկեր է ներկայացրել Թուրքիայի հայութեան ազգային կառոյցների վերաբերեալ: Դրա մի բաժնում պարզում է, որ «Կեսարիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցուն կապւած են Անկարայի, Անասիոյ, Գաստամոնուի, Կիլիչհաճընոյի, Եօզկատի, Պողազլեանի, Սւազի, Թորքատի և Կենտրոնական Անատոլիաի բոլոր համայնքները: Տիգրանակերտի Ս. Կիրակոս Եկեղեցուն կապւած են Սալաթիոյ, Էլազիգի, Բիթլիսի, Սասունի եւ այլ հարաւակերտեան Անատոլիայի հայ համայնքները: Խոքենդերունի Ս. Քառասուն Մամկունք Եկեղեցուն կապւած են Աղիեամանի, Սերսինի եւ այլ հարաւակերտեան Անատոլիայի հայ համայնքները»²¹⁰.

Սոյն քաղաքներում «պաշտօնական» հայութեան բնակութեան կապակցութեամբ եւս մի կարեւոր հաստատման ենք հանդիպում 1998 թ.

209.Նոր Մարմարա, Ստամբուլ, 1998, հոկտեմբերի 12:

210.Արմենիա, Սիդնեյ, 1991, յունիս, ԺԱ տարի, թիւ 6, էջ 7:

Թուրքիայի հայոց պատրիարքարանի դիւանի գեկուցման մէջ, ուր լայն բացատրութիւն է տրւել նորընտիր պատրիարքի գահակալութեան համայնքութեան վերաբերեալ: Զեկոյցի 4-րդ կտի համաձայն «150 հոգիանոց պրոտոկոլի ցանկ»-ում, ի շարու այլոց նկատի էին առնւել «Անկարայի, Կեսարիայի, Ամասիայի, Գաստամոնուի, Կիլիչհաճաճքիւլի, Եօզկատի, Պողազլեանի, Սւազի, Թորքատի, Դիարբերի, Մալարիայի, Էլազիգի, Բիթլիսի, Սասունի, Խոքենդերունի, Աղիեամանի, Սերսինի հայ համայնքների ներկայացուցիչները, որոնք յատկապէս գահակալութեան մասնակցելու համար Ստամբուլ են հրահրուել (ընդգծումը մերն է-կ.և.)»²¹¹:

Այսպէս կարելի է եղրակացնել, որ հայկական «պաշտօնական» համայնքներ գոյութիւն ունեն «Անատոլիայի» 17 մարզերում եւ վարչատարածքներում:

2000 թ. Թուրքիայի հայոց պատրիարքի եւ նախկին կրօնի տեսուչ լիւթիւն Տողանի շուրջ մէկ ժամանոց հեռուստազրոյցում եւս որոշակիորեն ակնարկում է գաւառների հայկական համայնքներին եւ բացատրուում է դրանց համայնքային դժուարութիւնների ու քաղաքացիական բարդութիւնների հարցը: «Այսօր Ստամբուլում ու բովանդակ Թուրքիայում գործող 44 Եկեղեցիներ ունենք, - ասում է Սեսրոպ արք. Մութաֆինանը, - Սրանից քացի կան 14 համայնքներ եւս, որոնց իրենց ապրած տեղում Եկեղեցի չըւնեն, ինչպէս Անկարա, Մալարիա, Սւազի: Այս կարիքների փոխարէն ունենք միայն 25 Եկեղեցականներ, որ շատ թիւ է...»²¹²:

Մեր ժամանակներում Թուրքիայի հայկական համայնքների մասին կենդանի վկայութիւնների ու նկարագրութիւնների ներկայացումը կարող է անելի առարկայական մտապատկերացումներ ստեղծել:

Սուսա Լեռան 2002 թ. ուխտագնացութեան մասին ահա այսպէս է լրագրում «Նոր Մարմարայի» թղթակիցը. «Վազգը գիւղի ասնդական հանդիսութեան առիթով ուխտագնացութեան մասնակցեց նաեւ Ներսէս արք. Պօղապալեանը: Ուխտաւորներ ներկա էին նաեւ Ելազիգի (Խարբերդ), Մալարիայից, Սերսինից, Սերսինից, Աղանայից, Անկարայից, Աղիեամանից եւ Տիգրանակերտից»²¹³:

Քաղաքական, պատճական եւ աշխարհագրական բազմաթիւ պատճառներով պատճական Կիլիկիան (տարածք՝ «գ») կարելի է համարել «պաշտօնական» հայութեան ներկա ժամանակների ազգապահպանան միջնաբերդը: Նոսրացնան, արտահոսքի եւ ուժացնան վտանգին ենթակա ու պետական խոչընդոտների դեմ մաքառող կիլիկեան համայնքները մեծապէս պահպանել են իրենց ազգային դիմագիծը, այնքանով, որ կարելի է դրանց համարել Կ.Պոլսի հայութեան հասարակական-մշակութային կեանքի շարունակութիւնը: Այդտեղ համայնքային-ընտրական

211.Ժամանակ, Ստամբուլ, 1998, նոյեմբերի 11:

212.Նոր Մարմարա, Ստամբուլ, 2000, փետրվարի 5:

213.Նոյն տեղում, 2002, օգոստոսի 19:

իրաւունքներից բացի, առկա են ազգային-հաւաքական կեանքի առողջ նշոյներ, այսպէս.

-«...Պատրիարք Սրբազնը ժամանեց Վազգը գիւղ, որի մուտքի մօտ Պատրիարքն ու ուղեկիցները դիմաւորւթեցին թմրուկ-զուռնայով ու պարմանների ու պարմանուկինների պարերով, մի տեսարան, որ յուզից էր: Անեն մարդ հայերէն էր խօսում, երգում էր տոհմիկ երգեր ու եղանակներ»²¹⁴.

-Կամ. «ԱՂԱՍԱՅԻ ՀԱՅՈՑ ՔԵՏ ՀԱՍԴԻՊՈՒՄ... Պատրիարք Յայրը այստեղ մեծ ուրախութեանը դիմաւորւց տեղի կարողիկ վարդապետի եւ գոյգ նայրապետների կողմից, որոնք Նորին Ամենապատութեան այցելութեան առիթով հրահրել էին աղանացի հայերին: Յաւաքած էր հայերից շուրջ քսանհոգանոց մի խումբ, բոլորն էլ հայկական անուններով...»²¹⁵.

Պատրիարքի 2002 թ. Մերսին քաղաք այցելութեան ընթացքում, տեղի կարողիկ եկեղեցու պետ, հայր Գրեգորի Բրունօ Սիմոնելին իր տած քարոզում դիմելով պատրիարքին ասում է. «... Տարին գոնէ մէկ անգամ զայսի էք մնը քաղաքը եւ չափազանց ուրախութիւն էք պատճռում ոչ միայն տեղացի հայ հաւատացիալ ներին այլ նաև քաղաքիս բոլոր քրիստոնեաններին (ընդգծումը մերն է. Կ.Խ.)»²¹⁶:

Թում է, թէ մշակութային կեանքը Կիլիկեան համայնքներում ընթանում է թիշ թէ շատ բնականոն եւ մինչեւ իսկ անկաշկանդ: Վազգը գիւղի նորաշէն եկեղեցու պարտէզում Արամ Խաչատրեանի 100 ամեակին նիկրած հանդիսութեան կապակցութեանը պատրաստած լրագրութեան մեջ ասում է. «Եկեղեցին եւ բակը ծայրից ծայր լեցուն էր գիւղացի հաւատացեալներով. ներկա էին բազմաթիւ ուխտաւորներ Մերսինից, Աղանայից, Խաքենդերունից, Անտիոքից, Սամանդալից»²¹⁷:

Այս եւ բազմաթիւ այլ պատճառներով բացառիկ դիրք է գրաւում վազգը գիւղը: Գիւղը հարուստ նարամանասութեամբ է բնութագրում օտարազգի հետազօտող ժողովն Նաեգլէն: Ըստ նրա՝ գիւղն էթնիկական իմաստով միատարր է եւ միայն մէկական թուրք եւ քուրդ ընտանիքներ են բնակում այնտեղ, գիւղի եկեղեցին հիմնական վերանորոգման է ենթակւել հյումանիստ «Ո՞ֆահ կուսակցութեան» (Բարօրութեան) իշխանութեան օրոք եւ բնակիչները հանրային վայրերում թուրքերէն խօսալով հանդերձ լաւապէս տիրապետում են մայրենի լեզվին եւ ընտանեկան միջավայրերում հայերէն են խօսում եւ այլն եւ այլն: «Յայկական համայնքը Վագֆում,- ըստ բուն Վագֆից Պետրոս Քեհիրօղլուի նշում է ժողովն Նաեգլէն, -վայելում է 100 տոկոսանոց աւտոնոմիա»²¹⁸:

Իսկ ազգային գիտակցութեան պահպանման կենսական անհրաժշտութեան վերաբերեալ, Պետրոս Քեհիրօղլուն յայտնել է ժողովն Նաեգլէնին, որ «չի կարելի վստահել այն անձնաւորութեան, որն ուրանում է իր ինքնութիւնը...»²¹⁹:

Կիլիկիայի այս համայնքներում առկա է նոյնիսկ համեմատական որոշ կազմակերպաւածութիւն (թաղային խորհուրդ եւ այլն): Այս ինաստով մէջբերում ենք երկու առանձին լրագրութիւն:

-«Պատրիարք հայրն ու ուխտաւորները երեկոյեան ժամը 16:00-ին ժամանեցին Խաքենդերունի Միրոց Քառասուն Մանկանց Եկեղեցին, որի մուտքի մօտ դիմաւորւեցին թաղային խորհրդի թ. ատենապետ եւ Ս. Խաչ Դարեվանքի սան Յովհաննես Սիլահերի, միւս թաղականների եւ տեղացի մի խումբ հայ հաւատացեալների կողմից»²²⁰:

-«29 մարտ շաբաթ կեսօրից յետոյ Պատրիարքը ինքնարիով հասաւ Աղանա եւ պատոյ սրահի մէջ դիմաւորւց Լեւոն եւ Էմել երարսլանների (Աղանայից), Կարպիս Քըսատուրի եւ Խոսրով Քէօլէդահիր-օղլուի (Խաքենդերունից) եւ Պետրոս Շիշաննեանի (Վազգը գիւղից) կողմից»²²¹:

Յակառակ այս իրողութեան Փոքր Յայրի և յարակից շրջանների (տարածք՝ «Դ») «պաշտօնական» հայութեան վիճակն այնքան էլ միխթարական չէ ներկայիս: Լրատութիւններից ստացում է, որ ինչպէս որակական, այնպէս էլ քանակական առունով լուրջ նահանջ են ապրում այս տարածքի համայնքները: «Նոր Սարմարայում» կարդում ենք. «Նաքար առաւուտեան արարողութեան ներկա գտնելու համար հայեր ժամանեցին նաեւ Սվագից (ուր դեռ 115 հայեր են ապրում) եւ Պողազլեանից...»²²²:

«Պաշտօնական» հայութեան արտահոսքի քանակական չափերը բնորոշելու համար Սեբաստիայի օրինակը գտնում ենք նպատակայարմար, քանզի յաջորդական ժամանակահատուածների դրա հայ բնակչութեան մասին մեր տրամադրութեան տակ են նախապէս ակնարկած բաւարար տւեալներ, որոնցից կարելի է դառնում կազմելու Սեբաստիայի «Պաշտօնական» հայ բնակչութեան հոլովոյթի մօտաւոր պատկերը (Նկ.6):

Սեբաստիայի «պաշտօնական» հայ բնակչութեան հոլովոյթն ըստ բաւականի

214.Նոյն տեղում, 1999, ապրիլի 1:

215.Ժամանակ, Ստամբուլ, 2000, ապրիլի 4:

216.Նոր Սարմարա, Ստամբուլ, 2002, օգոստոսի 20:

217.Նոր Սարմարա, Ստամբուլ, 2003, սեպտեմբերի 30:

218.Turkey: Village Survived The Century's First Mass Ethnic


Expulsion, Naegele, J., 27 May 1999

219.Նոյն տեղում:

220.Նոր Սարմարա, Ստամբուլ, 2002, օգոստոսի 21:

221.Նոյն տեղում, 2003, մարտի 3:

222.Նոյն տեղում, 2001, մարտի 27:



Նկար 6

Ենթադրում ենք, որ առհասարակ Փոքր Հայքի և յարակից շրջանների «պաշտօնական» հայութեան արտահոսքը նման մի հոլովոյք ունի:

Կեսարիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, որ 1950-ականներին համուսանում էր «պաշտօնական» հայութեան հոգեւոր սիրտը, ուր եւ բազմամարդ հաւատացեալներով կատարում էին արարողութիւններ, այժմ գտնուում է յուսահատական պայմաններում. 2003 թ. փետրվարի 9-ին «Երեկոյեան ժամը 17:00-ին Կեսարիայի Ս. Գրիգոր Լուսաւորչի Եկեղեցու մէջ,- կարդում ենք «Նոր Մարմարայում», Երեխայից Սուրբ Պատարագ մատուցեց Պատրիարք հօր միջոցով եւ Արգեսու սարից Վերադարձող Երիտասարդների, ու նաեւ Կեսարիակապարովկիայում բնակուղ մի քանի հայերի մասնակցութեամբ»²²³.

Այս Եկեղեցու եւ Կեսարիա քաղաքի ռազմավարական նշանակութեան մասին այսպէս է գրում նաեւ Կ.Պոլսի (կամ Թուրքիայի Հայոց) պատրիարքարանի պաշտօնաթերը «Լրաբերը». «Դայ Եկեղեցու համար կարեւոր ուխտատեղի է այս քաղաքը եւ յատկապէս քաղաքի Ս.Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, որ Կենտրոնական Անատոլիայի պաշտամունքի բանուկ միակ հայ Եկեղեցին է»²²⁴:

Առանձին լրագրութիւններից կռահելի է դարնում Փոքր Հայքի և յարակից շրջանների «պաշտօնական» համայնքների ցրածութիւնը չափը, օրինակ «Գաստամոնուի Կենտրոնի մէջ այսօր բնակում են 12 հայ ընտանիքներ, ընդամենը 40 անձ,- դարձեալ կարդում ենք «Նոր Մարմարայում», իսկ Թաշրիօֆոնուի մէջ բնակում են 11 հայ ընտանիքներ, ընդամենը 37 անձ»²²⁵ (ընդգծումները մերն է- Կ.Խ.): Կամ պատրիարքարանի հրապարակած «Եկեղեցականք-Պաշտօնականք»-ի մէջ կարդում ենք. «Սեպտ. 26, Ուրբ.- Նորին Ամենապատութիւնը Գոնիայի մէջ ժամը 10:00-ին ուստի այցելութիւն տաւ Ս. Պողոս Կարողիկ Եկեղեցուն, ուր նախագահեց Երեխայից Ս. Պատարագին: Աւարտին Նորին Ամենապատութիւնը հանդիպում ունեցաւ տեղի կարողիկ Կրօնաւորների եւ Յայ Արաքեական Եկեղեցու անդամների հետ (ընդգծումները մերն է- Կ.Խ.)»²²⁶:

223.Նոր Մարմարա, Ստամբուլ, 2003, փետրվարի 17:

224.Լրաբեր, Ստամբուլ, 2004, յունիսի 26:


225.Նոր Մարմարա, Ստամբուլ, 2003, սեպտեմբերի 20:

226.Նոր Մարմարա, Ստամբուլ, 2003, հոկտեմբերի 4:

Քրդաշատ նահանգներում (տարածք՝ «բ») «պաշտօնական» համայնքներն էլ գտնուում են գրեթ նոյն վիճակում, թեւ այնտեղ «պաշտօնական» եւ «քաքուն» հայերին զանազանող սահմաններն աւելի առաջական են եւ անորոշ: «Պաշտօնական» համայնքներն այնտեղ էլ նորանում են: Պատրիարքարանի Կրօնական ժողովի 1998 թ. վերջին նիստի մասին մասնություն հրապարակած յայտարարութեան մէջ կարդում ենք. «Դիարքեքիրից դէպի Պոլիս գաղքը շարունակեց վերջին ամիսներում եւս, պատմական այդ քաղաքի մէջ թողնելով միմիայն 6 հայեր»²²⁷:

Տիգրանակերտի պարագայում էլ, Սեբաստիայի օրինակով, կարելի է կազմնել բնակչութեան հոլովոյքի մօտաւոր պատկերը (Նկ. 7):

Տիգրանակերտի «պաշտօնական» հայ բնակչութեան հոլովոյքը ըստ թականի



Նկար 7


Տիգրանակերտի հայաբափումը չի վրիպել անգամ այլազգի հետազոտողի քննչական հայացքից. «Դիարքեքիրում,- գեկուցում է Նատալի Տոչչին 2001 թ., ուր Երեմնի ապրում էին 250,000-ից աւելի հայեր, այսօր ապրում են փոքր թուվ հայ ընտանիքներ միայն: Եկեղեցու մօտ էր գտնում ծերունու տունը եւ մի փոքրիկ մատուռ, որը դեռևս օգտագործում էր քաղաքում մնացած փոքր թուվ հայ ընտանիքների կողմից»²²⁸:

Տիգրանակերտի «պաշտօնական» հայ բնակչութեան հոլովոյքի պատկերը համեմատելով Սեբաստիային առնչուղ համապատասխան պատկերի հետ, եւ հաշի առնելով Թուրքիայի քաղաքարնակութեան

227.Նոյն տեղում, 1998, դեկտեմբերի 31:

228.TOCCI N., Our Future Southeastern Turkish Frontiers, CEPS Policy Brief No. 6, October 2001, p. 3.

պատկերը²²⁹ (Նկ. 8), կարելի է ասել, որ 1960-ականներին Տիգրանակերտի հայ բնակչութեան ժամանակաոր աճը հետեւանք է եղել շրջակա գիտերից դեպի քաղաք արտահոսքի: Երեւոյի գլխաւոր պատճառը գիտատնտեսական պայմանների վատքարացումն է, որն արդէն տեսանք առաւել նազ է գոյութիւն ունեցել մանր արհեստով եւ առեստով աշխատող Փոքր Հայքի և յարակից շրջանների հայ համայնքների մօտ: Հետեւարար կարելի է եզրակացնել, որ հակառակ Փոքր Հայքի և յարակից շրջանների, Հարաւարեւմտեան, ինչպէս նաև հաւանարար Արեւմտեան Հայաստանում, հայ գիտագիտութիւնը կազմել է աւելի մեծ թաքանակ՝ քաղաքային բնակչութեան համեմատութեամբ:



Ամեն դեպքում «պաշտօնական» հայութեան արտահոսքը երկու տարածքներում է ակնյայտ է դառնում 1970-ականներից սկսած:

Տիգրանակերտի մօտակայքում գտնուղ Դերիքում էլ, ուր նոյնիսկ պաշտօնապէս հաստատած բանուկ եկեղեցի կայ, բնակնարար վիճակը նոյնն է. «Ամեն. Ս. Պատրիարք, - «Նոր Սարմարային» են հաղորդում պատրիարքարանից, Հայրը աւարտեց իր շփումները Տիգրանակերտում եւ 14 սեպտեմբերի 2002-ի շաբաթ առաւտեան իր ընկերակիցների հետ ուղեւորեց դեպի Մարդինի Դերիք գիտաքաղաք: Պատրիարք Հայրը առաջնորդեց կառավարական շենք, ուր քաղաքավարական այցելութեան տևց Դերիքի գաւառապէտ Սուլստաֆա Ունաղըն: Գաւառապէտը բացատրեց Դերիքի մասին, յայտնելով թէ այս գիտաքաղաքի մէջ փորուաթի հայ բնտանիքներ են բնակում (ընդգումը մերն է- Կ.Խ.)»²³⁰:

Մալաթիայից էլ յուսայի պատկերներ չկան: Այժմ այնտեղ ապրում են ընդամենը 10 հայ²³¹, որոնց մասին երեւն լսում են արտառոց լուրեր, օրինակ. «Մալաթիացի մի հայ սիրարկածի զոհ...»²³²:

Խարբերդը սակայն, մինչ օրս, շարունակում է գյուտելել, որպէս համեմատարար ամուր «պաշտօնական» համայնք Հարաւարեւմտեան Հայաստանում (տարածք՝ «բ»): Երկրաշարժի հաւանական վնասների մասին տեղեկանալու նպատակով, Պատրիարքը, 2004 թ. օգոստոսի 11-ին, կապել է էլազիգի (Խարբերդ) հայ համայնքի ներկայացուցիչների հետ, եւ տեղեկացւել, որ. «38 բնտանիքներից բաղկազած տեղի համայնքը չի վնասել շարժի հետեւանքով (ընդգումը մերն է- Կ.Խ.)»²³³:

Տեղեկութիւնների հանրագումարը ցոյց է տալիս «պաշտօնական» համայնքների նօսրացման ընդհանուր ուղղածութիւնը: Այս հարցին կապակցութեամբ պիտի ընդգծել մի կարեւոր հանգամանք. ի տարբերութիւն «իսլամացած» եւ «քաքուն» հայութեան, «պաշտօնական» հայութիւնը, ազգային-կրօնական կենաքի խիստ սահմանափակութեան պայմաններում (բայտ պաշտօնական յայտարարութիւնների գաւառներում գործում են ընդամենը վեց բանուկ եկեղեցիներ՝²³⁴, իհարկէ եւ ոչ մի հայկական դպրոց), պարտաւորել է գաղթել Ստամբուլ:

Առեւոյք այս արտահոսքը թուում է «ինքնակամ» եւ ոչ բռնի, սակայն դրան տոն տող իրական մղիչները, անշուշտ, պիտի փնտրել պետականօրեն ստեցծած սահմանափակումների եւ տեղական իշխանութիւնների կողմից յարուցած համայնքային եւ հասարակական դժւարութիւնների մէջ: Հանգամանք, որ աւելի քիչ է պատճառ դարձել «իսլամացած» եւ «քաքուն» հայութեան արտահոսքի:

«Պաշտօնական» հայութեան ցրածութեան պատկերը որոշակի-ացնելու մտադրութեամբ, օգտագործել է համացանցային մի նոր հնարաւորութիւն, որի գիտական արժեքը ներողողիքական դիտանկիւնից քնննարկման եւ ուսումնասիրութեան է կարու: Մինչ այդ սակայն կիրառելով ICQ կոչող, «թրատար» (messenger) համացանցային տեսակի ընտանիքին պատկանող ծրագիրը կարելի է ուշագրաւ արդիւնքների հանգել: Ի տարբերութիւն միւս ծրագրերի, ICQ-ի «համրային որոնում» (people search) բաժինը տալիս է մի բացարիկ կարելիութիւն, այն է. հասցեներ որոնել ինչպէս բնակած երկի եւ քաղաքի այնպէս էլ լեզուական նախասիրութեան հիման վրա: Այսպիսով կարելի է դառնում գտնել օրինակ, Թուրքիայի Արդին մարզում բնակուղ այն անձերի համացանցային հասցեներն, ովքեր իրենց լեզուական նախաընտրութիւնների եռեակ ցանկում նշել են նաև հայերենը:

229.Oehring O., Human Rights in Turkey, Secularism, Religious Freedom, 2002, missio order no 600 215, p. 2

230.Նոր Սարմարա, Ստամբուլ, 2002, սեպտեմբերի 19:

231.Սահապետեան Յ., «Հայլուր»-ի համար, Երեւան, 2004, յուլիս:

232.Նոր Սարմարա, Ստամբուլ, 2003, մարտի 1:

233.Ժամանակ, Ստամբուլ, 2004, օգոստոսի 12:

234.<http://www.hyelet.com/rehber.asp>

Այս նոր մեթոդով 2005 թ. փետրվարի որոնումներից ստացվում է հայերև լեզվին ծանօթ մարդկանց համացանցային հասցեների քանակը մեր պայմանական տարածքներում (Աղ. 9):


	Տարածք	Մարզ	Նշանակված հասցեների քանակը
1	Արեւմտեան Հայաստան	Էրզերում	20-ից ավելի
2		Տրապիզոն	20-ից ավելի
3		Ոխէ	20-ից ավելի
4		Արտիին	16
5		Կիրեսոն	12
6		Երզնկա	8
7		Սուբրոտ	9
8		Կարս	7
9		Վան	6
10		Բիթլիս	4
11		Արդահան	3
12		Դերսիմ	2
13		Մուշ	1
14		Աղոփի	1
15		Իգդիր	-
16		Բինգուլ	-
17		Բայրութ	-
18		Գիւմուշհան	-
1	Հարաւ-Արեւմտեան Հայաստան	Մալաթիա	20-ից ավելի
2		Մարդին	10
3		Բաքման	9
4		Աղեաման	4
5		Ջաքքեարի	3
6		Ուրֆա	2
7		Դիարբեկիր	1
8		Խարբերդ	1
9		Շիրճակ	-
1	Պատմական Կիլիկիա	Աղանա	20-ից ավելի
2		Այնթապ	20-ից ավելի
3		Խվենդերուն	20-ից ավելի
4		Մերսին	20-ից ավելի
5		Քիլիս	3
6		Մարաշ	-
7		Օսմանիէ	-
1	Փոքր Հայք և յարակից շրջան-	Անկարա	20-ից ավելի
2		Ամբալիա	20-ից ավելի

3	Կեսարիա	20-ից ավելի
4	Կոմիա	20-ից ավելի
5	Սամսոն	20-ից ավելի
6	Սեբաստիա	16
7	Թորոտ	16
8	Օրյու	16
9	Ամասիա	14
10	Եօգկար	11
11	Գաստամոնու	8
12	Ալշարայ	7
13	Չորում	7
14	Նիգդէ	5
15	Կարաման	5
16	Կիրիկուլէ	4
17	Սինոպ	4
18	Թարաբուկ	1
19	Բարդին	-
20	Զոնգուլդագ	-
21	Կիրշեհիր	-
22	Նեւշեհիր	-
23	Չանկիրի	-

Աղյասակ 9

Սոյն տվեալները կարելի է աճփոփել քարտեզում (Ակ. 9):

ICQ-ից ստացված հայախօսների հասցեների ցրւածութեան քարտեզ



Տվեալներից ու քարտեզից եզրակացւում է, որ Արեւմտեան Հայաստանի կենտրոնական մասերում (Տրապիզոն, Էրզերում եւ Ոխէ)

հայախոսների կամ առնւազն հայերեն իմանալու յաւակնութիւն ունեցողների մեջ բարանակով հասցեներ կան: Մալաթիայի, ինչպէս նաև Կիլիկիայի եւ Փոքր Հայքի և յարակից շրջանների արեւելեան եւ արեւմտեան բաժինների պարագայում եւս այդպիսի իրավիճակ գոյութիւն ունի:

ԵԲ- «ԽՍԼԱՄԱԳՈՎ» հայութիւն. Մի շարք մասնագէտների կողմից արծարծուում են պատմա-էթնոլոգիական լուրջ հիմնաւորումներ զազաների կամ ալեւիների հայկական ծագման կապակցութեամբ: «Դիկին» համալսարանի ասիական եւ միջինարեւելեան հարցերի եւ քրդական ազգայնականութեան մասանձև Պառլ Վայքը «զազայական լեզվական խնդիր» ծագունարանութեան մասին յայտնում է այն, որ արեւմտեան քրդական կիզիլրաշները, որոնք խօսում են Զազա կոչող քրդարքական առանձին բարբառով, «հայկական արեան ուժեղ խառնուրդ ունեն»²³⁵:

Այս մասին ակնարկներ են զնում մինչեւ իսկ որոշ քրդական աղբյուրներում: Դրանցից մեկում քացարելով, որ Ալեւի ցեղը կազմել է քազմաքի տոհմերից, եւ որ դրանց համախմբման իհմնականում գործօներն են հանդիսացել կրօնը եւ հասարակական կացութածերը, հաստատում է, որ այս ցեղում «ընդգրկւած են քուրդ քափառականներ», որոշ քրդական խնդեր, մեծ հաւանականութեամբ նաեւ ծոված հայեր եւ այլ քրիստոնեական խմբաւորումներ (ընդգում մերս է-Կ.Խ.)»²³⁶:

Մարտին Վան Բրոյնեսենը Գառնիկ Ասատրեանին իր անձնական նամակում 1984 թ. նեյենքերի 20-ին գոել է. «1975-76 թթ. ես որոշ ժամանակ անցկացրի Քիթիսի նահանգի զազայարնակ մի գիւղում: Գիտի ընակիշները թեւ համարում էին զազաներ, սակայն իրենց հայերենախան բարբառով ու մարդարանական տիպով ամբողջովին տարբերում էին այլ զազաներից եւ անկասկած, նախկինում եղել են հայեր»²³⁷:

Սանդրինել Ալեքսին իր «The Kizil Bash» աշխատութեան մեջ (2000 թ.), վերլուծելով քրդական կարեւոր ցեղախմբերի ծագումն ու պատմական հոլովոյքը, նշում է, որ «որոշ քուրդ-զազաները պնդում են, որ իրենք հայերի ուղղակի շառավիճներն են: Ամեն դեպքում պատահել է նշակութային եւ հասարակական կարեւոր համաձոլում քրիստոնեաների եւ Ղերսիմի կիզիլրաշների միջեւ: Նրանք Զատիկը տօնում են հայերի հետ եւ Սուլը Սարգսի ծաւը, փոխարենական իմաստով, կատարում են Խզզը-Էլիասի (Khizr-Elias) անւամբ»²³⁸:

Այսուամենայնիւ, զազաների եւ ալեւիների նիւթը առայժմ հանելով մեր ուսումնասիրութեան հետազոտական շրջանակից, կփոր-

235.White P., Ethnic Differentiation Among The Kurds: kurmanci, kizibach and Zaza, <http://www.deakin.edu.au/~kstudyg/articles.html>.

236.The Changing Face Of Anatolian Alawism, http://www.turkishdailynews.com/old_editions/09_11_96/feature.htm.

237.Ալիք, Թեհրան, 1989, նոյեմբերի 19:

238.http://perso.wanadoo.fr/kurdistannameh/histoire/kizil/hist2_kizil_kurd.htm

78


ծենք, ընդհանուր գծերով, անդրադառնալ ցեղասպանութիւնից դեռ շատ առաջ խւանացած համշէնահայ-պանտահայերի ներկա իրավիճակին:

Դայկական ինքնատիպ այս տոհմն ունի հայերենի իրայացուուկ բարբար եւ բնակում է սեւծովեան ափերիցից սկսող եւ մինչեւ երգում երկարող տարածքներում:

Դարուարդի եւ Կոլոնքիայի համալսարանների լեզվաբանական շրջանակներում համբաւ ունեցող թերտ կաուրսն իր մասնագիտական յուրածի նախարանում, ակնարկելով այն հարցին, որ լազերի եւ արխազների մասին յաճախ են քննարկումներ գնում, ասում է սակայն. «Քերը գիտեն լայն ցրածութեամբ տոհմական այն խնդիր մասին, որն այսօր հաշւում է մի քանի հարիւր հազարներով: Այս խումքը, որ ինչն իրեն «համշէնցիք» կամ «համշէն» է անանում, զրադեցնում է սեւծովեան ափը՝ թուրքիայի հիւսիս-կենտրոնից, Սամսունից մինչեւ հարաւային Ուսւաստան...»²³⁹:

Նա համշէնահայութիւնը հիմնականում բաժանում է երեք խմբերի²⁴⁰:

- ա) արեւմտեան համշէնահայութիւն. Սամսունում (Զանիկում), Օրդուում, Կիրեսունում, Տրավիզում եւ Ոիզեում ցրւած, թրքախոս եւ սուլնի դաւանանքին յարած,
- բ) արեւելեան համշէնահայութիւն. առաւելաբար Արդուինում բնակուղ, համշէնահայ բարբառով խօսող եւ սուլնի դաւանանքին յարած,
- գ) հիւսիսային համշէնահայութիւն. Վրաստանում եւ Ուսւաստանում բնակուղ, համշէնահայ բարբառով խօսող եւ քրիստոնեա (Նկ. 10):



Նկար 10

239.Vaux B., The Forgotten Black Sea Armenians, Columbia University, 1996, April 2, p. 1.

240.Նոյն տեղում:

Իսլամացած եւ Թուրքիայում բնակող առաջին երկու խմբի թաքանակը գերակշռում է Թուրքիայի սահմաններից դուրս բնակող վերջին խմբին: Դիսիսային համշենահայութիւնը որպես բուն հաշենահայութեան շատակիդ այսօր բնակում է Արխագիայում, Վրաստանում եւ Ուստաստանում: Փաստորեն այս խմբին պիտի գումարել նաև Ուզբեկստանում բնակող համացած «Խեմշինցի» կամ «Խեմշինլի» փոքրանասնութեանը, որի 2005 թ. թաքանակը, ըստ որոշ աղքիւների, գնահատում է 1120 մարդ²⁴¹:

Ամենայն դեպք առաջին եւ երկրորդ խմբերն (արեւմտեան եւ արեւելեան համշենահայեր) են մտնում մեր ուսումնասիրութեան աշխարհագրական շրջագծում:

Wikipedia համացանցային հանրագիտարանը Թուրքիայի համշենցիների կամ հեմշինլիների համար նման մի տեսակաւորում է նկատի առնում արեւմտեան խմբին կոչելով «Բաշ-հեմշինցիներ», իսկ արեւելեան խմբին՝ «Շոփա-հեմշինցիներ»: Ամեն դեպքում նշեալ հանրագիտարանը հաստատագործմ է համշենցիների հայկական ծագումը, բայց եւ ուրագծում ինչպէս լեզուական, այնպէս էլ ծեսերի հետ կապված որոշ տարբերութիւններ. այսպէս եթ «Քուլումք» (մի տեսակ տկար) համարում է աւանդական նազարան՝ արեւմտեան խմբի նույն ապա «Հեմշիր քայլը» (մի տեսակ սրինգ) նոյն տեղու ունի արեւելեան խմբի նույն այլը²⁴²:

Թուրքիայի համշենահայ բնակչութեան ցրտածութեան համայնապատկերը գրեթե աննկարագրելի է եւ ցայծմ մեծապէս անորոշ: Օրինակ, Բերտ Վաուքսի երեք առանձին յօդածներում (Ներքոյիշեալ²⁴³) գետելած տեղեկութիւններն ի մի բերելով եւ նեկը միւսով լրացնելով, պարզում է, որ թուրք-վրացական սահմանագծից 5 կիլոմետր հեռաւորութեամբ, Կուպրուչու անունով գոյութիւն ունի գիտ Արդուինի մարզում իր գուտ համշենահայ 1000 բնակիչներով: Ի դեպ, Վաուքսի այս նօտաւոր թիւը համապատասխանում է թուրքական աղքիւներից քաղլած տւեալներին, հանճայն որոնց Կուպրուչուի բնակչութիւնը 1990 թ. կազմել է 1314, 1997 թ. 967 եւ 2000 թ. 870 մարդ²⁴⁴:

Հարաւային Կալիֆոռնիայի համալսարանի քաղաքական գիտութիւնների թեկնածու Յովան Սիմոնեանն իր «History and Identity among the Hemshin» (Պատմութիւնը եւ ինքնութիւնը Համշենում) նշանա-

կալի յօդածում, իիննելով Ռուլիդեր Բեննինգհաւսի տւեալներին, թաքելում (Ուզեմ) բնակուղ արեւմտեան համշենահայութեան (կամ Բաշ-Ուզեմ) բնակուղ արեւմտեան համշենահայութեան (կամ Բաշ-Շամշենցիութիւն) թաքանակը գնահատում է 15-ից 23 հազար: Նոյն համշենցիութիւնը թաքանակը գնահատում է 15-ից 23 հազար: Նոյն համշենահայերի թիւը ներկայացնում է 25 հազար մարդ²⁴⁵:

Սա նշանակում է, որ ի տես Խոպայի բնակչութեան (1990 թ. 30,862, 1997 թ. 30,646 եւ 2000 թ. 32,584 մարդ²⁴⁶), համշենահայութիւնը այդտեղ կազմում է բնակչութեան ճնշիչ մեծամասնութիւնը:

Մերորա թիւյ. Արքուսեանը եւ Արմին Բուղադեանը 2004 թ. ամռանը իրանից դեպի Կամ ուխտագնացութեան մասին իրենց առանձին ուղեգրութիւններում պատմում են Ախրամար կղզում Ս. Խաչ եկեղեցու մոտ իրանահայ ուխտագնացների մի խումբ համշենահայերի հետ համիլիան մասին: «Տրափիզօն քաղաքից էին, - գրում է Մերորա թիւյ. Ուարեւսեանը, եւ բոքախօս հայեր են, իհարկ նրանցից ոմանք նաեւ հայերեն էին խօսում»²⁴⁷: «Այդ ընթացքում մեր շրջապարհն միացան նաեւ հայերացի մի քանի կանայք, գրում է Արմին Բուղադեանը, - երբ պարզ տեղացի մի քանի կանայք, գրում է Արմին Բուղադեանը, - երբ պարզ դադարեց, իհար, հետ խօսեցին եւ պարզեց, որ իրենց տատիկները եւ պայփիկները նոյնական այս երգերը գիտեին եւ երգուն էին»²⁴⁸:

Ախուղեանի ափին գտնուղ պատմական Բագարանի մասին 2000թ. մի ուղեգրութեան մեջ կարդում ենք. «Մի տօնակատարութեան ընթացքում նկատեցի սահմանագծի վկայ, բրական կրողի գետափին նստած մի զինուրի, որ երկար ժամանակ նայում էր այսկողմ: Նա Պամշենի նստած մի զինուրի, որ երկար ժամանակ նայում էր շրջանի, Տրափիզօնի շրջակայիցից մի հայ էր: Զինուրը քախծուտ նայում էր իր հայրենակիցներին, անկարող գետը կտրելու, նրանց միանալու եւ տօնակատարութեան նասնակցելու...»²⁴⁹:

Թուրքիայի համշենահայութեան թաքանակի մասին վկայութիւնները բաւականին տարբեր են ու այլազան:

Դոկտ. Թեսսա Շոֆմանի գնահատմանը. «Այնտեղ 20,000 մուսուլման համշենցիներ կամ, որոնց հայրենիքը գտնում է Տրափիզօնի երգուումի արանքում»²⁵⁰:

Յովան Սիմոնեանը Բեյրութի «Հայկագեան քոլեջում» իր բանախութեան մէջ 2002 թ. յունիսի 24-ին, համշենահայութեան թաքանակի մասին եզրակացնում է. «100,000 համշենցիներ են ապրում ամբողջ Թուրքիայի տարածքում»²⁵¹:

241.<http://www.joshuaproject.net/Joshua Project - Languages Listing.htm>

242.<http://en.wikipedia.org/wiki/Hamshenis>

243. Vaux Bert, The Forgotten Black Sea Armenians, Columbia University, April 2, 1996, p. 1,

Vaux Bert, LaPorta, Sergio, Tucker, Emily, Ethnographic Materials from the Muslim Hemshinli, Harvard University, 1996, p. 1,

Vaux Bert, Hemshinli: The Forgotten Black Sea Armenians, Harvard University, April 2, 2001, p. 1.

244.<http://www.Hopam.com>

245.Simonian H. H., History and Identity among the Hemshin, "ISIM" Newsletter 14, June, 2004, pp. 24-25

246.<http://www.Hopam.com>

247.Ալիք, Թեհրան, 2004, սեպտեմբերի 27:

248.Նոյն տեղում :

249.<http://www.roadtoarmenia.com/scenes/scenes.html>.

250.Hofmann, Tessa, "Armenians In Turkey Today", October 2002, p. 11.

251.<http://www.haigazian.edu.lb/announce/pressrelease.htm>

Դժւար է ճշտել,թէ որոնք են համշենահայութեան թւարանակի թերագնահատումն պատճառները: Վիճակագրական ստոյգ տևալների չգոյութիւնից բացի, մենք գտնում ենք, որ առկա է Թուրքիայի պետական շրջանակների մօտ պնտահայերին որպէս պնտացի յոյներ, Բաշհամշենցիներին որպէս լազեր, եւ արեւելեան համշենահայերի մի բաժնին որպէս վրացիներ Ներկայացնելու միտումը, որի խորքում դարձեալ ընկած է հակահայ տրամադրածութիւնը: Աղաւաղման այս պետական մօտեցմանը լաւագոյնս նպաստում է պնտահայութեան եւ արեւմտեան համշենահայութեան խօսակցական լեզում թուրքերին գերակայութիւնը: Այս շփոր իր հերթին կարող է մի շարք հետազոտողների յանգեցնել բային վրիպումների եւ վիճակագրական անծիշտ գնահատումների: Իրականութիւնը լուսարձակի տակ առնելու ինաստով նպատակայարմար ենք նկատում հրեական մի կայքեջից մեջբերում կատարել. «Ներկայս տեղական թուրքերն խօսող նարդկանց մի մասը,- օգտևելով Ոորերտ Շանկոֆֆի աղբիւրներից գրում է, - փաստորն շառաւիդներն են այն հայերի, ովքեր այլ եւ այլ պատճառներով խլանացել են: Այս իրականութեան իման վրա, որը նկատելի է Անատոլիայի տարբեր քաժիններում (Խնչպիսին և Պոնտոսը), մենք ընդունում ենք, որ այդ մարդիկ շարունակում են խօսել հայերենով կամ ունեն մի խառնուրդ լեզու (ընդգծում մերն է- Կ. Խ.)»²⁵²:

«Institute for the Secularisation of Islamic Society»-ի (Խսլամական Հասարակութեան Սեկուլարացման ինստիտուտ) համանուն կայքեջում մի «խսլամացած» հայ իր 2002 թ. սեպտեմբերի 16-ի թակիր էլեկտրոնային նամակում գրում է. «Հայախօս նուսուլմաններով բնակեցած գիւղեր կան: Որոշ աղբիւրներ նրանց թաքանակը գնահատում են շուրջ 2 միլիոն: Նրանցից ոմանք գիտակ են իրենց հայկական ծագմանը»²⁵³:

Գրիգոր Աւագեանը ենթադրում է, որ Թուրքիայում, մասսամբ նաեւ այլ երկրներում պայում են շուրջ 4 միլիոն նուսուլման համշենահայեր»²⁵⁴:

Ըստ թուն համշենահայ, «Գեօրէ» համալսարանի գիտաշխատող, նախկին վարչապետ Մեսուր Ելմազի ազգականուիի, Ալիշ-Ալիս Ալբի (Կոստանեան). «Այսօր աւելի քան մեկ միլիոն իր ազգակիցները գտնում են ազգային ինքնազիտակցութեան ու զարթօնքի գործընթացում»²⁵⁵:

Ալիշ Ալբի զաւակ, երիտասարդ արևեստագէտ, գերմանաբնակ Դեմիզ (Ծովակ) Ալբի հետ մի շատ շահեկան հարցազրոյցում այսպէս է նկարագրում համշենահայութեան վիճակը. «Այսօր, 350,000 համշենցի-

252. <http://www.anarres.net/anatolia/ermenice.html>. «Անատոլիա» եզրը աշխատութեան մէջ գործածում է խիստ պայմանականորեն, ուստի մեծ մասամբ առնած է չակերտների մէջ:

253. http://www.secularislam.org/testimonies/More_Testimonies_Why_I_Left_Islam.htm.

254. Աւագեան Գ., Հայաստանը եւ հայեր աշխարհում, Երեւան, 1990, էջ 21:

255. Դիտակ, Բյորուր, 2002, մարտ-ապրիլ, էջ 26:

ներ են ապրում Հայնեի ու Գեօրէի հայրենիքում, որոնք փորձում են դուրս գալ երկպողմանի «շրջափակումից», թուրքերի եւ հայերի կողմից զայ լիքականացման եւ ինքնորոշման դժւարին վիճակին»²⁵⁶: Այդ հասնելու ինքնածանաշման եւ ինքնորոշման դժւարին վիճակին»²⁵⁷: Այդ հարցազրոյցում ակնարկում է նաեւ. «Թուրքիայի շուրջ 1,5 միլիոն հաշող համշենահայեր»-ին:

Դարերից ի վեր իսլամին յարած լինելով եւ պետականում որպէս «երնիկական փոքրանանութիւն» չճանաչելով հանդերձ համշենահայութեան «անատոլական» հատածը յամաօրեն պահպանում է իր քրիստոնէական բարքերի եւ աւանդութիւնների մի մասը (Ծաղկազար, Վարդավառ եւ այլն): Օրինակ՝ Վարդավառը, որին համշենահայերը անանում են «Վարդիկոր», ամեն տարի մեծ շուրջով ու ծիսակատարութեամբ տօնում է առ այսոր²⁵⁸:

Դայկագրուն Ալբրցեանը «Երկիր» թերթի հետ իր հարցազրոյցում հաստատում է, որ համշենահայերը գտնուելով թուրքական մշակոյրի ազդեցութեան տակ, հիմնականում պահպանել են ազգային ծեսերը, սովորոյթները, երգն ու երաժշտութիւնը, պարերը, կենցաղավարութեան շատ իրայատկութիւնները: «1994 թ. մի տրապիզոնցի համշենահայ շատ իրայատկութիւնները: «1994 թ. մի տրապիզոնցի համշենահայ (մահմեդական), - ասում է Հայկագրուն Ալբրցեանը, - ինձ պատմեց, որ իր տատը, սովորութեան ուժով, հունցած խմորի վրայ միշտ խաչի նշան է հանում»²⁵⁹:

Դետաքրքրական մանրամասութեան ենք համդիպում Յովան Սիմոնեանի ուսումնասիրութիւնում, այն է. եւ արեւելեան համշենահայերը պահպանել են նշան բարքերը եւ աւանդութիւնները, սակայն համշենահայերն ըարբառը պահպանել է միայն արեւելեան համշենահայերի մօտ: Սիմոնեանի համոզմաք սա եղել է երկու խմբերի միջև խօսածութեան արդիւնը²⁵⁹:

Պիտի նշել, որ համշենահայերն իսլամացել են դեռ 17-րդ դարից սկսեալ եւ այդ պատճառով, հաւանաբար, նկատի չեն առնել նախաեղեննեան՝ պատրիարքարանին կապատ վիճակագրութիւններում: Ետեւարար՝ կարելի է ենթադրել, որ յետեղեռնեան հայկական վիճակական պատկերներում էլ չկան նրանք:

Աւելացնենք, որ Թուրքիայի համշենահայերը վերջին տարիներում մեծ աշխատութիւն են ցուցաբերում ազգային-երնիկական գիտակցութեան զարթօնքի բնագաւառում: Այս ինաստով յատկանշական է նրանց ինքնարձարձնան ելոյթներն ու յօդածները մի շարք կայքեջերում եւ էլեկտրոնային ֆորումներում, որոնցից մի քանիսի համացանցային հասցեները կգտնելը ստորեւ²⁶⁰:

256. Լոյլ Մելլում, 2004, ապրիլ-մայիս, էջ 58:

257. <http://www.tb-yayin.gov.tr/tarimkoy/sayı127/m04.htm>

258. Ալիք, Թեհրան, 2004, հոկտեմբերի 14:

259. Simonian H. H., History and Identity among the Hemshin, "ISIM" Newsletter 14, June 2004, pp. 24-25
260. <http://www.yaylayolu.info/forum/>

Այս ենթատեքստում աւելնորդ չենք համարում ակնարկելու նաեւ երիտասարդ ռեժիսոր Օզգան Ալպերի «Momi» (մեծմայր) կարծ կինոժապատճենին, որը էկրանի վրա է գնացել 2000 թ.²⁶¹: Սոյն կինոժապատճենում ճշխ կադրերով նկարահանւել են «Խաչքար լեռան» բարձրունքների վրա գտնող Յանշէնի գեղեցիկ բնութիւնից տեսարաններ, Արդին-Շաւշատի ճանապարհի վրա գտնող «Սուսուզուրտ» գիւղակի գիւղացիների համշենահայ բարբառով երկխոսութիւններ ու երգեր, ընդ որում հայերեն դիպուկ բառերով հնչում են նախադասութիւններ, համրանց եւ այլն:

Յանշէնահայութեան այս ինքնաճանաչման շարժումը գտնելով հանդերձ նախնական փուլում ունի մեծ ներուժ, գերազանցապէս ընթանում է ինքնուրոյն մղումներով ու ենթադրում է զարգացման շշափելի տարօղութիւն:

«Թթացման» քաղաքականութիւնը տարբեր բնոյք է ունեցել սեւծովեան ափերում եւ «Անատոլիայի» այլ բաժիններում: Կրօնական այլասերումն աւելի շեշտած հետքեր է բողել համշենահայութեան, քան «քաքուն» հայութեան: Մինչեւ լեզվական առումով համշենահայերը աւելի նւազ ազդեցութիւններ են կրել միանգամայն քրդախոս կամ բուրքախոս դարձած «քաքուն» հայութեան համեմատութեամբ: Այս տարբերութեան մասին ակնարկում է Օսլոյի համալսարանի արևստի ֆակուլտետի գիտաշխատող Բրենտ Բրենդամօւն իր «The Turkish Dialects of Trabzon, Their Phonology and Historical Development» (Տրավիզօնի բուրքերէն բարբառները, դրանց հնչունաբանութիւնը եւ պատմական հոլովոյքը) աշխատութեան մէջ 2001 թ.²⁶²:

Եշտենք ես մի կարեւոր իրողութիւն «խևանացած» հայութեան բնակութեան վայրի հետ կապւած: Եշտելու համար համշենահայութեան բնօրրանի երնիկական միատարրութեան եւ նրա աշխարհագրական դիրքի նկատմամբ միևնույն է երնկրօնական խճերի, յատկապէս քրդերի, պատկանելութեան յաւակնութիւնները, ուստմասիրութեան նիւթ դարձնելով միջազգային եւ քրդական զանազան աղբիւններ, հաւաքագել ենք քառասունից աւելի ազգաբաշխական, ժողովրդագրական եւ պահանջատիրական քարտեզներ:

Մրանցից նախ, հաստատում է այն, որ համշենահայութեան բնօրրանային տարածքներում քրդերը չնչին թիւ են ներկայացնում, ապա պարզում է, որ քրդական պահանջատիրական նոյնիսկ ամենածայրական հոսանքների պահանջած ամենամաքսիմալ տարածքներն էլ չեն անցնում Պոնտական լեռնաշղթայից դեպի հիւսիս, դեռ այն պայմաններում, երբ սոյն հոսանքներից ոմանք Արեւմտեան Յայաստանից բացի դեռ

<http://hyeforum.com/index.php?showtopic=3459>

<http://www.devrimcidevdemokrasi.org/arsiv/2001/Sayi-13/arastirma2.htm>

<http://karalahana.com/>

<http://f20.parsimony.net/forum36933/>


261. <http://birkanmakar.dostweb.com/contact.html>

262. <http://www.karalahana.com/index.htm>


ախորժակներ են ցուցաբերում ՀՀ հողային աճբողջականութեան նկատմամբ եւ անգամ պահանջում են Պարսից ծոցի ափերը:

Այս իրողութիւնը թեւե ուղղակի առնչութիւն ունի մեր նիւթին, այդուհանդերձ դա իր ծաւալով, առանձին հետազոտութեան նիւթ է: Այստեղ ներկայացնելով ընդամենը մի քանի օրինակներ այդպիսի պատեղներից (Նկ. 11)՝ մեր վերոնշեալ եզրակացութիւնը ընդգծելու եւ դրա աշխարհաբաղարական նշանակութիւնը վեր հանելու համար:

ա- քրդերի ազգաբաշխական քարտեզներ



բ- Քրդական հողային պահանջատիրութեան քարտեզներ



Նկար 11

«Խևանացած» հայութեան մասին քրդական աղբիւններն անգամ երեմն թոյլ են տալիս հաստատումների: Օրինակ՝ դրանցից մէկը թուրք պատմաբան Թաներ Աքչամի հայանպատ կեցւածքը «քնական» ծեւացնելու համար այսպէս է ներկայացնում նրա կենսագրականը. «Թաներ Աքչամը ծնւել է Կարսում: Մարզ ուր պատկառելի թւով

«քուրօքած» հայ Ռնտամիջներ են ապրում եւ զաւակն է ծախսկողմեան գրող՝ Պորտու Աբչամի... (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»²⁶³ եւ այլն:

ԵԳ- «Թաքուն» հայութիւն. Արեւմտեան Յայաստանը ներկայիս ոչ միայն իր «իշլամացած», այլ նաև իր «թաքուն» ու թերեւս «պաշտօնական» հայ երմկական տիպերով շարունակում է ննալ խորհրդաւոր եւ գրեթ անձանաչելի: Թուրքիայի վերաբերեալ միջազգային առեւտրականութեան մասնագիտական-ուսանողական մի գեկուցագրում նորվեգացի փորձագետները հետաքրքրական տեղեկութիւններ են փոխանցում, ընդ որում. «Ստամբուլում եւ Վանայ յժ շրջակայթում ապրում են 70,000 հայեր (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»²⁶⁴:

Գերմանիա հաստատւած եւ բուն անունն ու կրօնը վերականգնած Մինոն Կոստանեանը (Նախկինում Սարդես Կոստում), որ ծնւել եւ ապրել է Տարօնի Կարմիր Խաչ գիւղում, ասում է, որ «դեռ մեր ազգականներն ապրում են Արեւմտեան Յայաստանում եւ ենթակա են մնում չարչարանքների»²⁶⁵:

Պրօֆ. Գեղամ Կիրակոսեանն իր Արեւմտեան Յայաստանի ուղեւորութեան յուշերում ասում է. «Այդ ամբողջ օրը մեզ հետ էր նաւազար Ռաջապը: Ես փորձեցի քրեթեն իմացած իմ մի քանի բառով «զրուցել» նրա հետ ու հասկանալ, թէ ինչու է նա մեր նկատմամբ այդքան ջերմ: Նա բռնեց իմ թեւը, ինձ տարա կղզու հարաւային կողմ մի բարձր տեղ եւ ցոյց տւեց լճի հարաւային ափին՝ հեռում երեւացող իրենց գիւղը Ծքուերոյք՝ պատմական Մոխրաբերդը եւ ալեկոնած հոգով ասաց, որ ինը հայ է եւ իրենց գիւղի բոլոր բնակիչները քրդախոս հայեր են»²⁶⁶:

Սոյն նաւազարի մասին վկայում է նաև Սեսրոպ արք. Աշճեանը. «...Յանկարծ աչքիս է զարնում Ոենեպը: Նոր են ծանօթացել: Սեր նաւազարն է, հայ է, հայ են իր հայրը, մայրը, մեծ հայրը: Նա փափագում է Յայաստան գալ եւ մի հայ առջիկ առնել: Աստւած տայ. քանի քանի Ոենեպներ կամ, Աստւած բոլորի մուրազը տայ, բոլորն էլ լսեն իրենց արեան կամչը»²⁶⁷:

Գեղամ Կիրակոսեանն իր յուշերում պատմում է Սուշի հիւրանոցի մուտքի մօտ իր հետ ծանրացած, ծագումով Սասունի Սեմալ գիւղից, այժմ Մուշում ապրող Արմեն անունով մի երիտասարդի մասին. «Հիւրանոցի առաջին յարկի սրահում ինձ ընդառաջ եկաւ կարճահասակ

263.<http://www.tallarmeniantale.com/TURKISH-SCHOLARS.htm>

264.Reve T., Hauge E. H., Gjaerum P. I., "Finding Market Opportunities in Turkey", International Business, 2003, p. 20.

265."Thousands Of Turkified Armenians Revert To Their Roots", PanArmenian News, Jan 19 2005

www.panarmenian.net/news/eng/?task=society&id=11935&date=2005-01-19

266.Կիրակոսեան Գ., Յոդի ու Արեան Կանչով, Տասն օր Արեւմտեան Յայաստանում, Երեւան, 2001, էջ 32:

267.Վարագ, Լու Անջելոս, 2001, խը (48) տարի, էջ:

ու թիկնեղ մի երիտասարդ, ծանօթացանք, ողջագուրեցինք, ապա սկսեց անմիջական եւ աշխոյժ գրոյց. նա լաւ էր հօսում հայերեն... : Անմիջական ճանապարհ ընկանք, մեզ ընկերակցում էր Արմեն: Մուշից Արեւմուտք Յայկական Տաւրոսի ստորոտին կան եօթ գիւղեր, որոնց ընակիչները քրդախոս հայեր են: Այդ եօթ գիւղերի թուում է նաեւ Արմեննեց գիւղը Գաւառը (ընդգծումը մերն է- Կ.Խ.):»²⁶⁸:

Սոյն անձնաւորութիւնը՝ Արմեն Մարտիրոսեանն իր տւած հարցազրոյցում, որոշակիացնելով եւ ընդհանուր գծերով բնութագրելով Մշոյ ներկա հայութեան վիճակը, ասում է. «Մշոյ մէջ այսօր 1000 հայեր են ապրում, որոնք ոչ ամուսնական եւ ոչ էլ այլ կապերով չեն շփում քրդերի եւ բուրքերի հետ»²⁶⁹:

Պատմական Կիլիկիայի Աղանայում ծնւած, ներկայում շեղարնակ Յայկ Արամեանը (Նախկինում՝ Սովէյման Ֆարուկ) AGBU-ի էլեկտոնային լրատուի մէջ իր ասուլիսում 2005 թ. մարտի 2-ին պատմում է մեծ մօր յիշեցումների եւ իր արմատներին վերադառնալու որոշման մասին եւ աւելացնում, որ «անհաշչի հազարներով ուրիշներ եւս կորեւ եւ դարձել են քուրոյ: Ես էլ անշուշտ կարող էի քուրոյ մնալ, քայլ այլ որոշում ընդունեցի (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»²⁷⁰:

Նոյն ասուլիսում Յարաւա-արեւմտեան Յայաստանի Սարդինի շրջանում ծնւած 46 -ամեա Վրէժ Քենսեանը եւս պարզում է իր «թաքուն» կեանքի հետաքրքիր ծալքերը: «Ծնւել են Սարդինի մօտակայքում, ասում է Վրէժ Քենսեանը,- իիմնականում ասորիներից բաղկացած գիւղում: Սենք գիտինք, որ հայ ենք, տակայն ցաւոք մեզ որպէս այդպիսին չեր ընդունում Պոլսի հայկական համայնքը»²⁷¹:

Այստեղ նկատելի է, որ ազգային պատկանելութեան հարցում եր անհատի սեփական գիտակցութիւնն ու զգացողութիւնները հիմնական նշանակութիւն ունեն, ապա բազմաթիւ այլ ազդակներ, այդ թուու նաեւ անմիջական միջավայրի հայաքական կեանքում տիրող ենթակայական գործունները լրացուցիչ դերում են հանդէս զալիս եւ երբեմն էլ խանգարում, դանդաղեցնում են ազգակիր արմատներին վերադառնալու բնական գործընթացը:

Քրդական հարցը, որ 1984 թականից Արդուլիսա Օջալանի ղեկավարութեամբ գինեալ պայքարի նոր փուլ էր մտել, թուրք քաղաքական վերնախաւին կրկին յանգեցրեց հարցի թիրու աւանդական հանգուցալութեանը:

Քենան Էրենի գինուրական իշխանութիւնների ժամանակաւանից սկսած եւ յատկապէս 90-ականների ընթացքում թուրքական քանակը աւերել կամ այրել է բազմաթիւ գիւղեր եւ գիւղակներ թուրքայի

268.Կիրակոսեան Գ., Յոդի ու Արեան Կանչով, Տասն օր Արեւմտեան Յայաստանում, Երեւան, 2001, էջ 48:

269.Դիտակ, Բյորուք, 2004, ապրիլ-մայիս, թիւ 24, էջ 60:

270.http://www.agbu.org/agbunews/display.asp?A_ID=47.

271.Նոյն տեղում:

արեւելեան գաւառներում եւ տեղահանել շուրջ երեք միլիոնի հասնող բնակչութիւն:

Այս իմաստով մարդկային իրաւունքներին առնչող բազմաբնոյք զեկուցագրերից մէկում մատնանշւած են մանրամասութիւններ այդ բռնութիւնների մասին: Պարզում է, որ 1984 թ.-ից ի վեր, երբ կառավարական ուժերը թուրքիայի հարաւ-արեւելեան շրջաններում սկսեցին կուել քուր անջևառողականների դժմ, նազագոյնը 19.000 մարդ են գոհիել այդ բախտմների ընթացքում: Նոյն ժամանակահատածում քրդարնակ տասնեակ քաղաքների եւ 2000-ից 3000 գիտերի մեծ մասը գտնուում էին Թուրքիայի տաս նահանգներում, ուր 1987 թ. սկսեալ հաստատել էր արտակարգ դրութիւն: Այդ նահանգներն էին՝ Թիւնջելի (Դերսիմ), Բինգես, Դիարբեքիր (Տիգրանակերտ), Մարդին, Բարձան, Քիթլիս (Բաղեց), Սիլիս (Մելքոն), Շիրնար, Կան եւ Ջաքեսարի:

Բնաջնջման նախօրեակին մօս 5000 գիտ գտնուում էր արտակարգ դրութեան մէջ: Թրքական պաշտօնական ադրբիւններում նշուում է, որ 1984-1987 թթ. երեք տարիների ընթացքում 2400 գիտ եւ 1500 գիտակ ամբողջութեամբ կամ մասնակիորեն դատարկել է բնակչութիւնից: 2-3 միլիոն բնակիչներ տեղահանել են: 1995 թ. ապրիլի 27-ին թուրքական բանակի ուժերն այրել են Բարձան շրջանի Սասունի գիտերը Ենրառեալ Սեքսիքան (Աղյուսիք), Փիրմիսը (Ենի Չաքմար) եւ Յելիզար (Քափիլ): Բնակիչները նախապէս բռնի տեղահանել են իրենց տներից²⁷²:

Այս զանգվածային բռնութիւններից չէր կարող անմասն մնալ հայութիւնը: Սեզ դեռ յայտնի չէ հայկական գիտերի կրած մարդկային եւ հիւրական վնասների ճշգրիտ չափը: Սարդկային իրաւունքների պաշտպան մի կայքեցում, հիմք ունենալով Թուրքիայի մարդկային իրաւունքների հաստատութեան կողմից հաստատած մի փաստաթուղթ, ասւում է, որ «թու 729 գիտեր (թէ քրդական եւ թէ քրիստոնէական) դատարկել են անվտանգութեան ուժերի միջոցով (ընդգումը մերճ է- Կ.Խ.)»²⁷³:

«Kurdistan Liberation» (Քրդստանի ազատագրութիւն) անունով քրդական մի կայքեցում Արեւելեան Թուրքիայի այրած գիտերի ցանկում, Սասունի գիտերի զլիս տակ, հանդիպում ենք Ազար գիտի անւան, որի հայ բնակչութեան բռնի իսլամացման մասին արդէն ակնարկել էնքն նախկին բաժնում: Ըստ կայքեցում նշած փաստի, որը մեջքերեւ է Սերդար Զելիկի գրչին պատկանող «Killing Machine: Turkish Contra-Guerilla» (Թուրքական հակա-արծակագնը՝ սպանութեան գործիք) աշխատութիւնից, Ազար գիտը Թուրքիայի բանակի միջոցով այրման է ենթարկել 1995 թ.²⁷⁴:

ԱՄ «Ազատատանածների համար կոմիտե»-ի միջոցով հրապարակած պարբերական մի զեկուցագրում մի ազատատանած անձ, Ակա-

272. Forced Evictions: Violations of Human Rights, Global Survey on Forced Evictions, No. 7. COHRE, September 1998, www.cohre.org.pp. 65-69.

273. <http://www.jubileecampaign.co.uk/world/tur2.htm>

274. <http://www.dozame.org/villages/burnedvillages.htm>

88

րազրելով իր փախուստը, ի միջիայլոց ասում է. «Ես Սիիրու տարածաշրջանի xxx գիտից եմ: Մայրս հաշմանդամ եր եւ ի վիճակի չեր քայլել: Փախել եմ 1994 թին: Բանակը եկաւ 1992 թին: Մենք կատարեցինք այն բոլոր պարտականութիւնները, որ պահանջել էին բանակայինները. փայտ տրամադրեցինք, հաց տեսցինք նրանց: 1994 թ. նրանք ստիպեցին մեզ միանալու գիտի գորամասին: Մեր գիտի աւելի քան 80 տուն բնակչութիւնից միայն մէկ անձնաւորութիւն միացաւ դորամասին: Զինուրները եկան մեր տուն: Նրանք կոտրեցին մեր մուտքի դուռը: Զինուրները անբաստանում էին ինձ ՊKK-ին օժանդակելու հարցով եւ ասում էին, որ ես հայ եմ: Իհարկէ, մայրս քրիստոնեայ է: Եթէ ես միացած լինի զօրամասին, այժմ հանգիստ կեանք կունենայի: Ին նախնիներին պարտադրեցին հայկական քրիստոնութիւնից կրօնափոխելու հսկամի: Եսկ ներկայիս թերեւս ամեն ինչ լաւ կը լիներ, եթէ քուրի փոխարեն դառնայի թուրը: Նախընտրեցի փախչել xxx-ից: Տան բանակին յանձնեցի մի քրիստոնեայ տիկնոց: Բայց մեկնումից յետոյ գիտի գորամասը քալանել էր տունս եւ վերցրել քանկարժեք իրեղենը: Խնորել գորամասը քալանելու ոնկերներիկս, որ նորից փակեն տունս (ընդգումները մերն են, ապաստանածի ինքնութիւնը եւ պատկան գիտի անունը շեն նախնաջիւել բնագրում թերեւս անվտանգութեան նկատառումներով Կ.Խ.)»²⁷⁵:

«Օժանդակութիւն ապաստարանին» խորագրով մի այլ զեկուցագրում ոմն հողագործ հւսուփը, պատմելով անվտանգութեան ուժերի կողմից 1993 թ. Մանազկերտի Կուլայի գիտում իր եւ իր ընտանիքի նկատմամբ կատարած դաժանութիւնների մասին, նշում է, թէ ինչպէս իրենց գիտը երեք անգամ այրելուց յետոյ, դրա մուտքի մօտ փակցրել են իրենց գիտը երեք անգամ այրելուց յետոյ, դրա մուտքը արգիլում է» բովանդակութեամբ մի «Սա հայկական գիտ է, մուտքը արգիլում է» բովանդակութեամբ մի «Սէկ ամիս շարունակ,- ասում է հւսուփը, նրանք տանցեցին յայտագիր: «Սէկ ամիս շարունակ,- ասում է հւսուփը, նրանք տանցեցին մերկացրին...»²⁷⁶: Նա նեզ: Տղանարդկանց, կանաց եւ երեխաներին մերկացրին...»²⁷⁷: Նա նախնաջում է թրքարարոյ այլ բռնութիւնների մասին:

Ենթադրելի է, որ նախնաջնակ բազմաթի պարագաներ կան ինչպէս Արեւելեան Հայաստանում, այնպէս էլ պատմական Կիլիկիայում և յարակից շրջաններում: Նոյնպէս արտասահմանում հաստատած եւ բուն յարակից շրջաններում: Նոյնպէս արտասահմանում հաստատած եւ բուն յարեղին Եակուա, որ ծնւել եւ ապրել է Կիլիկիայում եւ որոշել է Եկրանաւորել փաստագրական կինո «Քաքուն» հայութեան մասին: Եկրանաւորել փաստագրական կինո «Քաքուն» հայութեան մասին: «Ծնողներս թաքցնում էին իրենց ծագումը, - ասում է աղեամանցի Ռազմիկ «Ծնողներս թաքցնում էին իրենց ծագումը, - ասում է աղեամանցի Ռազմիկ «Ծնողներն իանցանք աններելի յանցանք է համարւում»²⁷⁷: Յակոբեանց, որովհետեւ հայ լինելը աններելի յանցանք է համարւում»²⁷⁸:

275.The Wall Of Denial: Internal displacement in Turkey , U.S. Committee for Refugees, November 1999, pp. 14-15,

276.Asylum Seekers From Turkey:The Dangers They Flee, A Report To Asylum Aid, (Report of a mission to Turkey), 4-17 October 2000, p. 59

277.Thousands Of Turkified Armenians Revert To Their Roots, PanArmenian News, Jan 19 2005

«Թաքուն» հայութեան իրավիճակին առնչող բազմարնոյք վկայութիւններ գոյութիւն ունեն այսօր, սակայն նրանց ընդիանուր թւաքանակի բնորոշման համար թիւ տւեալներ կան մեր տրամադրութեան տակ:

Թեսսա Հոփմանը, վկայակոչելով մի շարք էթնոլօգների, «crypto-armenians» կամ «քաքուն» հայերի թւաքանակը գնահատում է 30-ից 40 հազար, որոնք արդեն «համակերպել են թուրք կամ քուրդ մեծամասնութեան հետ»²⁷⁸: Մեր համոզմամբ՝ այս թւաքանակը խիստ պակասեցած է:

Միևնու կողմից գերազահատւած մի թւաքանակի մասին ակնարկներ է գնում «Քրդստանի աքսորեալ խորհրդարանի» փաստաթղթերում, ընդ որում այսպէս կոչւած «Մեծ Քրդստան» սահմաններում ապրող ասորի եւ հայ բնակչութեան թւաքանակի գումարը գնահատում է ամբողջական բնակչութեան շուրջ 10 %-ը²⁷⁹:

Քրդերի մարդկային իրաւունքների մասին «The EU, Turkey and the Kurds» անունով գեկուցագրում (2004 թ.) Թուրքիայի բուրդ փորբանասնութեան թւաքանակը ներկայացնում է 15-20 միլիոն²⁸⁰: Իսկ Վերջերս Թուրքիայի Եւրոմիութեան անդամակցութեան հարցին կապող տեղեկագիրը (2005 թ.) Թուրքիայի քուրերի հարցին ակնարկելով նրանց թւաքանակը ներկայացնում է 10-ից 15 միլիոն²⁸¹: Եթէ 15 միլիոնը հիմք դարձնենք, ապա ասորի եւ հայ բնակչութեան թւաքանակն ըստ «Քրդստանի աքսորեալ խորհրդարանի» նշանակած հիմնաւորման պիտի գնահատել շուրջ 1.5 միլիոն:

Քրդական «Ozgur politik» էլեկտրոնային թերթի 1997 թ. դեկտեմբերի համարում թեմնել Ղեմիրեր անունով յօդածագիրը եւս ակնարկում է նման մի թւաքանակի՝ ասելով որ «քրդական տարածքներում» սուրիանական եւ հայկական ծագումով 2 միլիոն «քրդեր» կան եւ այլ²⁸²:

Այս լոյսի տակ «Քրդստանի աքսորեալ խորհրդարան»-ի գործադիր խորհրդի խօսնակ Չուրերի Այդարի ստորագրութեամբ յայտարարութեան մէջ (իրապարակած 23 ապրիլ, 1995) ակնարկ կա եւ Յայոց ցեղասպանութեան եւ այն մասին, որ այսօր «Քրդերի հետ միասին, այսուեղան Քրդստանում, ապրում են հայեր եւ ասորիներ...»²⁸³:

«Քրդստանի աքսորեալ խորհրդարան»-ի կողմից այս ուղղութեամբ հրատարակել է մի քարտեզ 1995 թ., որ տեղացի էթնիկական

խմբերի կողքին, ցուցադրութեամբ են նաեւ հայութեամբ բնակեցւած վայրերը եւ նշանակած անունները: Այս մասին վկայում է ասորի պատմաբան Յակոբ Յիդրիսահը: Վերջինս քննադատում է «Քրդստանի աքսորեալ խորհրդարան»-ի պաշտօնաթերթը «Bulletin of Preparatory Commission for the Kurdistan Parliament in Exile»-ի պատմական նենգափոխումների՝ «Քրդստանի ժողովուրդ», «Քրդստանաբան», «քրդապատկան» եւ «Նախորդինակ այլ բառակապակցութիւնների համար»²⁸⁴:

Սորի եւ հայ բնակչութեան համար 1-ից 1.5 միլիոն թւաքանակը թեւ փաստարկելի եւ ստուգելի չէ, սակայն լուրջ նկատառման է արժանի, մանաւանդ երբ հաշվի ենք առնում ասորիների ներկայիս թւաքանակը եւ պակսեցնում դրանից: Ժիրայր Պետքերեանը, ըստ ժողեֆ Եակոսի հեղինակած «Թուրքիայի տարագիր ասորինները» աշխատութեան տևալների յայտնում է, որ «առաջին աշխարհամարտի նախօրեակին Թուրքիայի ասորինների թիւը հասնում էր 250 հազարի: 1986 թ. այնտեղ մնացել են միայն 4500 ասորիններ»²⁸⁵: Ստացում է, որ քրդախառն շրջանների «քաքուն» հայութիւնը պիտի գնահատել առնաւզն միլիոնից շրջանների «քաքուն» հայութիւնը պիտի գնահատել առնաւզն միլիոնից շրջանների: Այս մասին վերջնական եղակացութեան ենք հանգելու վերջաբանում:

Այլ քուրդ դեկավարներ եւս վկայում են «քաքուն» հայերի մասին: «...Այն գիւղը, որ գնացի, մօս մեկ ժամ կամ աւելի հեռու եր մեր գիւղից եւ հայկական շատ հիմ գիւղերից էր (ակնարկը Զքին գիւղի նախն է- Կ. Խ.): Դէնց այդ տեղից... պարզում էր հայերի հրաւունքների ունահարումն ու նրանց նկատմամբ խստութիւնը, որովհետեւ այդ գիւղի եկեղեցին վերանայել էին մզկիթի, այն պայմաններում, երբ դեռ հայ եղայրները ապրում էին այդտեղ: Դայրս հետաքրքիր եւ ընկերական կապեր ունեն հայ եղայրների հետ եւ նրանցից շատերի հետ խոր ընկերութիւն եր հաստատել...: Այդ խմնիրը արծարծում են, որովհետեւ քուրք ֆաշիստները սնապարծութեամբ ու պոռտախօսութեամբ ասում են, որ այլեւս հայ չկայ...»: Ահա այսպէս է արատայայտում Արդուլլահ Օջալանը քուրք լրագրող դոկտ. Եալշին Քիչիչիքի վարած մի մանլոյ ասուլիսի ընթացքում 1990-ականներին²⁸⁶:

Ուրֆայի շղակայրում գտնուղ Զքին կամ Սայյակկայա գիւղն այցելել է Մեսրոպ աղը. Մութաքեանը 2000 թ. յուլիսի 4-ին: Այդ կապակցութեամբ աւելորդ չենք համարում մէջքերել հետեւեալ հուզական տողերը. «Նուրին կամ Մուշեղը Պատրիարքին հրակիրեց իր տունը: Նա կոյր է եղել 4 տարեկանից, եւ հայերնը խօսում է մարուր պուսական ոճով: Նա ասեց, որ վերջին 75 տարիններում սա առաջին անգամն է, որ

278. Hofmann Tessa, "ARMENIANS IN TURKEY TODAY", Oct. 2002, pp. 11-12.

279. <http://www.kurdish.com/media/article/kwr-article-15.htm>

280. <http://www.khrp.org/news/pr2004/26-11-04.htm>

281. Նոր Սարմարա, Ստամբուլ, 2005, փետրարի 15:

282. www.ozgurpolitika.org/1997/aralik/1226kyb.htm

283. <http://www.etext.org/Politics/Arm.The.Spirit/Kurdistan/Kurdistan.Parliament.in.Exile/armenian-genocide.txt>

284. Hidrisah Yakup, "Massacre of Christians (Syriacs, Nestorians, Chaldeans, Armenians) in Mesopotamia and Kurds", A Documentary Study, Honnover, 1997:

285. Դրամակ, Արենք, 1987, փետրարի 18, էջ 38:

286. Եալշին Քիչիչիքի, Վերապրումի պատմատք. Արդուլլահ Օջալանի յուշերն ու մտորումները (պարսկերէն), Թեհրան, 1999, էջ 48 և 49:

իայ Պատրիարքը ուտք է դնում Ձքին: ... Ծերունին գեղեցիկ ձայն ուներ և հիանալի տոնով երգեց Ս. Ներսէսի շարականներից մէկը...»²⁸⁷:

Զինի բուրքերն կայքէջի հեղինակները (<http://www.cibin.de>), մատնանշելով նրա հայկական լինելու հանգմանը, առանձին տեղ են յատկացրել գիւղի ներկայիս հայ բնակիչներին եւ լուսանկարներով ներկայացրել նրանց. Սարենիկ, Սարիհամ, Ծաղիկ, Ղուկաս եւ Մելին անունների կողքին հանդիպում ենք նաև Խոսուֆ, Զինէ, Խարուն, Ֆարմա եւ այլ ոչ-հայկական անուններով հայ բնակիչների եւ դրանց միջեւ ազգակցական կապերի մասին հետաքրքրական տեղեկութիւնների: Այստեղ կան նաև խնդուրային պահերից նևառահամումներ եւ այս²⁸⁸.

«Թմրուն» հայութեան գոյութեան ակնյայտ իրողութիւնը հաստատում են Արեւմտեան Հայաստան ճանապարհորդած հերթական ճամբորդներն անզամ. «Եզինի (Ակն, Քեմալիկ-Կ.Խ.) այսօր անցած հայերը նրանք են, ովքեր գոյատեւել են թրանալու միջոցով»²⁸⁹.

Բեմայ Եալչինը գերմանական թղթակցի հետ մի հարցազրոյշ ընթացքում դիպուկ բնուրագրում է ներօրեայ «քաքուն» հային. «...Այդպիսի ընտանիքներն ապրում են որպես քուրդ կամ թուրք մոլուզմաններ եւ նրանց երեխաներն իրենց ծայրենի լեզուն չեն սերտում: Իմ տեսած քաքուն հայերից շատերը 15-17 տարեկաններ են, որոնց ծնողները նրանց գառւշապես են իշխուել այս ճամակին»²⁹⁰.

«Մաքուն լինելու»՝ «Խնամքով բարցնելու» մտակեցւածն ինք-նին բարդ եւ անընթռնելի կենսափիլխոփարիւն է. թէ ինչպէս կարելի է ամբողջ կեանքի տետրութեամբ, ծածկելով, կեղծելով ամօրի ու վախի զգացումներից տառապելով եւ հոգեմտառը ծերքին հակասութիւնների բռնելով, ի վերջոյ պահպանել ինքնութիւնը եւ կառուցել եթիկական պատկանելութեան ներաշխարհ..., եւ եական այն է, որ այդ փոխանցել ևտնորոններին»:

«*Θεωρούν*» ήταν ιερέαν διάπολης που αποτελούσε την πρώτη μεγάλη επίδραση στην Ελληνική λογοτεχνία. Το έργο του θεωρείται ένα από τα καλύτερα έργα της αρχαίας ελληνικής λογοτεχνίας. Η ιεραρχία της Ελληνικής λογοτεχνίας ήταν η πρώτη που αποτελούσε την πρώτη μεγάλη επίδραση στην Ελληνική λογοτεχνία. Το έργο του θεωρείται ένα από τα καλύτερα έργα της αρχαίας ελληνικής λογοτεχνίας.

անհետացաւ: Ակսեղի ինքու ինձ ընդունելի ինչպէս որ եմ: Միայն այդ ժամանակ կարողացաւ հանգիստ ընել...»²⁹⁷

«Թարուն» հայութեան հետքեր գտնելու գործուն իւրայատուկ զգայնութիւն եւ հայացք կարելի է նկատել, թերեւս միատեղ ապրող, «պաշտօնական» հայութեան մօս: Դետաքրքրական այն է, որ «պաշտօնական» հայերը յաճախ ի վիճակի են լինում իրենց շրջապատի «Թարուն» հայութեանը յայտնաբերել ամենայն նրանկատութեամբ: Օրինակ՝ Կիլիկիայի հայութեան Ներկայացուցական դեմքերից Լեւոն Երասլանը, որ 1998 թ. պատրիարքական ընտրութիւնուն պատգամաւորն էր Վագրֆ Գիլիի²⁹², տողերիս հեղինակին 2005 թ. յունարի 8-ի իր անձնական էլեկտրոնային նամակում, բնորոշելով Աղանայի «Թարուն» հայութեան նշաններն, ասում է. «Թուրքիայի ոչ մի տեղուն Աստծոյ կամ որեւէ սուրբ գրի անունով չեն երդում, բայց Աղանայուն նրանք դա անուն են: Նրանք լայնապատճեն կամ անունով չեն երդում»:

«Նաւասարդ» ամսագիր խնբագրապետ Արմեն Տօնոյեանին ուղած երկու նամակներում Ուրֆայից մի «քաքում» հայութու հոլովական տողերով բնորոշում էր իր «քաքում» Ենրաշխարից: Իր վախճանած մօր համար հայկական յուղարկաւորութիւն կաղզադրելու մասին պատմելով, պիտական պաշտօն գրադեցրած «քրօուիին» այսպէս էր աւարտել իր առաջին նամակը. «որոնում եմ եւրիշնս, ինքնութիւնս, եւ երէ գտնեմ, մօրս աստածը վկա, լրելու եմ պաշտօնս... Թուրք ծնւած լինելուս որնարարած ապօտաւորութեան վրէժը լրւծելու եմ»²⁹³:

Իսկ «քարեն» հայութեան քաղաքական տիպարի եւ ուղղաւծութեան մասին լիարժեք գաղափար կազմնելու համար շահեկան կարող է լինել ակնարկներ նաև այն բնոյթի փաստերին, որոնք վկայում են քրոջական կազմակերպութիւնների շարքերում ծագումով հայ անդամների նաև մի:

Սակայն մինչ այդ, հարկաւոր ենք գտնում այստեղ անդրադառնալ մեր աշխատութեան առարկա տարածաշրջաններում իշլամիստական հոսանքների ազդեցութեան բարձրացնան հարցին: Ինչքան որ բնական է համարում «քաքուն» հայութեան հակումը քրոնական հոսանքների նկատմամբ, այդ թում նաև «Ժողովրդային ժողովրդավարութիւն կուսակցութիւնը» (DeHaP) (տես Նկ. 2), այնքան տարօրինակ է թում իշլամիստական հոսանքների նկատմամբ նրա հաճակրանքը: Թեև բոլորովին պարզ չէ մեզ «քաքուն» հայութեան ակտի- տուրիւնն ու դերակատարութիւնն ընտրութիւններում, այնուամենայնիւ, եթ տեսալ պատկերները հաճարենք «նորմալ» (այսինքն նոյն խտութեան գործակցով ցրած բնակչութեան վրա), ապա անխուսափելիորեն քննարկելի է դառնում այն վարկածը, որ DeP-ի եւ DeHaP-ի բացակա-

287.oons-request@uk-christian.net, 2000, injuhuh 12:

288, <http://www.cibin.de>

289.[http://gokdemir.com/Borderlands From Hasankeyf to Mardin to Harput and Beyond.htm](http://gokdemir.com/Borderlands%20From%20Hasankeyf%20to%20Mardin%20to%20Harput%20and%20Beyond.htm), 2009, ssaywrit-2;

Beyond.htm, 2000, օգոստոսի 3:
290 Kemal Yalcin, "Armenians In Turkey: The silent history," www.kemalyalcin.com/ArmeniansInTurkey.htm

290. Kemal Falcin, Armenians In Turkey: The silence brok
22.1.2002, http://www.nadir.org/nadir/initiativ/kurdi-almani-kassel/aktuuell/2002/jan2002/armenier_t.htm

291. მხედვა ლავაზინ, ჟიგუს ქადაგის კი საუკუნე, მარგარიტა და გარებრივი მონასტრი. თემატიკური სიმპოზიუმი, 2003, ს. 362-363:

292 ԺԱՂԱԿԱՆԱԿ. ՍՄԵՐՈՎԻ, 1998, ԽԿՄԲԵՐԻ 15

293. Առաջարկվությունը պահպանության մեջ մտնելու մասին, 1995, ՀՀ կառավարությունը՝ ՀՀ Անդամության մասին, 1995, յունիս-յուլիս, թիվ 167-168, էջ 7:

93

